5. Մորթը աստիճան աս աստիճան կարծրացնելու է. ահա այս է կերպ սկսէ մայիսին 8 օր երես, ձեռքեր, վիզ եւ ուսեր լուալ պաղ ջրով. յետոյ կունակն ալ. իրր մէկ շաբաթ ետքը եւ, երբ օղը նպաստաւոր է



ՏՕՔՐ. ՍԱՅՐԸՍ ՀԱՄԼԻՆ  
Ծնած 1812 — Մեռած 1878

բոլոր մարմինը պաղ ջրով սպունգէ ,  
շաքաթ մը ետքը կրնաս գլխէդ վար  
պաղ ջուր թափել . աճա այս կերպով  
մարմինը կը վարժուի պաղ լոգանքի-  
օդը երբ տաքնայ կրնաս ծով մանկի :

6. Ճերմակեղէններդ յաճախ փոխէ ,  
մանաւանդ բրդեղէն ներքին հան-  
դերձներդ . ասոնք քրտինքը կը  
ծծեն :

7. Ծովու լոգանքը լաւ է ամրան  
վերջերը սկսիլ :

8. Ծով չմտած սպասէ որ մար-  
մինդ պաղի :

9. Կերակուրէն 3-4 ժամ ետեւ  
ծով մտիր , լոգանքէն ետեւ լաւ մը  
ման եկուր . ծովի լոգանք նպաստա-  
ւոր է բոլոր մարմնոյ . մորթին ջեր-  
մութիւն կ'աւելնայ , գոյնը կայտառ  
կ'ըլլայ . ախորժակը կը կանոնաւորուի :

10. Միայն 10-15 րոպէ պէտք է  
մնալ ջուրին մէջ . յետոյ հաստ ան-  
ձեռոցով չփէ մարմինդ եւ հագուէ :

11. Եթէ չես կրնար ծով մտնել ,  
տանդ մէջ տուչ րրէ :

12. Տանը մէջ լոգանք րրած

ատենդ ձմեռը ջուրին ջերմութիւնը  
27<sup>0</sup> Բէօմիւրէն աւելի չըլլայ . տեւո-  
ղութիւն 10-15 րոպէ . յետոյ պաղ  
ջուր թափէ վրայ , ասիկայ կացգիւէ  
պաղառութիւն :

13. Օրէնք րրէ ամէն լոգանքէ  
ետեւ հաստ անձեռոցով լաւ մը  
չփուիլ :

14. Օրը մի քանի անգամ երեսդ  
պաղ ջրով լուա , աչքերդ կայտառ  
կ'ըլլան ասով եւ միտքդ սուր կ'ըլլայ :

15. Լաւ օճառ գործածէ . օճառը  
կը մաքրէ քրտինքին եւ ճարպին հետ  
խառնուած փոշին ու աղտը . եւ կը բա-  
նայ ծակոտիքները :

16. Մանուկները գաղջ ջրով լուալ  
օգտակար է . մանաւանդ մարմնոյ  
այն մասերը , ուր ազտեղութիւն կը  
հաւաքուի , յօղուածներուն խոռոչ-  
ները , ծայքերը , նստարանը եւ ծնըն-  
գական գործարանները , նաեւ գլուխը :

17. Երբ տղայք մեծնան պէտք է  
անոնց դուխր , վիզը եւ թեւերը  
ամէն օր պաղ ջրով լուալ , ասով  
օ դին փոփոխութեանց կը զիմադրեն :

18. Լոգանքի ատեն պէտք է շար-  
ժում ընել : ասով ջիղերը շատ կը  
զօրանան :

Ա Պ Ա Ռ Ո Ղ Ջ Է

1. Յոգնած եւ զրգուած եւ լե-  
ցուն ստամոքսով կամ ընդհակա-  
ռակն լոգանք ընել . հետեւութիւնը  
մահացու, կաթուած իսկ, կրնայ լլլալ :

2. Երկայն ժամանակ լոգանք ընե-  
լը . նա որ 15 րոպէն աւելի ջուրին  
մէջ կը մնայ, արիւնը գլուխը կը  
խուժեցնէ :

3. Երկայն ճանապարհորդութենէ  
վերադարձին . առաջին օրը լոգանք  
ընելը . մանաւանդ երբ պաղ եւ հո-  
սող ջուրի մէջ ըլլայ :

4. Լոգանքէն ետեւ հարեւանցի  
կերպով չորցուիլ . պէտք է ուժով  
չփուիլ հաստ խալիչոյով մը :

5. Լոգանքէն անմիջապէս ետքը  
գործով զրազիլ . մարմինը պէտք է  
իր լնական ջերմութիւն գտնայ որ  
կորուսած էր լոգանքով, եւ ապա  
պէտք է գործել :

6. Լոգանքէն ետեւ բացօթեայ  
տեղ նստիլ, կամ օդի հոսանքի մէջ  
կինալ եւ կամ բաց կառքով երթալ .  
ասոնք ցրտառութեան պատճառ-  
ներ են :

7. Ամէն օր քանի մը անգամ օճա-  
ռով լուացուիլը — մնաստկար է —  
մորթը կը կորանցնէ իր փափկութիւն,  
չոր եւ կարծր կ'ըլլայ, սրովհետեւ  
օճառը լնական ճարպը կը փճացնէ :

8. Տաք լոգանք . 28<sup>0</sup> Բէօմիւրէն ա-  
ւելի ջերմութեամբ, մնաստկար է .  
դէպի ուղեղ կը խուժէ արիւնը :

9. Բէօմիւր 14 աստիճանէ նուազ  
պազ ջրով լոգանքը . նաեւ չափէն  
աւելի ջուրին մէջ մնալը մնաստ-  
կար է . գողայ չսկսած պէտք է ել-  
լիլ ջուրէն, եթէ ոչ ջիղերը կը զբոգ-  
ուին եւ մորթին տաքութիւնը կը  
սպառի :

10. Լոգանքի սենեակ շէնքին տակ  
ըլլալու չէ, անկողնարանը գտնուած  
յարկարաժնին մէջ պէտք է ըլլալ,  
անկողնարանին քովը կամ դիմացը,  
միայն նրբանցքով մը անկէ զատուած

11. Տաք ջրով լուացուիլ անանց  
յետոյ պաղ ջրով մարմինը սղողելու  
— մլասակար է :

12. Լուացուելէ անմիջապէս յետոյ  
եթէ ձեռքերը չծածկուին մօրթը կը  
ճաթի :

13. Կծու , վարնոյ օճառով լուալը  
ճեղքեր կը սպտճառէ մօրթին վրայ ,  
որոնց մէջ ավէն տեսակ աղա կը հա-  
հաւաքուի :

14. Քաշելով հետաւոր բազնիքներ  
երթալը — մլասակար է . յոգնու-  
թիւնը կը թուլցնէ մարմինը :

15. Հով եղած ատեն եւ կիզիչ  
արեգական մէջ բազնիք երթալը  
ի դերեւ կը հանէ ակնկալեալ կազ  
դուրումը :

16. Տղայք լուալէն անմիջապէս  
յետոյ բացօթեայ տեղ հանել — մլա-  
սակար է . գոնէ ժամ մը յետոյ ընե-  
լու է այս :

17. Քրանող ոտքերը պէտք է  
դարմանել , մի կարծեր թէ երբ  
դադրի քրտինք կը մլասաուի առող-  
ջութիւն , պէտք է այս չարիք վեր-

ցնել . լուա ոտքերը յաճախ պաղ  
ջուրով , գուլպաներն յաճախ փոխէ ,  
աւիտ ապիւսիլիս փոշի ցանէ գուլպա-  
ներուն մէջ , այս է դարման այդ  
անախորժ վիճակի :

Ակուայի վրձիճները . — Ընդհան-  
րապէս այնպէս կը կարծուի թէ ակ-  
ուայի վրձիւն ամենէն լաւագոյն մի-  
ջոցն է բերանը մաքուր պահելու :  
Բայց հարկ է գիտնալ նաեւ թէ ակ-  
ուայի վրձիւնն իր անպատեհութիւն-  
ներն ալ ունի , եւ ի մասնաւորի  
կարծր թելերէ շինուած ակուայի վր-  
ձիւնը , զոր մանտանդ այր մարդիկ  
կը գործածեն , զի այնպէս կը կար-  
ծեն թէ նրբին մազերէ շինուած վր-  
ձիւններն աւելի կիներու եւ աղջիկ-  
ներու յարմար ու պատշաճ են , մինչ  
իրենք ֆիզիքապէս անոնցմէ զօրաւոր  
ըլլալով . հարկ է որ իրենց գործա-  
ծած բոլոր իրերն ալ պինդ ու ամուր  
ըլլան : Ետրանոր տեսութիւններ ապա-  
յուցած են որ կարծր մազերէ շին-  
ուած վրձիւնները կը մլասեն ակուա-

ներու կիտուածին , որ կը պահպանէ  
ակռան փտութեան դէմ : Թող որ  
արդէն սխալ է կարծելն ալ թէ կարծր  
վրձինները լաւագոյնս կը մաքրեն  
ակռան քան նուրբ թելերէ շինուած-  
ները : Բաց աստի , թէ՛ կարծր եւ  
թէ՛ նուրբ մազերէ շինուած վրձին-  
ները կրնան ծանր պատահարներու  
տեղի տալ : Տեսնուած է որ վրձինին  
թելերը գացած խոչափողին մէջ մտած  
են եւ շատ վնաս տուած են անոր :  
Կրնան նաեւ աղիքներուն գալարա-  
ծեւ յաւելուածին մէջ մտնել եւ կցա-  
ղետապ յտալ բերել : Գերման բժիշկ  
մը՝ Տ. քթ. Վաստանիկէ , վերջերս  
Տրէզտէի Կնախտաբանական Ընկե-  
րակցութեան ցոյց տուաւ հիւանդի  
մը կցաղետապէ վարակուած աղիքին  
մէկ կտորը , զոր վիրաբուժական  
գործողութեամբ մը դուրս հանած  
էր : Աղիքին մէջ կարծր վրձինի թել  
մը կար : որուն չորս զգացեր փաթ-  
թուեր էր կղկղանքը , որով աղեաց  
վէրք գոյացած ըլլալով , վիրաբու-  
ժական միջամտութեան պէտք պիտի

տեսնուէր , եթէ արդէն բժիշկը նոյն  
հիւանդին վրայ ուրիշ վիրաբուժական  
գործողութիւն մը — ձուարանահա-  
տութիւն — կատարած միջոցին հարկ  
տեսած չըլլար անգամ մըն ալ աղիք-  
ները զննել , հասկնալու համար թէ  
հիւանդին միւս գործարաններն առողջ  
են : Այսպէս , մէկ քարով երկու  
թռչուն զարկած եղաւ : Բայց բոլոր  
ասոնց հետեւութիւնն ինչ պիտի ըլ-  
լայ : Սա՛ թէ հարկ է աղէկ , բարակ  
մազերէ շինուած վրձիններ միայն  
գործածել : Երբ մազերը սանկ թա-  
փիլ սկսին մէյ մը , պէտք է մէկ  
կողմ ձգել այն վրձինը , եւ ուրիշ  
նոր , ամուր վրձին մը առնել : Վի-  
րաբուժներն ալ աղէկ բան մը կ'ընեն ,  
կարծենք , երբ որովայնի վրայ գոր-  
ծողութիւն մը կատարած ատեննին ,  
անգամ մը կցաղիքն ալ քննեն , տես-  
նելու համար թէ վիճակի մէջ է եւ  
վտանգ մը կը սպառնա՞յ ապագային  
համար :

Ակռաները մաքրելու համար գոր-  
ծածուած շատ մը զեղերու եւ գոր-

ծիքներու մէջէն ամենէն պարզերն են որ ամենէն աւելի օգտակար են : Պարզ հաւի փետուրէ առամնակրկիտ մը գործածելու է ակռաներու միջոցներէն կերակրոց բեկորներն հանելու համար : Պարզ ակռայի վրձին մը , եւ կաւիճով խառնուած օճառի հեղուկ մը բաւական կրնան սեպուել բերանը լուայու համար : Երբեմն փոքր քանակութեամբ ալ գործածելն ալ ազէկ է : Ի՛նչ որ ալ գործածուի , պէտք է որ գատաղութեան պառկող բաներ ըլլան եւ ոչ թէ համին ու հոտին համար գործածուին : Աձուխի փոշիի գործածումն օգտակար չէ՛ սեպուած , որովհետեւ ամխոյ մասնիկները լինաբար մէջ գրգռիչ ազդեցութիւն մը ունին . գործածուելիք ակռայի փոշիները միշտ գիւրահալ ըլլալու են : Փտելու սկսած ակռաները միշտ առամնարոյժին ու շարժութեան ներքեւ պահելն ալ մեծ իմաստութիւն է : Այս մի քանի պարզ միջոցներով մէկը կարող է առանց մեծ ծախքի շատ մը նեղութենէ . ցաւէ

ու դրա նական կորուստէ զերծ պահել ինքզինք :

Ան Արար (Ամերիկա)      Լ. Թ. ՅԱՄԻԱՆ

20րդ ամիսէն՝ վերջ է որ տղուն կրնայ արուիլ ձուկ , մանր ձեծուած վառեակի միտ , եւ թարմ բանջարեղէնով ապուր : Տղան երբ երկու տարեկան ըլլայ՝ այն ատեն կրնայ ուտել սովորական կերակուրներ , բայց մինչեւ երեք տարու առաւելապէս կաթով եւ հաւկիթով պէտք է սնանի . կաթը մինակ հեղուկն է զոր կրնայ խմել մինչեւ այդ տարիքը : Գինին վնասակար է , թէեւ տղաք սիրով կը խմեն . ջրային զրոթեան վրայ գէշ կ'ազդէ : Տագնապներ կը պատճառէ :

Ուրեմն ոգելից ըմպելիք երբեք յանձնարարելի չեն :      ՏՈՔԴ. ՌՈՔԱԶ

Խոհեմ եւ իմաստուն մայր մը երբեք իր մանկիկը չի պառկեցնէ իր անկողնին մէջ . Որորուն մը պէտք է մանկանու Որորանն այնպիսի դիրք մը ունենալու է որ լոյսը քովէն գայ , եթէ

լոյսը դիմացէն կամ ետեւէն գայ , կրնայ շուտիւն առաջ բերել : Անկողինը շատ կահուղ ըլլալու չէ , եզիպտացորենի տերեւներով լեցուած անկողիններն եւ բարձերն առողջապահիկ են : Որորանը ծածկելու չէ , միայն նայելու է որ օդի հոսանքի մէջ չմնայ :

Տղան մեծ մաքրութեան պէտք ունի : Երբեք պէտք չէ թողուլ զայն աղտոտած կամ թրջած ճերմակեղէններով : Եթէ , հակառակ ամէն խնամոց , մանկան մորթը բորբոքի ու կարմրի , հակիթի մը ճերմկուցը խառնել ձէթով եւ կարկրած մասեւրուն վրայ քսել : Մանկիկները շատ անգամ կուլան՝ միայն անոր համար որ աղտոտ մնացած են : — Մանկիկին զլուխն ալ ստէպ լուալու եւ աճառելու է : — Ընդհանուր լոգանքը շատ աղէկ է մանկիկին , բաւական է որ բժիշկին արգիլած չըլլայ : Ամառը , արեւուն տաքչնելու է ջուրը , ի հարկին կարելի է տաք ջուր ալ խառ-

նել : Գաղջ ջուրը տաք ջուրէն աղէկ է : Որչափ շատ լոգանայ ու մաքուր ըլլայ մանկիկը՝ ա՛յնքան քիչ հարբուխ կ'ըլլայ : ջուրէն հանել է վերջ , պէտք է շփել մանկիկին մարմինը ֆանելայով եւ արեւուն կամ կրակին տաքցուած զգեստները հագցնել շուտով : Պէտք չէ սեղմել մանկիկին մարմինը նեղ զգեստներով : Պէտք չէ բռնադատել որ մանկիկը շուտ օտքի ելլէ : Թող գորգին վրայ տապրլտիկ , աղէկ է :

Պէտք է մայրն ինքը դիեցնէ մանկիկը , եթէ բժիշկին արգիլած չէ իրեն այս բանը : Մօրը կաթն ուտող մանկիկներուն 20-30 առ հարիւրը միայն կը մեռնին , մինչդեռ պիպրոսնով դիեցուած երախաներուն 50 առ հարիւրը կը մեռնին : Պէտք է վարժեցնել երախան կանոնաւոր դիեցման : Առաջին շաբաթները՝ երկու ժամը հեղ մը 10-15 վայրկեան : Աղէկ է երեկոյին առատ կաթ տալ եւ մինչեւ յաջորդ առաւօտ կաթ չտալ :

Մայրը (ստնտուն) պէտք է թթու եւ հում ուտելիքներէ զգուշանայ Պէտք է զգուշանայ նոյնպէս յոյնութենէ , յուզումէ , բարկութենէ : — Պէտք է ութ օրն անգամ մը կշռել մանկիկը . եթէ երախան քաջասողջ է եւ անունդէն կ'օգտուի՝ իր ծանրութիւնը պէտք է երթալով աւելնայ . Հակառակ պարագային , պէտք է բժշկին դիմել : Պէտք չէ ատատ կաթ տալ , Փօրհարութիւն . եւ խիթ կը պատճառէ չափազանց կաթը :

Եթէ հարկ անհրաժեշտ է պիպրոսն գործածել , շատ մաքուր պահելու է զայն ու ատանց խոզովակի պիպրոսն պէտք է գործածել . Այժին կաթը կոյին կաթէն աղէկ է . որովհետեւ այժր թոքախտի ենթակայ չէ . Առաջին ամիսները զոտ կաթ տալու չէ ընաւ . այլ ջուրով խառնուած . Վեցերորդ ամիսէն կարելի է զուտ կաթ տալ . այդ կաթը պէտք է ըլլայ եռացած կաթ :

Դէպ ի վեցերորդ ամիսէն սկսեալ

թեթեւ հացաթան , թաքիօքայ եւլն . բնա՛ւ միս : 1-3 տարու տղոց համար միսի տեղ հաւկիթ . Երեք տարեկանէն վար տղոց պտուղ չտալ երբեք :

Զգուշանալ որ մանկիկը պող չառնէ : — Եթէ կղկղանքը կանանչկէկ է կամ գունաթափ՝ բժիշկ կանչել . — Երբ մանկիկը ախտները կը սեղմէ , բերանը կը կծկէ , անդամները կը շարժէ բուն շարժումներով , բժիշկ կանչել եւ մինչեւ որ գայ , մանկան հագուստները թուլցնել , անոր ոտքերը տաք ջուրը դնել (ջուրին մէջ աղ կամ քացախ) . 6-8 վայրկեան յետոյ , մանկիկը պառկեցնել , գլուխը բարձր , գլխուն վրայ թաց լաթ դնելով :

Մանկիկը տունկ մըն է փափկասուն . որ գլխաւորաբար երեք բանի կը կարօտի . Օդ , մաքրութիւն , պարզ եւ առողջարար սնունդ :

Յ. Ք. ՀԻՆԴԼԵԱՆ





# ԸՆՏԱՆԵԿԱՆ

## ԱՌՏԵՒՆ ՀԻՒԱՆԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ

1 Դիպուածով մէկը ձեռքը կըտրեց . մարդը մեծ քաղաքի մը մէջ կը բնակէր , շրջապատեալ հազարաւոր մարդիկներէ , հոշակաւոր բժիշկներէ ու առաջնակարգ հիւանդանոցներէ . սակայն քովի անձարակ մարդիկը թողուցին որ արիւնը վազէ . մարդը մեռաւ , քովը գտնուողներն դատի ենթարկուեցան , մարդասպանութեան ամբաստանութեամբ : Փոքր ինչ խոհեմութիւն , հանդարտ անխառնութիւն բաւ էր զայս ամէնն արգիլելու : Ուստի հանդարտ եւ անխռով եղիր այսպիսի պարագայից մէջ :

2. Այս եւ ասոր նման հազարաւոր դէպքեր առիթ կուտան Օրացոյցիս ընթերցողներուն մի քանի հրահանգներ եւ կանոններ հաղորդել , որ գիտնան թէ ո՞րն է լաւագոյն կերպն ու

միջոց դիպուածներու եւ յանկարծական հիւանդութեանց ատեն . այս հրահանգներ մանաւանդ անոնց համար մեծ օգուտ ունին որք բժիշկներէ հետու կը գտնուին : Այսու ամենայնիւ այս հրահանգներով պէտք չէ գոհ ըլլալ , այլ ամէն ջանք ընել եւ բժիշկ մը ձարել , քանզի պարզ համարուած դէպք մը կրնայ խիստ ծանրակշիռ հետեւութիւններ ունենալ :

3. Արդ ենթադրենք թէ այսպիսի դիպուած մը պատահեցաւ , ինչ է առաջին պարտքերնիս : Պարտինք անխռով ըլլալ . իրար անցնիլ , պոռալ , ձշել , խելակորոյս հոս հոն վազել օգուտ չունի , իսկ քիչաւ շատ ունի . պէտք է լուս կենանք եւ գործենք :

4. Հարկաւ ամէն մարդ նոյն քաջութիւն եւ անվեհերութիւն չունի . իւրաքանչիւրի ջիղ նոյն տակունութիւն չունի . մին արիւն տեսնելուն այնպէս կը յուզուի որ կը մարի գետինը կ'իյնայ . այս շատ բնական է : Սակայն կամքերնիս կրնանք կրթել որ բաներուն վրայ նայի , անխռովու-

Թեամբու հանդարտութեամբ. կարծրասիրտ ըլլալու չենք, ոչ ալ մեր ընկերներուն ցաւոց անկարեկիր, ո՛չ այլ յաղթելու ենք մեր զգացումներուն եւ յառաջ նետուելով օգնելու ենք արկածեալին :

5. Ունեք կը կարծեն թէ բժիշկները անզգայ արարածներ են. այս սխալ է, անոնց հետ կենակցողներ կը վկայեն թէ անոնք որքան կը յուզուին երբ ցաւալի մի գործողութիւն պարտին կատարել ու որքան կը սքանչանան հիւանդին համբերութեան վրայ :

6. Ֆլորէնս Նայթինկէյ եւ ուրիշ հազարաւոր ազնիւ եւ փափկասուն կիներ առանց ո եւ է վճարումի եւ վարձատրութեան ծառայած են հիւանդներուն եւ վիրաւորեալներուն. աղքատներուն բնակարանները մտած են եւ ամէն տեսակ վէրքեր ձեռքովին դարմանած են եւ փափկասուն տիկիներ եւ օրիորդներ ամէն տեսակ զազիր եւ ահաբի հիւանդութիւններ կը դարմանեն, ջախջա-

խած մարմիններ կը տեսնեն, կրակի բոցերէն ազատուածներու կ'օգնեն, որոց ոչ թէ միայն դէմքը սարսափ կ'ազդեն, այլ այրած մարմինէն ելած գարշելի հոտը զգուանք կը պատճառէ : Սրդ կը կարծէ՞ք թէ ասոնք չեն տանջուիր երբ այնպիսի տանջուողներ կը տեսնեն. անշուշտ. սակայն անձերին վարժեցուցած են եւ բնական զգացմանց յաղթած են, եղած են հանդարտ եւ անխուփ : Ուստի եթէ հիւանդներու օգտակար ըլլալ կ'ուզես, զսպէ անձը, վարժեցուր կամքդ եւ եղիր հանդարտ եւ անխուփ :

7 Մարդիկ մէկզմէկէ շատ կը տարբերին ցաւ կրելու մասին. մին կը համբերէ ահաբի ցաւերու առանց բերնէն բառ մը հանելու, մինչ ուրիշ մը կը սլօռայ ու կը ճչէ : Նաւազը, բացօդեայ տեղեր աշխատողը եւ այն, որ իր սալորական առօրեայ գործէն յանկարծ կը փոխադրուի հիւանդանոց չեն կրնար հանդարտ կենալ անկովինին մէջ. միեւնոյն զիրքի մէջ

մնալ անկարելի կը թուի ասոնց. նրա-  
տողական կենաց վարժուողի համար  
ասանկ չէ : Ուստի հիւանդապա-  
հը մարդոց վիճակը լաւ ուսում-  
նասիրելու է, եւ բարկանալու ու  
անհամբեր ըլլալու չէ : Հիւանդա-  
պահ մը կը պատմէ թէ հոն բերուած  
կտրած անդամներով նաւաստիներ  
առաջին գիշերները կտրած անդամին  
կապերը եւ փայտերը կը քաշէին եւ  
կը նետէին . յետոյ սակայն վարժուե-  
ցան եւ թողուցին :

8. Համբերութեամբ պէտք է հա-  
մոզել տառապեալներն որ երբ իրենց  
խնամ տանողներուն դէմ կը դնեն,  
չատ չփոթութիւն կը պատճառեն եւ  
իրենց շուտափոյթ ապաքինումը  
կարգիլեն . պիտի խորհին անոնք եւ  
համոզուին որ հանդարտ . հնազանդ  
եւ համբերող ըլլալով դարմանումը  
կը դիւրացնեն եւ իրենք իրենց ապա-  
քինում կը փութացնեն :

9. Քլորոֆորմի գիւտէն առաջ յազ-  
թանդամ, քաջատոյջ եւ հուժկու  
նաւազ մը հիւանդանոց բերուեցաւ .

որոյ սրունք ահռելի կերպով ջախ-  
ջախուած էր . հարկ եղաւ ծունկէն  
վեր կտրել հանել սրունքը . բժիշկը  
ըսաւ : Յակորիկ . կը ցաւիմ որ պար-  
տաւոր եմ կեանքդ փրկելու համար  
սքունքդ կտրել . կտրած կայմը նս-  
րոզելու նման սրունքը չենք կրնար  
նորոգել . Յակորիկ :

Այո՛, ըսաւ նաւազը, ես ալ կը  
տեսնեմ այդ, լաւ . որէք, ինչ որ  
պէտք է, քանի՞ ժամ պիտի տեսէ  
գործողութիւնը :

Բժիշկը ըսաւ թէ միայն կարճ ժա-  
մանակ պէտք է . բարի : ըսաւ նա-  
ւազը . ուզածիդ պէս կարէ, եւ տեղը  
փայտէ սրունք մը դիր :

Սրունքը կտրեցին առանց նաւազը  
մարեցնելու, եւ քաջ երիտասարդը  
հառաչ մը իսկ չարձակեց գործողու-  
թեան ամբողջ տեւողութեան :

10. Յաջորդ օր սակայն, երբ  
բժիշկը նաւազին վէրքը կը փութէր,  
լաթերը փաթթած ատեն զնդասեղը  
նաւազին միսին դպաւ : նաւազը  
պօստաց . է՛հ, Պարոն Տոբթոր, զըն-

դասեղիդ ծայրը շատ սուր է, իրաւ որ ինծի շատ ցաւ տուիք :

Յակորիկ, ըսաւ Տոքթօրը զարմանքով, սրունքդ կտրած անենս բնաւ ձայն չհանեցիք. եւ հիմակ գնդասեղին պատճառած փոքր ցաւին կարող չէք դիմանալ. իրաւ որ չեմ հասկնար :

Ա՛հ, չէք հասկնար. Տոքթօր, ես որոշում տուի որ սրունքս կտրուի, որոշեցի դիմանալ ցաւին, սակայն գնդասեղին պատճառելիք ցաւին համար ձեզի հետ կանխաւ սակարկութիւն չըրինք : Կը հասկնա՞ք :

11 Այս, սքանչելի օրինակ մըն է միտքը, կամքը կրթեւում համար : Այր մարդիկ բացօթեայ, գործօն եւ զբաղեալ կենաց վարժուած ըլլալով սովորաբար ցաւի չեն կրնար այնքան տոկոյ ինչպէս կանայք. մենք կր խոսովինք երբ առապինք եւ կը լռենք ստիպեալ. պէտք է մեզ, այր մարդիկս, ազու նման շոյեն, փայփայեն, համոզեն. սակայն կամքերնիս կրթենք եւ երբ դիպուածի մը

պատահինք հիւանդութեան անկողինը մեզի դպրոց մը նկատենք. Յիշենք միշտ որ ջախջախուած մարմինը անուելի ցաւեր չպատճառեր. այրուացք որքան մեծ ըլլայ, այնքան նուազ կ'ըլլայ ցաւ, եւ ամենէն աւելի տագնապ եւ ցաւ պատճառող հիւանդութիւնները էն մահացուներն չեն. այս մտածմունք մեզ հանդարտ անխռով կ'ընեն :

12. Յաւը, թէեւ դժուար է զգալ սակայն չարիք մը չէ. նա ապացոյց, ազգարար մըն է թէ մարմնոյ կամ մտաց մէջ խանգարում մը կայ. ցաւը բարեբար միջոց մըն է մեզ վտանգէ զգուշացնելու, կամ մեզի յայտնելութէ սխալ մը ենք գործած : Մանուկը երբ մատը բոցին մօտ տանի ցաւն է որ անոր կ'ըսէ, «ետ քաշէ, եթէ ոչ ծանրակշիւ հետեւանք կ'ունենայ» : Երբ մարդ մը դանակով կտրէ ձեռքը ցաւն է որ կ'ազդարարէ յառաջ չտանիլ կտրելու գործողութիւնը, եւ դադրիլ : Երբ տկարակազմ մարդու մը հանդերձը բռնկի, միայնակ եւ

առանձին քնացած ատեն, ցաւն է որ անոր աղաղակել կուտայ եւ օգնութիւն կը հասնի, մինչ եթէ ցաւ չըլլար նա պիտի այրեր եւ ածխանար, առանց եղելութեան գիտակից ըլլալու:

13. Այրերուն ալ խօսք մը. երբ բարկանաք սեւէ անհաճոյ բանի մը համար նայեցէք ձեր կնոջ վրայ, կամ, եթէ չէք ամուսնացեալ, յիշեցէք ձեր մայր. խորհեցէք որ նա ձեզ ծնած ատեն ցաւեր, մահուան արհաւիրքներ կրեց, զորս դուք չէք կրնար երեւակայել իսկ, բնաւ զգացած չէք եւ չէք կարող զգալ: Սակայն այդ տազնապալից բուպէներէն, «մահուան շուքին ձորէն» անցնելէ ետեւ, նա քաղցր ժպիտով մը զձեզ կուրծքին վրայ սեղմելով համբուրեց, մոռնալով եւ անգիտանալով բոլոր դառն ցաւերը: Զանանք նեղութեանց եւ տառապանաց ժամուն քաղցր ու համբերող ըլլալ. յիշելով որ խաւարր միշտ չտեսէր այլ անոր կը յաջորդէ լոյս, փառաւոր եւ զուարթ արշալոյս:

14. Ի վերջոյ հիւանդին եւ հիւանդապահին ջերմիւ կը յանձնարարենք աղօթք. աղօթել որ Աստուած պարգեւէ համբերութիւն եւ խողազուղութիւն: Ամէն տեսակ տառապանք, ցաւ եւ վիշտ տեսնող մը, կրնայ վստահաբար ըսել թէ չկայ բան մը: որ կարողացնէ զմարդ ցաւի համբերել, անխռով եւ անտարբեր ընել քան աղօթք եւ հաւատք ու վստահութիւն առ Աստուած: Մինչեւ հասնի բժիշկը, եւ հասնելէն ետեւ իսկ, եթէ նա անկարող ալ ըլլայ օգնել քեզ, աղերսէ Աստուծոյ եւ նա պիտի օգնէ եւ զօրացնէ քեզ քու տառապանաց վիճակիդ մէջ, կամ պիտի աղատէ քեզ եւ կամ պիտի տայ քեզի զօրութիւն եւ համբերութիւն տոկալու եւ տանելու ցաւերը: —

Անխոհեմութեան արդիւնքը. — Պելֆօրի մօտ, ի Վալաուա, անխոհեմութեան արդիւնք ծանր արկած մը պատահեցաւ: Տիկին կլասէր ուզելով

հրահրել կրակարան մը , որուն վրայ կերակուր կ'եփէր, անուշադրութեամբ ալքօլ թափեց վրան : Անմիջապէս կրակ առաւ ալքօլի շիշը , որ պայթեցաւ եւ հրավառ հեղուկը թափեցաւ կնոջ ու երեք զուակներուն վրայ , որոց մին՝ 13 ամսու տղեկ մը , միւսը 13 տարեկան աղջկ մը , եւ երրորդը՝ տասը տարու մանչ մը : Մօր աղաղակներուն վրայ դրացիները վազեցին եւ ծանր ծածկոցներ ձգելով զոհերուն վրայ , յաջողեցան մարել կրակը , որ ծանր այրուածքներ պատճառած էր : Տիկին կլասէրի վիճակն յաւսահատական է : Մանկիկը քանի մը վայրկեան վերջ հոգին աւանդեց , իսկ աղջկան դէմքն այրած ըլլալով աչքերը կուրցան :

Սեղմիրանը կը տկարացնէ եւ երբեմն կը փճացնէ մարսելու կարողութիւնը . թոքերը կը կորսնցնեն իրենց տճուսը , գրեթէ կէս առ կէս կորսնցնելով իրենց ծաւալը , բոլորովին կը փճանայ շնչաուութեան

սովորական կարողութիւնը , շատ կը քնատէ մէջքի մտին հիւսկերուն , զորոնք ջլազուրկ կ'ընէ ու վերջ ի վերջոյ տճեւ , թոյլ բան մը կ'ընէ զանոնք . սրունքներուն , բազուկներուն , իրանի գիծերուն գեղեցիկութիւնը կը փճացնէ , սննդաուութիւնը սեղմելով , արեան սովորական շրջագայութիւնը խանգարելով եւ այսպէս կենսական ոյժը կորսնցնել տալով :

Իրարու ո՛րչափ մօտ ազգականներու միջեւ ամուսնութիւնը ներելի եւ յարմար է : Ներելի չէ երկու եղբոր կամ քրոջ , եւ կամ եղբոր ու քրոջ զաւակներու միջեւ ամուսնութիւնը : Ուր որ նահապետական դրութիւնը գոյութիւն ունի եւ՝ ազայք նոյն ընտանիքին մէջ կը մեծնան , պէտք չէ մտածել այսպիսի ամուսնութեան վրայ : Երկու եղբոր կամ քրոջ , կամ եղբոր ու քրոջ , թոռներէ աւելի մօտ եզոզները շատ մօտ են , եւ եթէ առտիճան մը եւս հետու ըլլան աւելի

աղէկ կ'ըլայ : Այսինքն «եօթը պոր-  
տը» ազգականութեան մէջ հեռաու-  
րութեան բաղձալի չափ մը կը հա-  
մարինք , թէեւ պիտի չմերժէինք  
ամուսնացնել աւելի մօտ ազգական-  
ներ , երբ անոնք արդէն նշանուած  
եւ իրենց սրտերն իրարու տուած են :  
Տիրող կարծիքներուն չենք համա-  
կերպիր այնպիսի պարագաներու մէջ  
ուր իրական ազգականութիւն չկայ :  
Պիտի չառարկէինք մէկն իր հան-  
գուցեալ կնոջ քրոջն հետ ամուսնա-  
ցնելու դէմ , թէեւ այսպիսի ամուս-  
նութիւն մը օրինաւոր պիտի չըլլար  
Անգլիոյ մէջ : Անցեալները լսեցինք  
դէպք մը : որու մասին վարսնման  
դոյզն պատճառ իսկ չենք կարող  
տեսնել : Մարդ մը եւ կին մը , եր-  
կուքն ալ որբեւարի , իրարու հետ  
կ'ամուսնանան : Մէկուն օրդին կ'ուզէ  
միւսին դատեր հետ ամուսնանալ :  
Երբեք ապրած չեն նոյն ընտանիքին  
մէջ , նոյն նախահայրերու արիւնը  
չհօսիր անոնց երակներուն մէջ , Չենք  
կրնար հասկնալ թէ անոնց ծնողաց

ամուսնութիւնը ամենափոքր ազդե-  
ցութիւն մը կ'ընէ անոնց փոխադարձ  
յարարերութիւններուն վրայ :

ձեւմակ ու սեւ միսերը . — «Մի-  
այն ճերմակ միս կերէ՛ք , սեւ միս  
ընաւ մի՛ ուտէ՛ք» : Այսպէս կ'ըսէ  
ամէն բժիշկ երիկամունքի բոր-  
բոքում ունեցող հիւանդի մը : Նա-  
յինք թէ ճի՛շտ է այս վարդապե-  
տութիւն : Մ. Մ. Օֆէն եւ Ռօզէն-  
վիտզ կ'ապացուցանեն թէ ճերմակ  
եւ սեւ միսերու միջեւ դանուած քի-  
միական տարբերութիւններն այնքան  
մեծ չեն որքան տարբեր տեսակէ  
երկու ճերմակ միսերու միջեւ տար-  
բերութիւնը : Շահեկան է այս մա-  
սին տիրող կարծիքն իմանալ եւ տես-  
նել թէ մի՛ գուցէ պարզ նախապա-  
շարում մը ըլլայ բժիշկներուն ըսածը :  
Տոքդ. Բաուֆման , Ֆրանքֆորդ-  
սիւր-լը-Մայնի քաղաքային հիւան-  
դանոցին բժշկապետ Բրօֆ. Վօն Նօր-  
տէնի օգնականն եւ Տոքդ. Մօր կրի-  
կամունքի բորբոքման ենթարկուած

հինգ հիւանդներու վրայ ուսումնասիրած են որոշ աննդառութեան մը ազդեցութիւնը կզկզանքին, մէզին եւ վերջապէս հիւանդութեան ընթացքին վրայ: Փորձի առաջին շըրջանին մէջ ենթականերուն արուեցաւ կովու միս, իսկ երկրորդ շրջանին մէջ ճերմակ միս, այսինքն հորթի, հաւու եւ գայլաձուկի (թուրնա պաշտը): Բրոֆ. Վօն Նորտէն ալ իր կատարած փորձերն հաղորդեց յիշեալ բժիշկներուն: Այս ամէն փորձերէն սա եզրակացութիւնն հանուեցաւ թէ մսին տեսակն անմիջական ազդեցութիւն մը չունի կզկզանքին կամ միգային բնասպիտակին վրայ, կամ ուրիշ խօսքով, սեւ մսին տեղ ճերմակ միս գործածելը փոփոխութիւն մը յառաջ չի բերեր միգային բաղադրութեան վրայ: Իրաւ է թէ այդ բաղադրութիւնն յաճախ կը փոխուի, բայց ատիկա աննդառութեան արդիւնք չէ: Այս փորձական արդիւնքները կը տեսնուին գործնականի մէջ ալ եւ սա եզրակացութեան կը յան-

գին: — «Եթէ հիւանդին վիճակը կը ներքէ միս ուտել, մսին տեսակը խրնդիր չէ: Հիւանդը կրնայ ուզած միսն ուտել պայմանաւ որ թարմ ըլլայ անիկա»:

ձերմակ հացի առաւելութիւնը սեւ հացին վրայ. — Շատեր կը կարծեն թէ գորշագոյն եւ կամ սեւ հացը նախահար է ճերմակ հացէն, որովհետեւ իր բաղադրութեան մէջ քիչ կամ շատ քանակութեամբ թեփ կը մտնէ, եւ այս թեփը սննդարար ու մարսեցուցիչ յատկութիւններ ունի: Արդարեւ թեփը զովարար եւ լուծողական յատկութիւններ ունի, զորս կը պարտի իր կազմութեան մէջ գլուխուած սերէալինի (céréaline), որ օւլայական գոյանուար մասամբ կը լուծէ եւ կը հեղիպցնէ: Սակայն ճիշտ իր այս յատկութեանց համար է որ առ յաւէտ զայն ալիւրէն խնամով գատել եւ հեռացնելու է, զի, եթէ հազուադիւորէն բացառիկ կազմութիւն մը ունեցող անձանց համար



օգտակար ըլլայ, առ հասարակ առողջ  
կազմութիւն ունեցող կամ այլապէս  
տկարակազմ անձանց համար վնաս-  
ակար կը դառնայ : Անչուշտ լսած  
կամ տեսած էք թէ գիւղացիներ ,  
մանաւանդ ամրան եղանակի մէջ, օրը  
մինչեւ 5 ճաշ կ'ընեն , մինչդեռ քա-  
ղաքացի գործաւորներ երեք ճաշով  
կը բաւականանան : Աստիք կ'ուտեն  
քաղաքի ճերմակ հացը՝ համով հո-  
տով եւ կուշտ ու կուռ , իսկ միւս-  
ները կ'ուտեն թեփոս սեւ հացը : մա-  
նաւանդ մեր գիւղացուց շատերուն  
կերած հացը , որ շատ անգամ ցորենէ  
զատ ամէն տեսակ հունտեր կը պա-  
րունակէ իր մէջ : Հաց մը որ փու-  
ռէն երնեւէն մէկ քանի ժամ վերջը  
սեւ քարի կաօր մը կը դառնայ ,  
դժուարաւ կը ծամուի , դժուարաւ  
կը կլլուի եւ կապարի պէս մարդուս  
ստամոքսին վրայ կը նստի : Օր մը  
վերջը միջուկը սկսած է արդէն բոր-  
բոսիլ եւ լեղի համ մը արտադրել :  
Ասով հանդերձ , ինչդ գիւղացի գոր-  
ծաւորը կ'ուտէ գայն ստրպեալ , քանի

որ ուրիշ հաց չկայ . կ'ուտէ եւ կը  
հիւանդանայ , մանաւանդ ամրան  
տաք օրերուն : Հունձքի եւ կալի  
ատեն եթէ գիւղերն եւ ագարակներն  
այցելէք , պիտի տեսնէք գործաւոր-  
ներ , որք գլխաւորապէս մարտդա-  
կան յօրինուածի այլ եւ այլ հիւան-  
դութիւններէ կը տառապին . ստա-  
մոքսային տենդ , դժուարամարտ-  
թիւն , փորհարութիւն եւլն . եւլն ,  
որոց պատճառն եղանակին տաքու-  
թիւնն եւ օգային գէշութիւնն ըլլալ  
կ'ենթադրեն : Թէեւ աստիք ալ իրենց  
բաժինն ունին , բայց բաղդատմամբ  
հացին , կարեւորութենէ կ'իյնան :  
Ղ. ԲՈՒԱՑ

Հիւանդներու համար. — Գիշերուան  
ագդեցուք իւրը՝ ցաւին վրայ . — Ամէն  
մարդ գիտէ թէ Ֆիզիքական ցաւերն  
աւելի աղէկ կը տարուին ցերեկները,  
քան թէ գիշերները : Նոյն իսկ կե-  
րեւնայ թէ գիշեր ատեն Ֆիզիքական  
ցաւերն աւելի կը ստատկանան :  
Ակոյի ցաւ քաշողները կատարելա-

պէս կը խոստովանին այս իրողութեան ճշմարտութիւնը : Ասիկա այսպէս է նաեւ ահանջի ցաւերու, ծանրաշնչութեան համար եւ չն : Վիեննացի բժիշկ մը, Տոքթ. Կօլաշայտըր, սապէս կը բացատրէ այս խնդիրը : Լոյսը, կ'ըսէ, ցաւերու ախտաբանութեան մէջ ընդհանրապէս կարծուած էն աւելի կարեւոր դեր մը կը խաղայ : Իրօք ալ այն անձերը, որք լաւ օդաւէտուած սենեակներու մէջ կը բնակին եւ իրենց ժամանակին մեծ մասը կ'անցընեն արեւու տակ, այդ մարդիկը մարդկային ընկերութեան ամենէն առողջ եւ առօջ անդամներն են : Եթէ ցորեկ ատեն ունէ ցաւէ մը բռնուին, այդ ցաւը բազդատարար նուազ սաստիկ է. եթէ ուղի միեւնոյն ցաւը գիշեր ատեն պատահէր, աւելի սոսկայի պիտի բլլար, որովհետեւ լոյսն եւ արեւուն ճառագայթները մեր զգայնութիւնը տկարացնելու եւ մեղմացնելու յատկութիւնն ունին : Գիշերը գալուն՝ մեր ցաւագին զգայնութիւնները կ'աւել-

նան, բայց այս ցաւերը նորէն բազդատարար տանելի են, մինչ երբ մեր քովը լամբարի մը լոյսը գտնուի. սակայն լոյսը մարելով, անկողին մտնելուս պէս ցաւերը կ'աւելնան, կը սաստկանան, միայն առտուն, արշալոյսին հանդարտելու համար : Դիւրին բան չէ արեւուն կամ լամբարի լոյսին՝ ֆիզիքական ցաւերու վրայ ունեցած ազդեցութեան դիտական որոշ բացատրութիւնը տալ, բայց իրականութիւնը մէջտեղ է եւ պայծառօրէն կ'ապացուցանէ թէ մութն եւ գիշերային հանդարտութիւնը՝ զանազան ցաւերէ տառապող մարդոց հանգստութեան համար նպաստաւոր չեն : Հետեւաբար, եթէ այս խնդրին ինչո՞նք կ'անգիտանանք, զոնէ կրնանք այս դիտուած ճշմարտութենէն օգուտ քաղել եւ գիշեր ատեն միշտ լոյս թողուլ հիւանդներու սենեակին մէջ : Թերեւս այս միեւնոյն պատճառներուն համար է որ գիշեր ատեն պզտիկ տղոց սենեակները դրուած չափաւոր եւ առօջ

Չապահիկ լոյս մը անոնց վրայ հան-  
դարտեցուցիչ ազդեցութիւն մը կ'ու-  
նենայ : արդէն շատ մը աղաքներ  
իրենց բնազդէն մղուած կը պահան-  
ջեն որ գիշեր ատեն իրենց սենեակին  
մէջ լոյս դրուի : Այս բանէն բացա-  
ռութիւն կը կազմեն միայն ջղային  
անձերը : Ատոնք այն աստիճանի գիւ-  
րագրգիռ են որ իրենց սենեակին  
մէջ չեն ուզեր տեսնել նոյն խի ամե-  
նափոքր լոյս մը եւ չեն ուզեր լսել  
ամենափոքր աղմուկ մը անգամ :  
Գլխու ցաւէ տառապողներն ալ ասանկ  
են . ասոնց ցաւերն ալ բոլորովին  
մութ ու խաղաղ տեղերու մէջ միայն  
կը հանդարտին :



ՏՕԲՐ. Է. ՌԻԿՍ

Մեւ 1814 — Մեւ 1900

## Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն



Տկն. Թ. Դ. — Քեաֆիրին սրիր-  
թօի մէջ հաւեցուր հետը ձէթ խառնէ  
ցնցէ, շիշը տաք ջուրի մէջ դիր երբ  
պիտի գործածես, ցնցէ եւ առտու  
ու երեկոյ հազացողին կուրծքը, ստա-  
մոքսը եւ ողնայարը ասով չփէ եւ  
տաք ֆանէլայով մը ծածկէ կուրծքը:

Պ. Գ. Պ. — Հիւանդի համար հագէ  
ապուրը սա կերպով կը շինուի. պա-  
յաթ ճերմակ հացը ջրոյ մէջ եռացուր  
մինչեւ հալի, անցուր մաղէ, եւ  
ստացած հեղուկիդ վրայ աւելցուր  
ապա քիչ մը կաթ, շատ համեղ է  
եւ արտորժելի հիւանդին:

Չապիչ. — Ջերմ ունեցողի համար  
սա՛ կէտեր նկատէ. — 1. Սնունդ  
փոքր քանակութեամբ եւ օրը 5-6  
անգամ. 2. Թեթեւ, դիւրամարս կե-

րակուրներ: 3. Աւելի քաղջ քան  
տաք. աւելի հեղուկ քան թանցր եւ  
փոփոխական ոչ թէ միեւնոյն բանը  
միշտ. 4. Ալիւրէ շինուած կերակուր-  
ներ, կաթ, կաթնապուր, քիչ միս,  
հաւկիթ եւ քաքսօ. 5. Մաքուր ջուր  
միշտ եփելով. 5. Բերանը միշտ մաք-  
րել ջրով ցողուելով. այս կը բանայ  
արտորժակ եւ բերնի հիւանդութիւն-  
ներ կ'արգիլէ:

Տկն. Զ. Է. — Միտի ջուրը ասանկ  
կը շինեն. կէս քիլօ եղան միս, հանէ  
մաշկերը եւ խոշոր մասերն փոքր  
կտորներ ըրէ եւ քիլօ մը եռացող  
ջուրի մէջ դիր. աւելցուր աղ եւ լաւ  
մը գոցելով 10 րոպէ եփէ:

Վարդունի. — Ուելէ ալիւր քիչ մը  
պաղ ջուրի մէջ խառնէ եւ եռացող  
ջուրի մէջ լեց միշտ խառնելով, դիր  
քիչ մը կորագ, աղ եւ շաքար, 15  
րոպէ եռացուր, ետքը հաւկիթին  
դեղինը քիչ մը կաթով զարկ եւ վրան  
անցուր կ'ունենաս ապուր:

Մրճարանապէս . — Թէյ եփելը մեծ եւ կարեւոր արհեստ է . ամէն մէկ անձի համար կէս թէյի զգալ թէյը դիր թէյանօթին մէջ , որ նախ եռացող ջրով տաքցած է . իսկոյն վրան քիչ մը եռացած ջուր լից , ծածկէ լաւ կերպով , հինգ րոպէ ետեւ եռացած ջուր աւելցուր վրան : Եթէ շատ ազնիւ թէյ կ'ուզես ունենալ , ստաջին անգամ թէյին վրայ լեցուցած ջուրը թափէ , ու վրան լեցուր երկրորդ եռացող ջուրը . թէյը թեթեւ ընելու համար ոչ թէ թէյին այլ գաւաթին մէջ լեցուր պէտք եղած օտաք ջուրը :

Գինի գործածող կիւն . — Հին Հռովմայեցի կանանց խատիւ արդիւեալ էր գինի խմել որ մի գուցէ անվայել ընթացքի մէջ գտնուին : Այլ ասկէ աւելին դուք կրնաք խորհիլ եւ ձեզ համար որդեգրել վայելուչ ընթացքը :

Օր. Ե. Պետրուսեան . — Լէմօնատա , որ կրնայ պահուիլ երկար ստեղծ ,

կը շինուի այսպէս : Ջուր 6 քիլօ , շաքար 75 կրամ , լէմօն 1 . Լէմօնը բարակ շերտերու բաժնէ , ափ մը օխլամուրի ծաղիկ , կէս գաւաթ քացախ , լոլորը մէկտեղ խառնէ , շորս օր պահէ , օրը մի անգամ ցնցելով . յետոյ անցուր ֆանէլայէ եւ շիշերու մէջ լից , խցէ , 2-3 օր արեւին մէջ դիր շիշերը եւ յետոյ պահէ մասանիդ մէջ :

Պաս. Ե. Թ. — Արդարասէր , իրաւասէր անձին իր յանձանքները լեւնիրու նման կ'երեւին , որոց ստորոտ կեցած է ինք եւ միշտ կը խորհի թէ իր վրայ պիտի ինձան եւ փշրեն , ջախջախեն զինք . ան որ , սակայն ոչ արդարութիւն եւ ոչ իրաւունք կը ճանչնայ իր գործած յանցանքներ կը նկատէ ճանճ մը որ բթին քովէն կը սլանայ կ'անցնի :

Շերտաւարոյժ . — Մրջիւնները դօրաւոր հոտէ կը քարչին . օդի , քեաֆիրի , միսկ , նաֆթալին , քարիւղ .

ծխախոտի խաշած տերեւ , գաթրան  
թիրէմէնթինի իւղ — ասոնց մէկովը  
հաստ գիծ մը քայէ մըջիւն գանուած  
տեղ : Սակայն արգեօք շերամները  
չե՞ն վնասուիր այս հոտերէն :

Վաճառական . — Հիւսիսային Ամե-  
րիկայի բամպակը էն լաւն է , հե-  
տեւապէս անկէ եկած կտաւն ալ :

Տկն. Ա. Ա. — Բամպակը քթանէ  
որոշեւ դիւրին է , նիւթը ձէթով  
թրջէ , եթէ քթան է թուղթի պէս  
թափանցիկ կ'ըլլայ նիւթը , եթէ  
բամպակ է նիւթը թանձր կ'ըլլայ :  
Կամ այրէ նիւթէն քանի մը թէլ ,  
բամպակը կայրի մոխիր կ'ըլլայ ,  
քթանը վառած կ'որորուի եւ դէշ  
հոտ կ'արձակէ :

Ե. Ս. Ն. — Տեղ մը կարեցիր եւ  
արիւն կը վազէ , վրան էօրիւնճէկ ,  
ծխախոտ մի դնէր . բամպակը տաք  
ջուրի մէջ թաթխէ , վրան դիր եւ  
արիւնը կը դադրի :

Արդուկող . — Երբ արգուկած նիւ-  
թը խանձի . պօրաքսի լուծուումով  
թրջէ նիւթը եւ նորէն արգուկէ մին-  
չեւ որ չորնայ :

Օր. Նունեայ . — Ձեզի հարբուխի  
պարզ դարման մը բսեմ . սօիը չորս  
կտոր բրէ , լէօպէթ շէքէրիով եփէ  
եւ այս հիւթէն երկու ժամը դգալ  
մը խմէ :

Օր. Ս. Պ. — Հաւկիթին դեզինը  
ուսի հետ խառնէ եւ ասով գլխուդ  
մորթը ամուր մը շփէ . մազերուդ  
արմատները կը զօրանան եւ անոնց  
թափիւր կը դադրի : Յարատեւէ  
սակայն :

Կ. Խ. Դ. — Գլխու գաւ յառաջ  
կուգայ արիւնը ուղեղին մէջ խու-  
ժեղէ . ասոր նշանն է գէմքի կար-  
մրութիւն , եւ վիզին երկու կողմի  
երակներուն բարախումը , այս պա-  
րագայիս գլուխը սառ դիր եւ վիզին  
ետեւի կողմը մանանէխի թուղթ մը :

Ոտքերդ ալ տաք ջրոյ մէջ դիր եւ գըլուխդ բարձր պառկէ։ Սակայն ուղեղը արիւնէ գերծ եղած ատեն ալ գըլուխու ցաւ կրնայ գալ . ասոր նշանն է գունակթափ դիմագլիծ եւ ճերմակ շրթունք . ան ատեն գըլուխը ցած ըլլալու է պառկած ատեն . ոտքի վրայ մի կենար . զօրացուցիչ սնունդ, գինի , պիրա , թէյ եւ մաքուր օդ կարեւոր են :

Պարտիզպան . — Օդին մէջ ամօնեաք կայ . այս սքանչելի աղբ մըն է . ձիւնը զայս երկրիս վրայ կը բերէ եւ հալելով ձրիապէս կ'աղբէ բոյսերը : Սակայն գուն դարձեալ աղբ գործածէ պէտք եղած ատեն :

Օր. Նուարդ . — Յօդացաւ ունին շատեր : Քէրէվիդի արմատը կտրէ ջրոյ մէջ խաշէ , խմէ այս ջուր , որքան յաճախ այնքան լաւ :

Տկն. Մ. Գ. — Ունէ մէկուն ձեռքի կամ ոտքի յօդուածներ երբ խախտին ,

միաքդ պահէ խախտած մասը անմիջապէս 15-20 րոպէ տաք ջուրի մէջ դնել . հարկաւ ջուրը դիմանալու չափ տաք ըլլալու է :

Բնագիտ . — Աշխարհիս մէջ 90 միլիոն գերման կայ , 78 միլիոնը Եւրոպայի մէջ 11 միլիոնը Ամերիկայի մէջ ու մնացեալը հոս հոն ցրուած :

Պատ. Շ. Ե. — Այո՛ , արբեցութիւնը շատ ընդհանրացած է ֆրիստնէայ աշխարհի մէջ ի մեծ ցաւ եւ ամօթ : Գերման ժողովուրդը տարին երեք միլիաո մարք (6 զոչ .) արբեցութեան ծախք ունի մինչ գերման կայսրութեան ամբողջ ծախքը միայն 2<sup>1</sup>/<sub>2</sub> միլիաո մարք է :

Մայր . — Տիֆթէրիի դարման — երբ բժիշկ չկայ մօտդ՝ լէմօնի հիւթն է . ասով կարկարա ընել տուր . երբ չէ կարող կարկարա ընել վրձինով կամ լաթով յաճախ թրջէ կոկորդին վարակեալ մասերը :

Դերձակ . — Ամօնեաքը կը մտքրէ  
աւէն բրգեղէն սեւէ աղտէ , սակայն  
լաւ խցուած շիշի մէջ պահէ : Անելի-  
նով շինուած մեղաններու բրգեղէն-  
ներու վրայ ձգած բիծերը պէտք է  
սրիբթոյով կրկին եւ կրկին լուալ :

Տկն Թագուհի . — Թունաւորուած-  
ներու համար իսկոյն կաթ , ջրա-  
խառն հաւկիթի սպիտակ եւ փսխե-  
ցնող բան մը տալ պէտք է մինչեւ  
բժիշկը հասնի . մի շուարիբ այլ  
գործէ :

Գլխարկալանառ . — Աթլաս քօր-  
տէլան երբ մաքրել կ'ուզես , քանի  
մը ժամ պէնզինի մէջ ձգէ եւ ետքը  
չոր լաթով շփէ մինչեւ չորնայ :

Սպասուհի . — Պատու հանի սառած  
ապակիները գաղջ աղջրով սրբէ :

Երկրագործ . — Ծառերուն արտա-  
քին կեղեւը երբ մշատուի խոզի ճար-  
պով լաւ մը օծէ :

Տիկին Աննա . — Հողէ , քարէ եւ  
ապակիէ անօթներ երբ կոտրին առ  
չմտած կիր կամ ալշի եւ հաւկիթի  
ճերմակով խառնէ , շաղախ շինէ եւ  
կոտրած կատրները փակցուր , թող  
որ չորնայ :

Հիւանդասպահ . — Ափ մը գարին  
լուա , քիչ մը շաքար , թարչինի շերտ  
մը եւ լէմոնի կեղեւ վրան աւելցուր  
եւ 100 տրամ ջուրի մէջ եռացուր .  
լաթէ անցուր , պողեցուր եւ կ'ու-  
նենաս հիւանդի սքանչելի եւ ախոր-  
ժահաւ ըմպելիք :

Տկն. Ե. Թ. — Երբ ուրիշ անգամ  
— Տէր մի արասցէ — այրուած կամ  
խաշուած ք պատահի , իսկոյն թարմ  
կարագի հետ հաւկիթի զեղինը խառ-  
նէ եւ սպիտակ կտաւի մը վրան քսե-  
լով վէրքին վրայ դիր , կրկնէ եւ ցաւ  
ու բորբոքում շուտ կ'անցնին :

Հագացող . — Մեղրը նոր սկսած  
հազի եւ հարբուխի նաեւ կոկորդի



բորբոքումի լաւ դարման է . սպեղանի է նա նաեւ պալարներու եւ բերնի , կուրծքի եւ ստամոքսի հիւանդութեանց օգտակար : 15-20 բուսակէն անգամ մը ա՛ռ թէյի զգալ մը մեղր . եթէ չես ախորժիր տաք կաթի մէջ դիր եւ խմէ : Մեղրին բուժիչ գորութիւնը պարունակած մրջնաթթուին կը արուի :

Բ. Ս. Չ. — Հարբուխին պատճառը բերնէ շնչատութիւնն է , որով պաղ օդը ուղղակի ներս կը խուժէ եւ խրոչափողին վրայ կ'ազդէ : քիթէն շնչատութիւնը պաղ օդը կը մեղմացնէ , ոչ թէ միայն զանազան անցքերէ անցնելուն համար այլ հոն արդէն գանուած տաքուկ օդին հետ խառնուելով եւ բարեխառնուելով :

Կանազործ . — Ուել փայտ , կակուղ թէ կարծր , կրնաս կարծրացնել ստպէս . փայտը խաչէ մի քանի ժամ , ապա եռացուր շաքար ջրի մէջ մինչեւ որ ջուրը շոգիանայ . փայ-

տին բոլոր ծակոտիքները կը խցուին . այսպիսի փայտ ո՛չ կը կոտրի , ո՛չ կը ճաթի եւ ոչ կը ճեղքուի :

Լուսանկարիչ . — Տոքո. Եգեկիէլի Պերլին ապակին քամարայէն հանելէ ետեւ զայն մի քանի բուսակէ միւր հեղուկով մը կը լուայ , անկէ յետոյ լոյսի մէջ կը կատարէ բոլոր գործողութիւն . ի՛նչ է այս կարմիր հեղուկ — գիտէ Տոքթորին :

Խոնարար . — Հաւկիթը թա՛րմ է թէ պայարք . օն , հաւկիթները անօթի մը մէջ դիր եւ վրան ջուր լից . մէկ օրուան հաւկիթը ջուրին տակ կը պառկի . 3-5 օրուան հաւկիթը 20 աստիճան կը ծոխ , 8 օրուանը 45 աստիճան կը ծոխ , 15 օրուանը 60 աստիճան , երեք շաբթուանը 75 աստիճան , մէկ ամսուանը հաստ . թանձր կողմին վրայ կը կանգնի , աւելի հինը ջուրին երեսը կ'ելլէ : Ուստի ջուրին տակ պառկածն է էն թարմը :

Պատանի . — Ի սրտէ կը բերկրիս  
որ «Աշնան Տերեւներ գրքոյկս (գին  
4 զրշ.) նաեւ ձեր կեանքը փրկիք է ,  
Ձեր հարցումներուն չենք կրնար  
Օրացոյցիս անձուկ էջերուն մէջ պա-  
տասրաննել զիմեցէք անկեղծ բժիշկի  
մը եւ անոր հրահանգներուն հետե-  
ւելով կատարեալ առողջութիւն պիտի  
վերստանաք :

Դեռահաս մայր . — Մանկանց մարմ-  
նական խնամատարութեան նկատ-  
մամբ Օրացոյցիս էջերուն մէջ շատ  
կարեւոր հրահանգներ պիտի գրա-  
նէք : «Առողջարանական Քերական»ին  
մէջ ինչ որ յանձնարարեալ է միայն  
չափահասներու չպատկանիր : Մա-  
նուկներ եւս կ'օգտուին անոնց  
գործադրութենէն : «Մայրիկին Ա-  
ռաջնորդը» գրքոյկը (գին 1 զրշ.)  
շատ գոհ պիտի ընէ ձեզ եւ ձեզ  
նման մտահոգ , դեռահաս , ան-  
փորձ մայրեր , կարդացէք զայն ,  
ուսումնասիրեցէք , մանաւանդ գոր-  
ծադրեցիք հոն ըսուածները եւ թէ

դուք եւ թէ ձեր մանկիկ պիտի օգ-  
տուիք :

Ուսանող . — «Անգլ. Լեզուի Բա-  
նալին» (Գ. Տպագր. 15 զրշ.) բոլոր  
հայ վարժարանաց մէջ ընդունուած  
է . Տնքդ Բիրս Պարտիզակի բար-  
ձրագոյն վարժարանի նախկին տնօ-  
րէն զայն «իր տեսակին մէջ եզական»  
է հռչակած :



## ԳՈՐԾԻ ՄԱՐԴՈՅ ԲԱԺԻՆ

### ՀԱՅՐ ԱՐԲԱՀԱՍԻ ՆԱԾԱԿԸ

Սիրելի բարեկամներս.

Արդարեւ մեր ծախքեր չափէն աւելի շատ են. եթէ սակայն անոնք լսի ընտանեկան անհրաժեշտ ծախքեր ըլլային, անով գոհ պիտի ըլլայինք, բայց շատ աւելորդ ծախքեր կ'ընենք: Օրինակ. ընտանեկան ծախքեր կը կրկնապատկուին մեր հաշիւ չընելովը, պճնասիրութիւնը կեռապատկէ մեր ծախքեր. մեր յիմարութիւն կը քառապատկէ: Որքան ալ խնայենք չենք կրնար աւելորդ ծախքերէ ազատիլ. սակայն անոյս պէտք չէ ըլլալ. բարի խրատներու մտիկ ընենք եւ զայնս ի գործ դնենք եւ այս աւերման առաջնորդող վիճակէն կրնանք ազատիլ:

Նախ անգործութեամբ անցուած ժամանակին վրայ խորհինք. Անգոր-

ծութիւն մայր է մոլութեանց. նա մեզ հիւանդ կ'ընէ, կեանքը կը կարճեցնէ. անգործութիւն կեանք կրժող որդ, միքրոպ է. ոչ թէ աշխատութիւնը, այլ անգործութիւնը, ծուլութիւն է որ կը մնասէ անձին եւ նկարագրին. գործածուող բանալին փայլուն կ'ըլլայ, իսկ մէկ անկիւն ձգուածը կը ժանգոտի: Ուստի առաջին խրատս է, սիրելիք, որ ժամանակը պարապ չանցնէք, եթէ կը սիրէք կեանք, ժամանակնիդ գործունեայ կերպով անցուցէք:

Ապա յիշեցէք որ քնացող աղուէսը չէ կարող հաւ բռնել. ո՛րքան մեծ են կորուստներ չափէն աւելի քնանալով. գերեզմանին մէջ երկար պիտի քնանանք. հոն է անգործութեան ու քնանալու տեղին: Կորսուած ժամանակ ետ չդառնար. ուրեմն աշխատինք, ցորչափ կարողութիւն եւ ոյժ ունինք: Մուլութիւնը ամէն բան կը դժուարացնէ, մինչ ժրութիւն կը դիւրացնէ: Ուշ արթնցողը գործ չի կոնար կատարել. օրը իրիկուն կ'ըլլայ

հազիւ թէ գործին կէտը կատարուած ատենն: Ծուլութիւն դանդաղ շարժման ատեն աղքատութիւն բազէի նման վրան կը հասնի: գործդ դուն վարէ, եթէ ոչ նա քեզ կը վարէ ի կործանում: Ժամանակին անկողին, ժամու նակին ելլել կանոն բրէ, զի ասով երջանիկ, հարուստ եւ իմաստուն կ'ըլլաս:

Սակայն ոչ թէ ասոնք լսել եւ փափաքիլ անոնց հետեւիլ այլ բնթացք փոխել պէտք է: «Շնորհաւոր նոր տարի» հազար անգամ կրկնելով տարուոյն մէկ օրն իսկ չենք կարող շնորհաւոր, բարեբաստիկ բնել. դո՛ւ փոխուէ եւ օրն ալ, տարին ալ կը փոխուի: Կը յուսաս թէ լաւ պիտի ըլլայ. այդ պարապ յոյս է, եթէ չես աշխատիր. յոյսն է որ մարդս ձիր եւ գործունեայ կ'ընէ. այդ յոյս քեզ անօթութեան զիրկը պիտի յանձէ:

Յիշէ նաեւ որ առանց աշխատութեան վատտակ չկայ: Արհեստ ունեցողը հարուստ է. աշխատող արհեստաւորը պատուաւոր պաշտօնեայ

մ'է. աշխատողը միշտ կը գտնէ հաց, անօթութիւնը աշխատողին պատուհանէն ներս կը նայի, բայց չհամարձակիր ներս մտնել: Օրիորդ երջանկութեան մայրը Տիկին աշխատութիւն է, Աստուած ալ աշխատողին ամէն բան կը պարգեւէ, այսօր աշխատէ, զի շես գիտեր թէ վազուան օրը ի՛նչ զժուարութիւն պիտի բերէ. հերիք է օրուան բուն իր նեղութիւնը, կ'ըսէ Յիսուս. «մեր օրական հացը սուր» ազօթողին Աստուած կ'ըսէ, պիտի տամ, պայմանաւ որ դուն ալ օրական պարտականութիւնդ կատարես: Մէկ այսօր, երկու վազուան օրուան օրուանէ աւելի կ'արժէ: Գործիդ գլուխը անցիր, անոր աէրը եզիր, ուրիշին ձեռքով միայն օձ բրունէ կ'ըսէ ասածը. ձեռնոց դրած կատուն չկրնար բռնել մուկ:

Պարտինք սակայն յարատեւ աշխատիլ: Նաւը կը յարատեւէ, ձեզքելով ալիքներ եւ փոթորիկներու զիմադրելով. խորիստ այն ատեն կը նետէ, երբ իր նպատակ եղած նա-

ւահանգիստ ժամանէ : Գործիդ գլուխը կեցիր , քաջ նաւապետի նման . մի վատահիր ուրիշին . աչքդ միշտ ապագայիդ ուղղած յարատեւէ գործդ : Եթէ կ'ուզես էն լաւ ծառան ունենալ դո՛ւ ծառայէ քեզի :

Գործդ , պաշտօնդ մի փոխէր , նախ լաւ խորհէ , եւ ընտրութիւն ընելէ՞դ ետեւ ա՛լ կոց անոր մէջ . ըսէ , Աստուած գրս կոչած է ճայս պաշտօնիս . սակայ տեղափոխուած ծառը արմատ չըսնէր . երեք անգամ՝ բնակարան փոխողը սուռը հրդեհի տուածի չափ մնաս կը կրէ :

Ապա կարեւոր է զրամ խնայելու ա՛յնքան ուշադիր ըլլալ որքան շահելու համար ուշադիր եղած էիր . խնայել չգիտցողը կ'աշխատի ցմահ առանց զրամ ձգելու : Ի՛նչ որ շահիս եթէ ծախսես , վա՛յ քեզ : Այրեր երբ գործերին թողլով խաղամուրթեան եւ ըմպելիքի կը հետեւին , եւ կիները իրենց գործերն ձգելով կամ ուրիշի յանձնելով երբ սկսին տունէ տուն այցելութիւններ ընել , սուրճի

եւ թէյի սեղանին առջին շատախօսել եւ այս եւ այն բաւրասել : յայնժամ անոնց վճիռ կնքուած է եւ շուտ պիտի գործադրուի :

Ուստի յիմարական ծախքերդ չափաւորէ . յիմար մի ծախքի համար սպառուած զրամով երկու զաւակ կրնաս մեծցնել : Գաւաթ մը թէյ , խահուէ , բաժակ մը գինի , գարեջուր , խորտիկ մը , գեղեցիկ մէկ հանդերձ , երբեմն ալ բուտրան , սուառէ , պարահանդէս եւրն , ասոնք բան մը չեն թուիր , բայց քանիցս կրկնուած քիչը շատ կ'ըլլայ ի վերջոյ : Զգուշացէք քանիցս կրկնուած մանր մունր ծախքեր մեծ պարտքերու պատճառ կ'ըլլան : փոքր ծակ մը կ'ընկղմեցնէ մեծ նաւը :

Դարձեալ քեզի կանոն ըրէ պէտք չեղած բան չգնել որքան աժան ալ ըլլայ . պէտք չեղածը գնողը , շուտ պիտի վաճառէ պէտք եղածը : Կան անանկներ որ անօթի կը մնան եւ զաւակներ կը զրկեն հացէ , հանդերձ մը գնելու համար որ բնաւ պէտք

չէ, այլ միայն իրենց ունայնամտութիւնը յագեցնելու կը ծառայէ :

Այս ընթացք շատ հարուստ եւ նշանաւոր անձինք յետին ազգատութեան առաջնորդած է, եւ կը պարտաւորին անոնցմէ՝ օգնութիւն խնդրել, զորոնք բարեւելու իսկ չէին զիջաներ, եւ որք խնայողութեամբ եւ ժրութեամբ հարուստ եւ բարեկեցիկ են եղած : Փոքր ծախք մը կարեւորութիւն չունի հարուստներուն համար, սակայն երբ ալիւրին տակառէն միշտ ալիւր առնենք, առանց զայն լեցնելու, շուտով պիտի տեսնենք տակասին յատակը : Դրամին յարգը գիտնալու համար, մէկէն փոխ դրամ ուզէ, եւ յայնժամ պիտի տեսնես թէ ինչ մեծ, մեծ յիմարութիւն է դրամը վատնել անպէտ բաներու համար :

Տանդ համար անպէտ գեղեցիկ բան մը կ'ուզես գնել. խորհէ առաջ որ տասն հատ ուրիշ բաներ ալ պիտի պարտաւորիս առնել, յարմարցնելու համար այդ գնելիքիդ հետ : Ուստի յաղթէ առաջին ցանկութեանդ որով

միւս տասն առարկաներն գնելու փափաքն դեռ չարթնցած խեղդած կ'ըլլան : Քեզմէ վերին նմանիլ մի ցանկար . յիշէ գորար որ կովին նմանիլ ջանալով ուռեցուց զինքը մինչեւ որ պայթեցաւ : Թող մեծ նաւեր բաց ծովերուն վրայ հպարտ ընթացքով սլանան, դու նաւակդ ծովեզրէն մի հեռացնէր :

Ի վերջոյ զգուշացիր պարտքէ ինչպէս պիտի չթոյլատրէիր որ օձ մը տունդ մուտ գանէ : Պարտք ընողը ուրիշի մը գերին կ'ըլլայ . երբ ժամանակին չկարողանաս վճարել պարտքրդ, պիտի խռովիս երբ պարտատէրիդ հանդիպիս . զքեզ արդարացնելու համար շատ մը պատճառներ պէտք է ստեղծես, ստես . ամօթխածութիւն հետզհետէ պիտի կորսուի, կռիւ եւ հայհոյութիւն երկուստեք, դատեր, ամօթ, խայտառակութիւն :

Ուրեմն աշխատասէր եղէք եւ ուրիշին սարուկը մի ընէք զձեզ պարտքով, փոխառութիւնով, յիշեցէք որ ամրան ետեւէն ձմեռ եւ երիտասար-

դուրսն ետեւէն ծերութիւն կուգայ.  
այն կարօտութեան օրերուն համար  
բան մը մէկ կողմ դրէք: Քանի որ  
կ'ապրինք ծախքը անտարակոյս է,  
չահը երկրայելի է եւ չէ տեւական:  
Էտ է անօթի պառկիլ քան պարտա-  
կան արթնալ. չահեցէք, բայց նաև  
պահեցէք, պահել կրնանք սակայն  
միմիայն խնայողութեամբ:



ՊԱՏ. Ք. ՊՅՅԱՃԵԱՆ  
Ծնած 1828 — Մեռած 1885

# Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն

Երկարակեցութեան գուշակութիւնք .  
 — Յրանսացի բժիշկ մը կը հաւատատէ թէ մարդու մը Ֆիզիքական կազմուածքէն կարելի է գուշակել անոր երկարակեաց ըլլալը կամ չըլլալը , բնականաբար պատահական արկածէ յառաջ եկած մահերը գուշակ մնալով խնդրէն : Ով որ ուզէ իր երկարակեաց ըլլալն հասկնալ , պէտք է ինքզինքը քննէ թէ երկարակեցութեան համար պէտք եղած գլխաւոր պայմանները կա՞ն իր մէջ . այսինքն սիրտը , ուղեղը , թոքերն ու մարսողութեան գործիքն մեծ ու զորաւոր են : Եւ ատոր համար ալ բժիշկի մը ներկայութեան պէտք չկայ . մարդ կրնայ արտաքին նշաններէն ալ փորձել զայդ : Եթէ ներքին գործարանները մեծ ըլլան , մարմնոյն կոճղն , անդամոց համեմատութեամբ , շատ

երկար կ'երեւի : Ենթական նրատած դիրքի մէջ մեծ իրան մը ցոյց կուտայ , բայց ոտքի ելած ատեն , ատոր հակառակը կ'երեւի : Ուղեղին մեծութիւնն ալ անվրէպ կերպով կը հաստատուի երբ ականջին բացուածքն զգալապէս խոր ըլլայ դէպի վիզը , Իթի ծակերուն մեծութիւնը նշան է թոքերուն ընդարձակ եւ զօրաւոր ըլլալուն : Հաստատուած է թէ շնչառութեան գործիքնին ակարեղոյններուն ռնգունքը փոքր են : Առողջութեան եւ երկարակեցութեան նպաստաւոր նշան կը համարուին ընկուզնիի գոյնով կամ բաց կապոյտ աչքերը : Նոյնպէս երկարակեցութեան նշան է երբ ձեռքին մասները կարճ եւ ըթմաման ալ բաղդատաբար մեծկակ ըլլայ : Բայց անոնք որ երկարակեցութեան վերոյիշեալ նշանները չունին իրենց վրայ , կրնան միթիթարուիլ այնու թէ կանոնն առանց բացառութեան չըլլար :



Երկու արտոյ մարդիկ . — Բաղէր-  
սըն (նիւ Եորք) բնակող Մր. Ճօն  
Ֆիրմէն, 25 տարու, երկու սիրտ  
ունի . բնաւ շինեղուիր կազմախօ-  
սական այս անկանոնութենէն : Ընդ-  
հակառակն շատ առողջ է : Սպանեւ-  
ածերիկեան պատերազմին ժամա-  
նակ, 1898, ճակատամարտներու  
մասնակցեցաւ եւ զինք խնամող  
բժիշկն էր որ հաստատեց թէ երկու  
սիրտ ունի : Զինուորական ծառա-  
յուէթիւնը կատարելէ վերջ Ֆիրմէն  
Բաղէրսըն դարձաւ եւ քողաքին  
բժիշկը՝ լսած ըլլալով որ երկու սիրտ  
ունի, Ք. ճառագայթներով քննեց  
զինք եւ վերստին հաստատեց թէ  
երկու սիրտ ունի, բնական խոչո-  
րութեամբ, որք միասին կը տրոփեն :  
Երկու սիրտ քսանեւէինգ տարեկա-  
նին, չափազանց չէ՞ք գտներ : Բայց  
բարեբախտաբար բարոյականին, միա-  
սին կը տրոփեն :

Մագի դեղերը . — Զգուշացէք մագի  
խարդախ դեղերէն : Ի բարիք Տիկին

Լը Ռոն անցեալ տարի շիշ մը մազի  
դեղ գնեց, մազերը սեցնելու հա-  
մար : Շիշին վրայ սա շողշողուն  
եղիֆեղք փակցուած է . — «Անվտանգ  
դեղ, ազդեցութիւն վայրկենական,  
հիանալի արդիւնք» : Բայց, աւագ,  
փոխանակ հիանալի արդիւնք տալու,  
այդ դեղը վէրքեր բացաւ խեղճ տիկ-  
նոջ գլխուն վրայ, եւ քիչ ետքն ալ  
աչքերուն վնասելով ֆոժոնֆիլիթ  
հիւանդութիւնն առաջ բերաւ : Ինչը  
թունաւոր նիւթեր կը պարունակէր :  
Տիկին Լը Ռոն առ այս դատ բացաւ  
մազերը ներկելու յատուկ այդ դեղը  
ծախսող վաճառականին դէմ : Իստա-  
րանը երկու կողմի փաստարաններն  
ալ լսելէ վերջ, վաճառականը դա-  
տապարտեց 500 Քր. վնասուց հա-  
տուցում ընելու Տիկին Լը Ռոնի : Հոս  
աւելորդ չըլլայ թերեւս յիշեցնել մեր  
փափկասուն տիկիններուն թէ ինչ  
հարկ, ինքզինքնին կարճ ժամանակ  
մըն ալ երիտասարդ ցոյց տալու հա-  
մար մազերնին ներկելու ելնել եւ . . .  
այսպէս փորձանքներու հանդիպել :

մանաւանդ աղուոր քթան մազերը նուա՞ղ սիրուն են միթէ :

Երեւելի անձանց ուղեղը . — Ֆրանսացի նշանաւոր մարդաբան եւ բնասոս Բրոֆ. Լապորտ մեռաւ անցեալներս, եւ Բրոֆ Բարիլօ գիտական քննութեան մը ենթարկելով անոր ուղեղը, հրատարակեց արդիւնքը : Այդ քննութեամբ անգամ մը եւս հաստատուեցաւ թէ ուղեղի ծանրութիւնն ամենեւին առնչութիւն չունի իմացական կարողութեան հետ Բրոֆ. Լապորտի ուղեղը շատ ծանր չէր, այսինքն 1234 կրամ կը կշռէր : Իրտելի է սակայն որ Բրոֆ. Լապորտ 73 տարեկան էր մեռած ատեն եւ բնականաբար ուղեղը կարկամած էր թերեւս : Ինչ որ է . Բրոֆ Բարիլօ այդ նշանաւոր գիտնականին ճարտարախօսական գերազանց կարողութիւնը գիտնալով անոր ճակտին երկու կողմերուն ուղեղին պատտանները մասնաւոր ուշադրութեամբ քննեց եւ տեսաւ որ ճակտին ձախ կողմի

մասերն յայտնադէս մեծ եւ աւելի նրբօրէն կարգաւորուած էին, քան թէ աջ կողմիները : Արդարեւ մարդու խօսելու ուղեղային շարժիչ կարողութեան կեդրոնը ճակտին ձախ կողմի ուղեղին մէջ է : Ինչպէս կը յիշուի, Կամպլէդդայի ուղեղն ալ այդ մասին մէջ շատ զարգացած էր :

Ափրիկեի ֆնախը . — Լոնտոնի թերթերը կը գրեն թէ վերջապէս գտնուեցաւ քնախա կոչուած այն սոսկալի հիւանդութեան պատճառն որ ենթական վերջին աստիճանի քնատութեան մասնելով, անոր մահուան պատճառ կ'ըլլայ, եւ որ կէ միայն Ուկանտայի գաւառին մէջ ցարդ ու թ հազար ընդհանր մեռան : Զարմանալի է որ Եւրոպացիները զերծ մնացին անկէ : Տօքթ. Բասդէլանի յարատեւ քննութեամբ «Իրիւրանոսամա» կոչուած տեսակ մը մանրէն գտած է այդ հիւանդութեան վարակուող ընդհանրուն ողնածուծին եւ արեան մէջ : Այս մանրէն շատ կը

նմանի Չատ լիճին ճանճէն խածնուած անասնոց արեան մէջ գըտնուած մանրէներուն : Ծատ մեծ է հաւանականութիւնը թէ այդ մանրէներն են նոյն քնախտին պատճառը , զի բժիշկները քնախտէ վարակուած անձանց արիւնը կապիկներուն քնարկելով , տեսնուեցաւ որ անոնք ալ քնախտի միեւնոյն նշաններով սատկեցան : Ուրիշ քննութիւններով ալ հաստատուեցաւ թէ այս հիւանդութիւն իրեն յատուկ միջավայրն ունի , եւ վարակիչ պատճառը Չատ լիճին ճանճին տեսակէն միջատ մըն է , (*glossina palpalis*) անուամբ , որ հիւանդութիւնը մէկէն միւսին կը փոխանցէ , հիւանդին արիւնը ծծելով եւ առողջին պատուաստելով , ինչպէս Չատ լիճի ճանճն որ վարակիչն է Ափրիկէի պաճարախտին : Հետեւապէս , ափրիկեան այս քնախտն ալ , Չատ լիճի ճանճով վարակելի պաճարախտին , մարդկային մարմնոյն յատուկ մէկ տեսակն է : Կը կարծուի թէ այս ալ Մարիա կոչուած տնդին

դէմ գործածուած դեղով , այսինքն քինինով դարմանել կարելի պիտի ըլլայ : Այս մասին քննական փորձերը դեռ չեն աւարտած , Այժմ Բարիզի մէջ կը դարմանուին երեք քնախտաւոր խափշիկներ . կը յուսացուի թէ բժշկաց եւ մանրէախոյզերուն ջանքերը պիտի պսակուին , եւ այդ սոսկալի հիւանդութեան դարմանը պիտի գտնուի :

Հրաշալի սնունդ . — Լոնտոնէ քաչուած հեռագիր մը հետեւեայ ապշեցուցիչ լուրը կուտայ . — Շիքահոյէ կը աբուի լուր մը զոր պէտք է վերապահութեամբ բնդունիլ : Շիքահոյի համալսարանէն Տոքթ. Հէդըլ կ'ըսէ թէ հրաշալի սնունդ մը գտած է , Լիյնին կոչուած , որ կրնայ մարդոս հսկայի մը վերածել եւ արտաստովոր դժ մը տալ անոր : Ճերմակ մուկերու վրայ կատարուած փորձեր հրաշալի արդիւնքներ տուած են , 60% համեմատութեամբ խոշորցնելով զանոնք : Այս սնունդը գործարանական

Փոսֆօռ մըն է , որ կը պարունակէ հակթին պարունակած գոյացութիւններէն մաս մը , ուղեգային հիւթն եւ արեան սպիտակ գնտակները :

Ռուսերէն քերթերը վիրարութական արտասովոր գործողութիւն մը կը ծանուցանեն , զոր համալսարանի մը վիրարութեան ուսուցիչն ըրեր է վերջին օրերս : Մանկամարդ աղջիկ մը , ընկուկէրով մը խաղացած պահուն , արկածով ինքզինք ծանրապէս կը վիրաւորէ կուրծքէն : Դէպքէն երկու ժամ ետքն է որ ուսուցիչը կը կանչուի վիրաւորեային քով : Կը հաստատէ որ գրնտակը սրտին դպած է , բարերարութաբար առանց վնասելու խոշոր երակներուն : Վիրարոյժը մանկամարդ աղջկան ֆլօրօֆոսփորն չնչել տալէ ետքը : սրտը կը բանայ եւ կապարը կը հանէ , յետոյ թանձրացած արիւնը կը մաքրէ , վէրքը կը կարէ եւ վիրաւորեալն ի կեանս կը վերա-

կոչէ , Վերջին լուրերու նայելով , դեռատի ազջիկը սկսած է ապաքինիլ :

Յօդացաւի համար Մարպուրիէն Տ. ք. Բէրք նոր դարձանուսի եղանակ մը ցոյց տուեր է Վիեննայի Բժշկական Ընկերակցութեան : Դարմանման եղանակն է մեղուներու խայթել տալ հիւանդ մտքը : Այս առաջարկը քիչ մը տարակոյտով լսուեցաւ : Բայց Տ. ք. Բէրք կ'ըսէ թէ մեղուի խայթոցները որ շատ գէշ կը վնասեն առողջ մարդոց , ընդհակառակն շատ բարերար ազդեցութիւն մը կը գործեն յօգացաւէ տառապողներու վրայ : Կը բաւէ մէկ քանի անգամ խայթուիլ , թոյնով պատուաստուելու համար : Տ. ք. քոյն յիշեց կնոջ մը պարագան , որ առողջացաւ 7,092 անգամ խայթուելէ վերջ : Ինք իսկ ինքզինք փորձի ենթարկեց . իր պաշտօնակիցներուն վրայ սեւէ ներգործութիւն չէր ըներ մեղուի խայթուած քը :

Ալքօրի թոյնն երկու տեսակէ-  
տով մարդկային սերունդը կը փճա-  
ցընէ : Այսինքն երբ մէկ կողմէ մա-  
հերուն թիւը կ'աւելցնէ , միւս կողմէ  
ծնունդները կը նուազեցնէ : Իրա՛ւ ,  
չի կրնար ըստիլ որ ալքօլամոլու-  
թենէ վարակուած տարաբախտ ան-  
ձերը բեղմնաւորութենէ զուրկ են ,  
սակայն ասոնցմէ ծնած զաւակները՝  
բաղդատամբ առողջ մարդոց կողմէ  
ծնած զաւակներուն՝ տկար ու ան-  
արիւն ըլլալով , ասոնք ամենաչնչին  
պատճառով մը ինկ ամէն տեսակ հի-  
ւանդութիւններու կենթարկուին :  
Թէեւ ալքօլամոլ անձերն ուղ-  
ղակի ոգելից բմպելիներու պատճա-  
ռաւ չեն մեռնիր , սակայն՝ ալ-  
քօրին երեսէն՝ զանազան հիւան-  
դութեանց ենթարկուելով կը վախ-  
ճանին , որով անկարելի կ'ըլլայ  
ամէն տարի ալքօլամոլութեան հի-  
ւանդութենէն մեռնողներու մէկ ճըշ-  
գրիտ մահացուցակը պատրաստել :  
Տեսէք հիմա , ալքօլամոլ անձ մը  
ոեւէ պզտիկ անուշադրութեան մը

հետեւանքով քիչ մը պաղ կ'առնէ :  
Բայց անոր Ֆիզիքական առողջու-  
թիւնն արդէն խանգարուած ըլլալով ,  
չի կրնար դիմադրել այս անկարեւոր  
պաղառութեան եւ քիչ ետքը կը հի-  
ւընդնայ , հիւանդութիւնը պաղա-  
ռութեան կը վերագրուի , բայց եթէ  
աղէկ խորհուի , այդ մարդն աննշան  
պաղառութենէ մը չէ որ հիւընդցած  
է , այլ իր հիւանդութեան սկզբնա-  
պատճառն այն է որ՝ ալքօլամոլու-  
թենէ խաթարուած Ֆիզիքական  
առողջութիւնը չէ կրցած տակալ այդ  
չնչին պաղառութեան , որուն հետե-  
ւանքները շատ ծանրակշիռ կ'ըլլան :

Եթէ փորձը դիտութիւնը կը կան-  
խէ , ես ալ 40ամեայ փորձառութիւ-  
նովս կը համարձակիմ ըսել թէ Աս-  
տուծոյ մեզ շնորհած ուտելիքներուն  
եւ ոչ մին մլնասակար է եւ անօգուտ  
մարդուս . ես համոզուած եմ թէ ու-  
տելիքէ ծնունդ ստած մլնասը չէ թէ  
անոնց տեսակին , այլ անոնց քանա-  
կին , որակին եւ պատրաստելու ,

եփելու եղանակին մէջ որոնելու է :  
 Ես համոզուած եմ թէ քիչ մտեղէն  
 եւ աւելի բուսեղէն ուտելու վար-  
 ժուողներն աւելի առողջ կ'ըլլան :  
 40ամեայ փորձառութիւնովս կը հա-  
 մարձակիմ ըսել, թէ միայն՝ քանջա-  
 րեղեկեկն նախաւեճար չէ : Պատ-  
 մութիւնն ալ մեզ կը սովբեցնէ թէ  
 ցորենով ու բուսեղէններով սնանող  
 ժողովուրդներն ալ շատ առողջ ապ-  
 րած են, բայց սովորութիւն եղած  
 է ըսել, թէ առանց միսի մարդ չի  
 կրնար ապրիլ : Զակի տէր հայրեր  
 ու մայրեր փորձով կը տեսնեն, բայց  
 չեն գիտեր թէ իրենց աղաքը մինչեւ  
 5-6 տարի միս չեն ուտեր, եւ չեն  
 ալ ախորժիր : պատիկներուն ամենէն  
 սիրելի ու հաճելի ուտելիքներն են  
 հացը, պտուղն ու շաքարը, երբ եւ  
 որքան տաս կ'եւտեն : դպրոցէն տուն  
 վազող անօթի աղաք, տուն մտած-  
 նուն պէս, մայր, հաց տուր կը պո-  
 ռան : բայց 5-8 տարեկան ըլլալէն  
 ետքը շատ դժուարութիւնով կը  
 վարժուին միսին : Զեւ ամաչեր ըսե-

լու թէ առաջուան բժիշկները մենէ  
 շատ աղէկ կ'ընէին եւ շատ ալ հի-  
 ւանդ կ'աղեկցնէին. թոքատապ (սաթ-  
 լըճան), ժանաատենդ (թիֆո) եւ  
 ասոնց սուր եւ կրակներու մէջ երող  
 ու մրկող հիւանդներուն միայն բրիժի  
 ջուր կը խմցնէին. անթիքիթիկն, ման-  
 քիթիթիկն եւայլն չէին լսած :

Բացարձակապէս բուսային սնունդն  
 ընդհանրապէս ճարպի կողմէ աղ-  
 քատ է. ահա ընկոյզ ու նուշ եւ  
 իրենց նմանները փափաքելի ճարպը  
 կը պարունակեն : Այս սկզբունքով,  
 ընկոյզները պտուղներուն հետ ընկե-  
 րացնելով կատարեալ սնունդ մը կը  
 յորինուի : Ընկոյզներն աղիքներուն  
 պաշտօնը կը զիւրացնեն, պնդու-  
 թեան առաջքը կ'աւնեն, լեարդին  
 պաշտօնը զրգոելով մարսողութիւնը  
 կը զիւրացնեն : Նիհար, տկար, հա-  
 լող ու մաշտներու, շաքարախտ,  
 սպիտակամեղութիւն, ջղային հիւան-  
 դութիւններ ունեցողներու, հիւժախ-  
 սաւորներու (որոց՝ միայր շատ վնա-

սակար է) , ապաքինողներու շատ օգտակար է ընկոյզը :

Ընկոյզը կը փոխանորդէ միսին . ընկոյզը կը պարունակէ 28<sup>0</sup>/<sub>10</sub> սպիտ . (ուշադրութիւն , ընթերցող : այս 28 թիւը չմոռնաս) , իսկ միսերուն ամենէն ուժովն՝ եզան միսը՝ հազիւ 19<sup>0</sup>/<sub>10</sub> կը պարունակէ . եւ ահա այս իրաւամբ ամենուն բերնին ջուրերը վազցնող պիֆթիսը , փխշպասքըն ելն . կը փոխանորդէ , եւ այս իրաւամբ պէտք է կոչել , միս բուսային :

Ընկոյզի նման ամէն տեսակ պտուղներն ալ , նիհար եզան միսին չափ սպիտ կը պարունակեն , որք իրենց բաղադրութեամբը , իրենց սննդական արժէքովն եւ իրենց օգտակարութիւնով , ամէն տեսակէտով համարժեք են մսին . Կողմններու շատը մեծ քանակութեամբ նշայ կը պարունակէ . շատ քաղաքներու մէջ ասոնց ալիւրովը հաց կը շինեն : Իտալացիները Կարկանդակ կը պատրաստեն . Իտալիոյ հիւսիսային քաղաքներուն ժողովրդին կերած հացին մէջ

կէս առ կէս կաղինի ալիւր կը գործածուի . Նախնի Հռովմայեցիներու մեծ մասամբ կաղիններով կը սնանէին : Նորվեկիայի մէջ սովի ատեն խոզկաղին կ'ուտէին : Բնախօսութիւնը կը սովրեցնէ մեզ , թէ կերակուրներուն մէջի սպիտէն ետքը , ամենէն կարեւոր մասն է ճարպը : Աւելի դիւրին է ճարպով նշան փոխանորդել , քան թէ ճարպը՝ նշայով :

Ուստի , սովրելով ընկոյզին բաղադրութիւնը , որ ինչպէս ըսինք ամենէն ուժով մտէն աւելի սպիտ կը պարունակէ , բնաւ չդժգոհին գաւառացիք , մանաւանդ աղքատները , քաղաքացիներուն չափ միս չուտելնուն կամ չիրնալ ուտելնուն համար : Թող քաղաքացիներն ուտեն միսն սրչափ որ կ'ուզեն , եւ ըլլան ենթակայ շաքարախտի , սպիտակամիզութեան , յօգատապի , էկզէմայի ելն : Թող յօգնին իրենց ոսկիներով՝ իրենց մարմնոյն մէջ հաւաքուած բնամէզն ու միզային թթուն քրտինքով ու մէզով դուրս հանելու համար : Քար-

լըսպատու եւ ասոր նման հանքային ջուրերու բաղնիքներն երթան՝ ոչ թէ կատարելապէս բժշկուելու, այլ առժամանակեայ բարեօքում մը ունենալու։ Կերէ՛ք միս շաքաթը քանի մը անգամ, եթէ կրնաք, բայց համոզուեցէ՛ք թէ առանց մսի՝ մսակերներէն աւելի առողջ կրնաք ապրիլ, սա պայմանու որ միսին սպիտը պարունակող կերակուր մը ուտէք, ինչպէս են ընկոյզը, նուշն եւ ասոնց նմանները։ Ամբար մը պարէն, ամբար մը ընկոյզ, բաւ են մարդս առողջ ապրեցնելու։ Առանց մսի, կաթի, մածուեր, ճերմակ պանիրը, եղն ու մեղրը, առանց «է»ի սերը, պտուղն ու կանաչը բաւ են ապրելու եւ առողջ ապրելու, եւ մանաւանդ առանց ենթակայ ըլլալու միսէն սնունդ առած վերոյիշեալ ծանր ու երկարատեւ հիւանդութիւններու։

Գերմանացիք սովորած ըլլալով ընկոյզին թանկագին ու առողջարար յատկութիւնները, ամէն կողմ կը մշակեն։

Յուսամ քե գայ ժամանակ որ ժողովուրդն ու քաղապետութիւններն ընկոյզին այսչափ օգտակար ըլլալը սովբելով, փողոցները, հասարակաց ու մասնաւորաց պարեգները զարդարող անպսուղ ծառերը բնացիեջ ընելով, ընկոյզ ու նուց սկսին։

**ԾԵՐ ԲԺԻՇԿ**



Մեծանուն առողջարան Բրոքֆ. Պուշուտա ծխախոտին գործածութիւնը կը թողարէ մասնաւոր պայմաններու մէջ։ «Պէտք չէ բացարձակապէս «հակառակիլ ծխախոտին գործածութեան, որովհետեւ կան այնպիսի «պարագաներ որոց մէջ իր գործածութիւնը դատապարտելի չէ բնաւ։ «Գործաւոր մը որ ամբողջ օրը առ «ժանելի յօգնութիւններու ենթարկուած է, սիտփանք մը ու երջանկու թիւն մը կը զգայ երեկոյին իր «քնտանեկան բոյնին մէջ 1-2 բիր «ծխելով։ Նաեւ արգիլելու չէ այն «պանդուխտին որ իր ծննդավայրէն, «ընտանիքէն ու սիրելիներէն բաժ-



«նուած՝ միայնակ նստած կը մը-  
 «տածէ ու մեղմելու համար իր տա-  
 «ժանելի կարօտը՝ պէտք կը զգայ 1-2  
 «հատ ծխելու» : Բրոֆ. Պուշտուտի  
 այս ներողամիտ ու մարդասէր հո-  
 զածութիւնը մեզի պէս զգայուն ու  
 փափկասիրտ(?) պանդուխտներու հա-  
 մար չէ անշուշտ, որ կը մտնանք  
 մեր ընտանիքը, մեր սիրելիները :  
 Իսկ Բրոֆ. Սէ կ'ըսէր թէ «Չափաւոր  
 կերպով ու պէտքի առեն ծխելն ու-  
 զեղային զրգուով, գործունէութիւն  
 յառաջ կը բերէ եւ կը դիւրացնէ  
 մտաւոր աշխատութիւնը : Նոյնը կը  
 հաստատեն շատ մը մտքով աշխա-  
 տող մարդիկ :

Իրաւ կը տեսնենք թէ մեծ հան-  
 ճարներ, բարձր տաղանդներ, որք  
 10-15 ժամ անընդհատ կը փակուին  
 իրենց աշխատութեան սենեակներուն  
 կամ լապտաղուտներուն մէջ, որք  
 չորաչար կերպով կը տքնին լուծելու  
 համար կնճռոտ հարցեր կամ պար-  
 զելու քնութեան ծոցը թաղուած  
 գաղանիքներ, իրաւունք եւ պէտք

ունին քանի մը հատ ծխելով՝ զրգիւ  
 տալու իրենց ուղեղին եւ պայծա-  
 ուացնելու մտքերնին :

Բացի կէօթէէ — որ ոչ միայն  
 չէր ծխեր, այլ նոյն իսկ չէր կրնար  
 համոզուիլ թէ հանճարեղ մարդ մը  
 ինչպէս կը հանդուրժէր ծխելու գա-  
 դափարին — Ֆրանսայի, Անգլիոյ,  
 Գերմանիոյ մեծահամբաւ բրօֆէսէօս  
 ներէն, դասատուներէն, իմաստասէր-  
 ներէն, վիպասան, զրագէտ, բա-  
 նաստեղծ մտքերէն շատերն իրենց  
 աշխատութեան առեն անհրաժեշտ  
 պէտք մը կը զգան ծխելու» :



## Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ծուխն ու օդը . — Պելթ օդերիու-  
թարան Մ. Տէրիտէր կ'ըսէ թէ կարելի  
է օդին վիճակը գուշակել, ծուխին  
ուղղութիւնը գիտելով: Եւ որովհե-  
տեւ շատ գործարաններ կան իր բնա-  
կած երկրին մէջ, եւ պելթիական  
ածուխն ալ շատ ծուխ կ'արտադրէ,  
Մ. Տէրիտէր դիւրաւ կրցաւ կարգ մը  
չահեկան զննութիւններ կատարել:  
Այսպէս՝ հաստատած է որ անձրեւ  
կամ փոթորիկ կ'ելնէ երբ ծուխը վար  
կ'իջնէ, շուրջ 40 աստիճանի անկիւն  
մը ձեւացնելով: Եթէ ծուխը հորի-  
զոնական ուղղութեան հետեւի, ատի-  
կա նշան է թէ բաւական երկար  
ատեն անձրեւ պիտի գայ, իսկ ընդ-  
հակառակն, երբ ծուխը շիբջիտակ  
վեր կ'ելնէ, օդը գեղեցիկ կ'ըլլայ:  
Անշուշտ հովը մեծ գեր կը կատարէ  
ծուխին հետեւած ուղղութեան մէջ:

բայց դարձեալ այս ալ յայտարար  
նշան մը կ'ըլլայ օդին վիճակին: Երբ  
ծուխին ծայրերն անորոշ ըլլան, ըսել  
է թէ չոր օդ մը պիտի ունենանք,  
իսկ ընդհակառակն եթէ որոշապէս  
երեւին, այդ ալ կը նշանակէ թէ  
օդը խոնաւ է առաւել կամ նուազ  
կերպով: Դիւրին է Մ. Տէրիտէրի  
ըսածներն ստուգել, պայմանաւ որ  
ծուխն որոշապէս տեսնուի:

Նոր մոլորակներ . — Հայտելպէր-  
կի մտաւիայ աստեղագաշխական մէկ  
դիտարանէն, լուսանկարի միջոցաւ  
առնուած երկնային պատկերներուն  
մէջ հինգ նոր մոլորակի գոյութիւնն  
հաստատուած է, որոց փայլունու-  
թիւնը ԺԲ. եւ ԺԳ. մեծութեան  
մէջ է:

Ոսկիե տուն մը . — Քուրատոյի  
(Միացեալ Նահանգաց) կառավարու-  
թիւնը մտադիր է իր ծախքով ոսկիէ  
տուն մը շինել 1904ին ի Սէն Լուի  
բացուած արուեստահանդէսին հա-

մար : Ուաշինկոյնի գանձային պաշտօնարանը դիւրութիւն պիտի ընծայէ այս ծրագրին գործադրմանը՝ 18,000 քիլոկրամ ծանրութեամբ եւ 50 միլիոն ֆր. արժողութեամբ ոսկի ձողեր տալով : Ոսկեառուներ Միացեալ Նահանգաց հանրային շէնքերէն մէկուն օրինակին վրայ պիտի շինուի , զանազան մեծութեամբ սոկիի գունդերով պիտի յօրինուի , մէկ տոննայէ մինչեւ ազիւսի մը խոշորութեամբ :

Կենդանեաց իմացականութիւնը . — Ո՞վ կը մտածէր թէ մուկն ալ ապագային պաշար կը հաւաքէ մըրջիւնին պէս , բայց մտիկ ըրէք . Փրանսացի նշանաւոր գիտուն մը հետեւեալ դէպքը պատմեց Նադիւռ գիտական շարաթաթերթին խմբագրապետ Մ. Հանրի տը Բարվիլի , որ անցած է դիւզի մէջ ունեցած իր տունին մէջ : Իր պարտիզպանը կախի 250 սոխ տնկած էր պարտէզին մէջ : Հետեւեալ առտուն , քանի մը սոխ ալ ուզելով տնկել , տեսաւ որ

նախորդ տնկածներէն հաս մը իսկ չէ մնացած : Զարմացաւ մնաց խեղճ պարտիզպանն այս անհասկնալի անուկընկալին ի տես :

— Նայէ , պարտէզին մէջ մուկի ծակ կա՞յ , ըսուեցաւ իրեն :

Փնտռեց , գտաւ , եւ քիչ մը փորելով հողը՝ տեսաւ մուկ մը , որ ձգնելու վրայ էր :

— Փորէ՛ , փորէ՛ , ըսին իրեն :

Փորելով , պարտիզպանը սենեակ մը գտաւ չոր խոտով ու յարդով զարդարուն , որ տեսակ մը նրբանցքով միացած էր խանութի նմանող երկու ուրիշ մասերու հետ , ուր իրարու վրայ զիջուած կը կենային առջի օր տնկուած 250 սոխերը : Անաղարա կեցեր էին , ու հաս մը իսկ պակաս չէր : Զարմանալի է որ մէկ մուկ կրցած էր գիշերուան մը մէջ կրել այս բոլոր սոխերը , առանց հեռք մը իսկ ձգելու իր ետին , եւ եթէ հարկ չըլլար նոր սոխեր ալ տնկելու , տարակոյս չկայ որ երբեք չպիտի գիացուեր թէ մուկ

մը գողցեր է բոլոր կահաչի սոխերը, եւ, իբր գող խեղճ պարտիզպանը պիտի բռնուեր: Շատ բաներ պատմուած էին մինչեւ հիմա սա գարշելի անասունին վրայ, բայց այս վերջինը պտակը կ'ըլլայ բոլոր իր շահատակութիւններուն:

Նոր գիււս . — Ահա Հերցեան ալիքներու գործածման մէկ եղանակն ալ լուսանկարչութեան մէջ: Մ. Մարքոնի նոր գիււտ մը ըրաւ. փորձերը կատարուեցան ինքերկայութեան անզը երեսփոխան Մր. Հէրմէյըր Հիթընի, որ ըսաւ թէ այս գիււտն աշխարհիս ամենէն զարմանալի բանն է. Մարգոց եւ գինուորներու լուսանկարն առնուեցաւ կատարեալ յտակութեամբ՝ քսան մղոն հեռուէն, շնորհիւ Հերցեան ալիքներուն: Գիտութիւնն հետզհետէ ապշեցուցիչ կը դառնայ: Խելայեղիչ անդունդներ կը բանայ մեր առջեւ, ուր կը կորսուին բոլոր մեր տրամարանական ծանօթութիւնները:

Սէն Լուիի Արուեստահանդէսը . — Նորոհմանի fursku մը . — Մ. Նահանգաց Եկրագործական նախարարութեան պաշտօնատար Մր. Ո. Հ. Սքէյմէն ի Սէն Լուի մեծ քարաէսի մը շինութեան սկսաւ: Երկու հեքղար եւ 40 ար. (այսինքն՝ քսան եւ չորս հազար (24,000) քառ. մէդր) սեղ պիտի գրաւէ եւ ամերիկեան նահանգներու սահմանները արահետներով պիտի որոշէ: Ամէն Նահանգի մէջ՝ յոյն Նահանգին յատուկ բոյսերը պիտի տեսնուին, Հարաւային Նահանգներուն մէջ պիտի դանուին բրինձ, բամբակ, ծխախոտ եւ շաքարեղեգ: Ֆլորիտայի մէջ պիտի երեւին նայնջենի եւ անանաս, եւ կեդրոնական նահանգներու մէջ՝ եգիպտացորեն ու ցորեն: Ամրոզը քարաէսին շուրջը պիտի քաշուի 1 մ. 50 լայն ճամբայ մը՝ շուրջը մարգագետինով, որ ինքն ալ 1 մ. 50 լայնք պիտի ունենայ: Քարաէսին ամէն մէկ բթաչափը Մ. Նահանգաց 5 մղոն  $\frac{5}{8}$  մասը պիտի ներ-

կայացնէ : Այս հսկայ քարաէսին շուրջ, որ մօտակայ բլուրներէն պիտի տեսնուի, յատուկ ցուցադրութիւններ պիտի ըլլան դաշտերու հունձքերուն եւ պարաէզներու հիւանդութեանց, բոյսերու մշակութեանց եւ նոր բոյսեր յառաջ բերելու եղանակին, աւազուտ հողերը շարժելէ արգիլելու համար՝ անոնց վրայ տընկուելիք բոյսերուն, հունձքերու շրջանին (հունտ, ելն.), բժշկական եւ թունաւոր բոյսերու : Ասոնցմէ զապիտի գանուի նաեւ տիպար պարտէզ մը :

—

Ի ծնէ կոյրերը պիտի տեսնենք . — Մեծ գիւտ մը ? — Բրոֆ. Բեդեր Սզիէնս մեծագէտ կ'ըրապեցնէ Ֆրանսայի բժշկական աշխարհը՝ իր գիւտովն որով կ'ըսէ թէ ո՛չ միայն ետքէն կուրցածները, այլ եւ ի ծնէ կոյրերը կարող պիտի ըլլան տեսնել Տոքդ. Քազ փորձի ենթարկուեցաւ աչքերն ազէկ մը կապելէն ետքը : Մութ սենեկի մը մէջ, աչքերն ամ-

բափակ, բան չէր տեսներ, երբ Բրոֆէսէօրը լուցկիով լամբար մը վառեց, որուն լոյսը չէր տեսներ Տոքդօրը, բայց յետոյ Բրոֆէսէօրը նորահնար գործիքը Տոքդօրին ականջին տարաւ, որ նախ անորոշ լոյս մը նշմարեց, յետոյ իր աչքին առջեւ ձեռք մը տեսաւ երեք մատը վեր առած, յետոյ լոյսն աւելի պայծառացաւ, եւ Տոքդօրը տեսաւ սենեկին մէջի բոլոր առարկաները : Ելեկարական թեթեւ հոսանք մը զգաց իր ականջին մօտ, եւ երբ գործիքն անդին տարուեցաւ, ինք նորէն մութի մէջ յաղուեցաւ : Բրոֆէսէօրը կ'ըսէ թէ մարդ ո՛չ թէ աչքով այլ ուղեղով կը տեսնէ, աչքն առարկաներուն պատկերը միայն կ'անդրադարձնէ, կոյրերն հպուժով ճշտիւ կ'ըմբռնեն, եւ երբ մարդ աչքէ զրկուած ըլլայ, ուրիշ գործարան մը անոր պաշտօնը կը կատարէ աւելի խնամքով, Ուրեմն, եթէ ըլլայ անանկ գործիք մը որ առարկաներու պատկերը փոխանցէ ուղեղին՝ առանց

աչքին գործակցութեան, կոյրն ալ պիտի կրնայ տեսնել: Ինք առարկայից պատկերներն ելեկտրականութեան օգնութեամբ ուղղակի պիտի զրկէ ուղեղին: Հետեւապէս, իր գործիքն հեռաձայնի (թէլեֆօնի) հետ նոյն գիտական գրութեան վրայ հիմնուած է, առարկայից պատկերին եւ լոյսին թէլեֆօնը պիտի բլլայ ուղեղին համար, բայց առ այժմ իր գիտին մանրամասնութիւններն իրեն կը վերադառնէ: Բարիցի եւ ուրիշ մայրաքողաքներու ակնաբոյժք սգեւորութեամբ կը վիճին այս յայտնութեանց վրայ, բայց ասինն ձեռնհաս գիտնականք թերահաւատութիւն կը ցուցնեն, եւ ուսանք կը հերքեն ալ:

Նոր գոհար մը. — կը ճանչնա՞ք Քունզիդը: Ո՛չ, հաւանաբար: Ամերիկայի մէջ օրուան նորաձեւութեան նոր գոհարն է: Նիւ Իօրքի եւ Շիկաքոյի միլիոնատէրներն ու վայելչատէր տիւիւններն իրարու ձեռքէ կը խլեն նոր գոհարին հազուագիւտ

նմոյշները, ախով ոսկի տարով, Այս թանկագին քարը, ամիս մը առաջ գտնուեցաւ Քալիֆօրնիոյ լեռներուն ստորոտը, գիտնական-հանքարան Տօքօ Քունզիդի կողմէ, եւ անոր անունը ստացաւ: Ոչ մէկ թանկագին քարի կը նմանի, բայց իր արտասովոր փայլով աղաւանդի, եւ իր ծրածանի եւ յարափոփոխ շողիւններով արեւակնի (օքալ) բնութիւնն ունի:

Ի Կովկաս. — Ռուս եւ Հայ ճարտարագէտներն այս օրերս սքանչելի գործ մը ի գլուխ հանեցին Կովկասի մէջ: Կասպից ծովուն քով մեծ լիճ մը կայ, որուն տակի հողին նաւթաբեր ըլլալը զիտեր էին Հայ արուեստագէտներ, Պաքուի եւ Մոսկուայի դրամատէրներ միանալով, ընկերութիւն մը կազմեցին, եւ Կասպիցարութեան առաջարկեցին թէ իրենք այն լիճը պիտի ցամքեցնեն, եւ անոր տակէն նաւթ պիտի հանեն, պայմանաւ որ այս կերպով

շահուելիք հողին կէսն իրենց ըլլայ նաւթ հանելու համար, կէսը՝ Տէրութեան: Մ. Վիդդէ եւ Պետական կաշուածներու նախարարութիւնն հաւանեցան այս կարգադրութեան: Ընկերութիւնը գործի սկսաւ հինգ միլիոն ռուբլ. դրամագլխով, Լիճէն մինչեւ Կասպից ծով 15 քիլոմէրը երկայնքով ջրանց մը շինուեցաւ, որուն իրրեւ  $3\frac{1}{2}$  քիլոմէրը գետնի տակէ կ'երթայ: Միայն ջրանցին պեղումին համար 800 հազար ռուսլ ծախք գնաց: Աշխատութիւնք վերջացան Սեպտ. 28ին: Որոշուեցաւ հանդիսաւոր արարողութեամբ մը բանալ լիճին փակոցները, ջուրերը թող տալու համար Կասպից ծովին մէջ: Օր առաջ լսուած ըլլալով, խուռն բազմութիւնն եկած էր: Լիճին եւ ծովին եզերքները զարդարուած էին գոյնզգոյն դրօշներով, եւ ջրանցին բոլոր երկայնքին վրայ յաղթական կամարներ կառուցուած էին: Կը նախագահէր Պաքուի կառավարիչ Մ. Օտինցով, շուրջն ունենալով քաղա-

քային եւ ղինուորական պաշտօնէութիւնները, եւ մեծ թուով Պազախներ խումբ խումբ կը շրջէին ամէն կողմ՝ բարեկարգութիւնը պահպանելու: Պաքուի եւ Պաշախանի թուր մեծ ու պզտիկ նաւթարաններուն անօրէններն ու կառավարիչներն ալ եկեր էին: Ռուս կղերն օրհնեց ջրանցը, որմէ ետքը Պաքուի կառավարիչն իր ձեռօք շարժեց ելեկտրական կոճակ մը, որով ջուրին երեսին վրայ ելաւ տախտակեայ խոշոր դուռ մը, եւ խօկոյն լիճին ջուրերն անեղ որոտոււով մը խուժել սկսան դէպ ի Կասպից ծով: Ջուրերուն վազքը պահ մը դիտելէ ետքը, ներկայք հրախրուեցան ընկերութեան տաղաւորը, ուր ճոխ սեղան մը տըրուեցաւ:

—

Պերլինի Գիտութեանց Ակադեմիային ներկայացուեցաւ շահեկան տեղեկագիր մը հոչակաւոր աստուածաբան Բրոքի. Հարնաքի կողմէ, Դամասկոսի կամարի մը մէջ երեւան

հանուած հնագիտական թուղթերուն վրայ : Գերման Բրոֆ. Փօն Լօզըն այն տեղն այցելով, իմացած էր որ երեք փոքր կամարներէն միոյն ներքեւ քրիստոնէական կրօնի թանկագին թուղթեր պահուած կան, եւ արտօնութիւն ձեռք ձգեց զանոնք քննելու համար : Երկտասարդ գիտնական Տօքդ. Վիօլէդ Դամասկոս զրկուեցաւ յիշեալ թուղթերը քննելու : Ինն ամիս աշխատեցաւ, եւ ժամանակի մը համար իրեն յանձնուեցան անոնք, գերման կառավարութիւնն ինք խոստանալով որ զանոնք վերադարձնել պիտի աայ : Տօքդ. Վիօլէդ ձեռագիրները կարգի դրաւ լեզուներուն եւ գրուած ժամանակներուն համեմատ : Ամենէն վերջին թուղթերը Խաչակիրներուն ժամանակէն են, ըստ որովհետեւ Խաչակիրներն երբեք հոն չգացին, հակառակ բանակն այս թուղթերը գտած եւ դրած պէտք է ըլլայ հոն : Նախ, կան լատիներէն գրուածները, շատ մը աղօթքներ ու սաղմոսներ,

զանազան ծանօթութիւններով, Գեղեցիկ նմոյշ մըն է Պօսուէն Ե. Թագաւորին տուած անցագիրը վաճառականի մը : Յրանսերէն հին թուղթերուն պարունակութեան վրայ Բրոֆ Լօպլըր ի մօտոյ զեկոյց մը պիտի ընէ : Երբայական գրականութեան բազում նմոյշներ կան այս թղթոց մէջ, Բրոֆ Վէրթ ձեռնարկեց կարգի դնել զանոնք՝ ըստ տեսակին : Այս գրուածք աշխարհական նիւթերու վրայ են, ահուսնական պայմանագրեր, երև. կան նաեւ սինակոկայի ժամերգութիւններ, եւ Հին կաթողիկոսներ, Յոյժ շահեկան կը սեպուին Սամարացոց լեզուով գրուածները, որոց մին է օրացոյց մը : Ասով կ'ապացուցուի թէ Սամարացիներու հասարակութիւն մը կար Դամասկոսի մէջ, Բայց ուրիշ սեւէ լ'ըսէ գրուածներէ աւելի շատուոր են հայերէն կրօնական գրուածները, զորոնք կրցաւ քակել եւ կարդալ Բրոֆ. Տօքդ. Ծանշեղեան : Քանի մը վրացերէն նամակներ ալ



կան, բայց դեռ կարելի չեղաւ զանոնք կարգաւ, եզրագրասցի լեզուով ալ կան մի քանի կտորներ: Գլխաւոր քրիստոնէական հատուածներն աւելորդ է ըսել թէ ասորական եւ յունական գրականութեան հատակատորներ են: Բրոֆ. Չախան ասորերէնները քննեց, բայց այնքան չահեկան չգտաւ: Յիսուսի ժամանակի Պաղեստինի Արամային տաւերով ու լեզուով հատուածներ կան Հին կտակարանէն ու Աւետարաններէն: Ս. Պօղոսի նամակներէն առնուած կտորներն եզական են, որովհետեւ Արամային Սուրբական լեզուով անոնց գրուածը ցարդ ձեռք անցած չէր: Յայտնի է թէ ասիկա ճիշտ այն լեզուն է որով կը կարծուի թէ կը խօսէր նոյն ինքն Յիսուս: Յիշեալ Դամասկեան կամարին մէջ խնամով պահուած բոլոր այս հնագիտական գանձեր երեւան կը բերեն քաղաքակրթութեան տարրեր շրջաններ, եւ յոյժ բեղմնուոր անցեալ մը կը պատկերացնեն զխառնականին եւ ուսու՛մ

նասէրին առջեւ: Անոնց հրատարակման անհամբեր կը սպասուի ամէն իմացական կեդրոններու մէջ:

Թուղթիւն պատմութեան վրայ նոր գիւետք. — Վիեննայի ծանօթ Բրոֆ. Տոքթ. Վիզնէր անցեալները Լոնտոն հրատարուած էր տեղւոյն թանգարանին մէջ զանուած շինական մէկ քանի ձեռագիրներ քննելու համար: Բրոֆ. Վիզնէր այն ատեն ձեռագիրները կարդալով տեսաւ որ թուղթի հնարիչները Չինացիք եղած են, եւ ոչ թէ Արաբացիք. ինչպէս կը կարծուէր ցարդ ընդհանրապէս: Այսօրերս ալ Բրիտանական-հնդկական կառավարութիւնը նորագիւտ 4 ձեռագիրներ զրկեց Բրոֆ. Վիզնէրի քննութեան համար: Այդ ձեռագիրները վերջերս արեւելեան Ասիոյ հին քաղաքակրթութեան մասին խուզարկութիւններ կատարող ընդհանուր անցարացի Տոքթ. Արէլ Շոյայն գտած է արեւելեան Թուրքաստանի մէջ, Բրոֆ. Վիզնէր քննելով զանոնք հետեւեալ տեղե-

կութիւնները տուաւ Վիեննայի Գիտութեանց Ակադեմիային : Այս ձեռագիրներէն երեքն արեւելեան Թուրքաստանի եւ միւս երրորդն ալ Դիպեղական ձեռագիր է : Այս նորագիւտ ձեռագիրներէն յայտնապէս կ'երեւի թէ ի սկզբան Չինացիք շինած են թուղթը՝ առնկերու մանրաթելերը գզուած քուրջերու հետ խառնելով : Դիպելի է որ նոյն ինքն Չինացիք նաչիճ գործածած են թուղթը օժելու համար : Կ'երեւի թէ նախ եւ առաջ թուղթը շատ կակուղ եւ թոյլ ըլլալուն ճենադեղով միայն կ'արելի էր գրել անոր վրայ : Սովորական մեղանով գրելու համար նախ դաճ գործածեր են ապա մորձեր են ժելադինով օժել թուղթը . ապա նաչիճի մէջ թաթխել որոշոճ են եւ վերջապէս նպատակայարմար դասեր են ստիճով օժել զայն : Արարները Չինացիներէն սովորելով թղթաչինութիւնը . ապա սկսեր են նաչիճով ամբողջել թուղթին խտրը : Այս նորագիւտ ձեռագիրները սա առաւել

լութիւնն ալ ունին որ թուագրուած են , եւ մեր ժամանակագրութեան հաշուով Ըրդ դարու կը պատկանին : Այդ թուականին , թուղթի գործածութիւնը սովորական բան չընէր Չինացուց քով :

Եգիպտական նորագիւտ պապիրուսներ . — Բրիտանական Թանգարանի տեսուչներուն մտերս հրատարակած տեղեկագրութիւնը կը ցուցնէ թէ ինչ դարմանալի առատութեամբ գիւտեր տակաւին կ'ըլլան Եգիպտոսի մէջ : Տէյուսի մէջ գտնուած նոր պապիրուսներու վերաբերեալ տեղեկագրութեան մէջ կը յիշուին հետեւեալ գրական երկերը թէպէտ թերի , զոր օրինակ , Դեմոսթենէսի երեք բանաստեղծութիւնները . Պլատոնի եւ Ն. Ք. երրորդ դարու մէջ ապրող ծանօթ եւ անձանօթ Յոյն մատենագիրներու քանի մը փիլիսոփայական գրուածները : Նաեւ Ադրիանոս Կայսեր առաւձնական մէկ նամակը . Դիոզղեաթանոսի մէկ հրովարտակը

որ Յունարէն լեզուին մէջ ամենէն հին պապիրոսն է . կորսուած Յունարէն թատերաստի մը բեկորը . Հոմերոսի բանաստեղծութիւններէն բեկորներ . ուրիշ պապիրոս մը որ Իդիակասին ԺԳ. եւ ԺԴ. Գիրքերէն 700 տող կը պարունակէ . Գրական այս գանձարանին վերին խաւը միայն փոխադրուած է ցարդ : Ուրիշ շատ հետաքրքրաշարժ վերջին մէկ գիւտն է գրեթէ ամբողջ պատմութիւնը Յոյն-Եգիպտական պապիրոսի վրայ գրուած . Հերովդէս Ագրիպպասի , Գործոց Գրքին մէջ յիշուած Հրէից թագաւորին դէմ դատաւարութեան մը որ անցի ունեցած է Կղզիոս Կայսեր առջեւ . Դատաստագներն են Աղեքսանդրացի երկու երեսի շահահրէականներ , Բզիտոսոս եւ Լամիո : Այս երկու անձինք, որ մահուան դատապարտուած էին Կալիգուլա Կայսեր օրով , իրենց յոռի ընթացքներուն համար , ժամանակ չաճելու համար ամբաստանութիւն մը ներկայացուցած էին Ագրիպպասի

դէմ . բայց Կայսրը վերահաստատեց անոնց դէմ տրուած վճիռը եւ հրամայեց սպաննել զանոնք : Յիշեալ պապիրոսը կը պարունակէ անոնց դատաւարութեան պաշտօնական նկարագրութիւնը , եւ անոնց պատասխաններուն հեզնական ընթացքը կ'արդարացնէ այս երկու մարդոց վրայ Փիլոն Հրեային կարգացած սաստիկ դատապարտութիւնը : Մ. Թէոտոս Բայնաս այս նիւթին վրայ թուղթ մը ներկայացուցած է Գաղիոյ Արձանագրութեաց Ակագեմիոսին :



ՀԱԶԱՐԶԻՆԳԶԱՐԻՒՐԱՄԵԱԿ

ՀԱՅ ԱԼՓԱՐԵՏԱՅ ԳԻՒՏԻՆ




Ռուսահայք գեղեցիկ գաղափարը յղացան տօնելու մեծ դարաշրջան մը որ մօտ է լրանալու Հայոց նշանագիրներու գիւտին հազարհինգհարիւրամեայ դարադարձը, 1904ին շքեղ հանդիսութեամբ, ինչպէս կարելի է ակնկալել Ս. Էջմիածնէն հազորդուած տեղեկութիւններէն, եթէ սքանչելիք մը չէր ըստ աւանդութեան, ինչպէս ըսած են այլեր, ինքնին սքանչելի էր գիւտը, երկնային անսպառ շնորհ մը, զոր աստուածային նախասնամութիւնը պարգեւեց ի ձեռն Մեծին Մերտոպայ : Այդ մեծասքանչ գիւտին կը պարտինք մեր Եկեկեցւոյ պահպանութիւնն ու մեր լեզուին գոյութիւնը, տասնեւհինգ դարերէ ի վեր : Ս. Սահակ Պարթեւ, Մեծին Ներ-

սէսի որդին, երբ Հայոց կաթողիկոս եղաւ 399ին, Մերտոպ աշխարհական ուսանող մըն էր տակաւին : Վարդան անուն հողագործի մը որդին, որ նախապէս քարտուղար-թարգմանի պաշտօն վարեց, եւ այս առթիւ ծանօթանալով Ս. Հայրապետին՝ վարդապետ ձեռնադրուեցաւ եւ բոլորանուէր պաշտօնեայ մը եղաւ Հայ. Եկեղեցւոյ : Սահակ եւ Մերտոպ, ճիշդ հազար հինգ հարիւր տարի առաջ այսօր, սկսած էին խորհրդակցիլ մեծ գիւտին հնարաւորութեան վրայ, որպէս զի Հայերէն լեզուով կարելի ըլլար Ս. Գիրքը տարածել ամենուրեք ուր որ կար Հայ ժողովուրդ, եւ Քրիստոնէութիւնը անխախտ պահել ազգին բոլոր խաւերուն մէջ, ինչ որ շատ դժուարին եւ յաճախ իսկ անհնար կ'ըլլար թարգման-քարոզչութեան միջոցաւ : Եւ վերջապէս աշխարհական բազկի օգնութեամբ՝ 404ին ձեռք բերին Գանիէլեան նշանագիրները, զորս իբր երկու տարի փորձեցին ստուցանել

Ս. Էջմիածնի Բաղաքին մէջ յատկապէս հաւաքուած պատանիներու, առանց յաջողութեան, վասն զի Դանիէլեան նշանագիրք անբաւական էին հայերէն սիւղորաները (վանկ) հեգել տարու, եւ կարելի չէր ըլլար այդ նշանագիրներով Հայերէն կարգալ գրել սորվիլ անսխալ: Այս առաջին անյաջող փորձէն առանց վհատելու, որովհետեւ հայերէն ընթերցանութեան եւ գրչութեան հարկը անհրաժեշտ եղած էր այլեւս, Մեսրոպ խումբ մը աշակերտներու հետ ելաւ զնաց Ասորիք, եւ զանոնք տեղափոխելէ յետոյ այլեւայլ դպրոցներու մէջ, որպէս զի յունարէն եւ ասորերէն սորվին, ինքք զիմեց Սամուսատ քաղաքը Հռոփանոս անուն գրչին, որ համբաւեալ վարպետ մրն էր Հելլեններէն լեզուի: Հոն աչքի առջեւ ունենալով Յունարէն եւ Ասորերէն այբուբանները, Մեսրոպ եւ Հռոփանոս միարան գործակցութեամբ գաղափարեցին հայ նշանագիրները, «զնրբագոյնան, զկարճն եւ զերկայնն,

զառանձինն եւ զիրկնաւոր միանգամայն յօրինեալ եւ յանկուցեալ» ինչպէս կ'ըսէ Կորիւն: Անմիջապէս Ս. Մեսրոպ դարձաւ Էջմիածին, Սողոմոնի Առակաց գիրքը իրրեւ փորձ թարգմանելէ յետոյ, իրեն հետ բերելով Հայոց լեզուն երեսուն' եւ վեց գիրերը, Կորիւն, ժամանակակից եւ անշուշտ սկանառես մատենագիր, կ'աւանդէ թէ Մեսրոպ անպատում զուարթութեամբ կր գանար կուգար Միջագետքէն Ս. Էջմիածին՝ բերելով Հայերէն անթերի արժարեաքը, որչափ չէր ուրախացած թերեւս Մովսէս մարգարէ, երբ Տասնարանեայ Պատուիրանքն ի ձեռին կ'իջէր Սինա լեռնէն վարս Որովհետեւ, կր յարէ Կորիւն, սքանչելի գիւտին լուրր նախապէս հասած էր Էջմիածին, փառաւոր բնդունելութիւն մը եղաւ Ս. Մեսրոպայ, Ռահ գետակին եզերը. ուր զիմա որելու գացած էին աշխարհական անձնաւորութիւնք, նոյն ինքն Ս. Սահակ Հայրապետ, իր բարձրաստիճան կղե-

րին հետ, եւ ամբոյս ժողովրդեան :  
 Կաթողիկոսին հրամանաւ, մտաւ որ  
 Զատկական ասը, 406ի Զատիկը  
 հաւանականարար, անպատկից ցըն-  
 ծութեամբ կատարեցին Ս. Էջմիածնի  
 Քաղաքին մէջ :



### ՊՐՈՒՍՍՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՅՐ



ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍ-  
 ՏՈՍԻ եւ անհասանելի կասօքն Աս-  
 սուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթո-  
 ղիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն  
 Պատրիարք համազգական նախամե-  
 ծար Աքոռոյ առաքելական Մայր Ե-  
 կեղեցոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմի-  
 աճնի :

Մեծայարգ ամուսնոց Տէր և Տի-  
 կին Գրիգորի և Մարիամու Բաղ-  
 տասարեանց, վաստակաւոր մշակաց

յանդաստանի ազգային կրթութեան,  
 հարազատ որդւոց Մայր Աթոռոյս,  
 նուիրեմք ողջոյն աիրաւանդ հան-  
 դերձ Հայրապետական օրհնութեամբ  
 Մխիթարութեամբ սրաի հաւաստի  
 եղաք, եթէ ի ներկայիս բոլորի երես-  
 նամեայ շրջան հաստատութեան որ-  
 բանոց վարժարանի ձերոյ, շրջան որ  
 արդիւնք է բաղմամեայ անդուլ ջա-  
 նից և աննկուն վաստակոց պատուա-  
 կան ամուլացդ Բաղտասարեանց, և  
 որ իրաւամբ ակնկալէ այսօր արդար  
 հատուցման և արժանաւորն իրա-  
 խուսանաց : Որդեակք սիրելիք,  
 որքան զժուարին և ծանրատար հա-  
 մարի վաստակն երկրագործին, յոր-  
 ժամ ընդ կիլիչ արեղակամբ քրտ-  
 նաթոր վաստակի, սակայն առաւե-  
 լապէս քաղցր և երջանիկ թուի՝  
 յորաժամ զարդիւնս վաստակոցն ժո-  
 ղովեալ ընդ միոյն տասնապատիկ  
 յաւելեալ տեսանէ, և եթէ վասն  
 առօրեայ պիտոյից և նիւթականին  
 այնքան են հրճուանք, սրջափ եւս  
 առաւել վասն վաստակոցն մտաւո-

բականին և բարոյականին են առաւելութիւնք : Գիտեմք զաշխատութիւնն ձեր երեսնամեայն , հաւաստի եմք և կրեալ դժուարութեանցն և զըկանացն , այլ յաւէտ մխիթարական զայն տեսանեմք , զի այսօր ի բոլորումն բոլորանուէր վաստակոցն բազմամեայ շրջանին , իրաւամբ պարծիք և սրդարութեամբ ակընկալէք հատուցմանն արժանեաց . սպա ուրեմն ընկալարուք ի սրբավայրէս զօրհնութիւնն Փրկչական , զոր ի կոնդակիս ծրարեալ թեւօք հողմոց ձեզ առաքէ ձերացեալ Հայրապետն Հայոց : Օրհնեսցին վաստակք ու աշխատութիւնք պատուական ամուլացդ օրհնութեամբ Երկնաւորին , ցօյեացի ողորմութիւն Բարձրելոյն իբրեւ զցօղ վաղորդենի ի վերայ օրհնեալ յարկի ձերոյ , որ յինքն պատուպարեաց և պատուպարէ զզաւակունս մեր և ընդ առօրեայ հացին և զբանն լուսոյ և կրթութեան մատակարարէ : Յնծացէք և ուրախ լերուք վարիչ ամուսինքդ

որբանոցիդ , զի վարձք ձեր բազում են յերկինս , զի որ խոստացաւ բաժակ մի ցուրտ ջրոյ մատուցանողին անմասն և անվարձ չթողուլ , նոյն և ինքն ունի վարձահատոյց ձեզ հանդիսանալ յաշխարհիս աստ և ի հանդերձելումն : Օրհնեսցին և պարգաբերք լիցին ջանք ջանասիրաց Որբանոցիդ , ուսուցչացն ասեմք , դաստիարակչաց և աշակերտելոցն , զի ի ժամանակիս անհրամեշտուեան լուսոյ և գիտութեան՝ աճեսցին նոքա և օգտակարք լիցին վասն կրթութեան կարօտ ազգիս :

Ողջ լինել ցանկամք ձեզ հաստատունք և յարատեւք յայդ Աստուածահաճոյ գործոյ , ընդ հովանեաւ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի առաքելապանծ Հայրապետի : Ամէն :

ՄԿՐՏԻԶ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ  
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 10 Յունիսի 1904 ամի (ՌՅԾԳ.)  
և ի Հայրապետութեան մերում  
ԺԱ. ամի, ի Մայր Ազոռ Ս. Էջմիածնի, Թ. 540:

# Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն



Հինգ օր ծովու վրայ  
Երկու խնձոր իբրև ուտելիք

Անգլ. «Էլինկէմիդ» շոգենաւր վեր-  
ջերս րնկղմեք է Ովկիանիոյ ջուրերը.  
Նոր Զեյթանաւայի ժօտ Նաւարեկու-  
թեան վայրը աւայի ըլլալով, կարելի  
չէ եղած շուտով օգնութիւն հասցը  
նել, եւ բաւական թուով ուղեւոր-  
ներ խզողներ են, աննկարագրելի  
խեղճութեան մէջ, Անգլիական շոգե-  
նաւ մը հինգշաբթի օր նաւարեկու-  
թեան վայրը երթալով, կէս օրէն  
վերջը լատտափայտ մը տեսեր է, 66  
մղոն հեռուն, Լատտը կիրակի առ-  
տուընէ ի վեր հոն քշուած է եղեր,  
եւ ողջ մնացողները, 16 հոգի, այդ  
տեսողութեան միջոցին իբրև ուտե-  
լիք երկու խնձոր միայն ունին եղեր.  
խնձորին մէկը երեքշաբթի օրը կե-  
րեր են, միւսն ալ չորեքշաբթի Եր-

կու խնձորը 16 կտորի բաժնուեր է,  
քանի որ 16 հոգի պիտի ուտէին.  
Աստուծէ Յը խենդեցեր են, աղի ջուր  
խմելով, եւ ինքզինքնին ծովը նե-  
տելով խզուեր են. ուրիշ 5 հոգի  
ալ անօթութենէ եւ ուժասպառու-  
թենէ մեռեր են, Ողջ մնացող 8 հո-  
գիին քաշած շորշարանքը սիրտ կը  
խշխշացնէ, Լատտափայտը, որ 12  
ոտք երկայն եւ 7 ոտք լայն էր,  
սոսկալի կերպով լեցուած եւ մինչեւ  
վերջը կէս մը ջուրին մէջ ծածկուած  
էր, Ընկղմած նաւը թողելէ վերջը,  
ողջ մնացողները փորձեր են Երեք  
Թագաւորներ կոչուած տեղը ցամաք  
ելլել, բայց չեն յաջողեր, Թիերէն  
մէկը կոտորեր է եւ լատտը հզօր հո-  
սանքին քմահաճոյքներուն ձգուեր  
է, Պահ մը նաւարեկեալները յուսա-  
հատական ջանքերով ժայտերուն մօ-  
տեցեր են բայց չեն կրցեր հասնիլ.  
իրենցմէ երեքը երկուշաբթի դիշեր  
մեռեր են, ինչպէս ըսինք, աղի ջուր  
խմելով, Զատնանք ըսել թէ ամենէն  
ահաեւր շորշարանքը ծարաւն էր:



Երեքշաբթի գիշեր նաւարեկեալները շոգենաւի մը լոյսը նշմարելով, քիչ մը յուսադրուեր են, եւ սկսեր են կատաղի կերպով օգնութիւն պօռալ: Կ'երեւայ թէ իրենց ճայնը լսուեր է: որովհետեւ շոգենաւը նաւակ մը իջեցուցեր է, որ լստտին կողմը ուղուիլ սկսեր է:

Բայց շատ չանցած երկրորդ եւ աւելի անգութ յուսահատութիւն մը յաջորդեր է ասոր. թէեւ մարդիկը կը շարունակէին իրենց բոլոր ձայնով պօռալ, բայց նաւակին մէջ գանձուողները չեն լսեր, եւ ետ դարձեր են: Յուսահատ նաւարեկեալները իրենց բաղդին ձգելով:

Չորեքշաբթի օրը 8 նաւարեկեալները յուսահատութեան վերջին աստիճանին հասած էին: Իրենցմէ մէկը անօթութեան աննշանքները մեղմացնելու համար իր թաշկինակը կ'ուտէր: Վերջին երկու մահերը տեղի ունեցան հինգշաբթի օրը, ազատարար շոգենաւին հասնելէն քանի մը ժամ առաջ:

Հաստին պզտիկութեան հետեւանքով, ամէն մարդու համար տեղ չկար պառկելու: ուստի մարդիկը ստիպուած էին կծկտած վիճակի մէջ նստիլ, իրենց սաքերը եւ մարմնին մէկ քանի մասերը ջուրին մէջ կախած: Նաւարեկեալները կը պատմեն թէ երբ իրենք ընկղմած շոգենաւին քովէն ազատեցան, թոնոներով պատուկ կը ծվար ջուրին երեսը, բայց իրենք միայն երկու խնձոր ձեռք ձր գեղին յուսալով որ քիչ ատենէն ցամաք պիտի հասնին:

Ուրիշ նաւակի մը մէջ ալ 40 հոգի կան եղեր: Այդ նաւակը մինչեւ այսօր չէ գտնուած: Կր վախճուի թէ մէջը գտնուողները ամէնքն ոլ խըղուած են:

Չուարճալի դաս մը. — Բրակայի դատարանին առջեւ տեղի ունեցաւ զուարճալի գատ մը, որոյ մէջ ամբաստանեալի դերը կը կատարէր շուն մը: Շան տէրը, որ վաճառական մըն էր, իր մէկ պաշտօնէին

կողմէ դասի քաշուած էր իրր պատասխանատու : Պաշտօնեան կը պընդէր թէ շունը խածած էր զինք եւ աշխատելու անկարող վիճակի մէջ դրուած ըլլալով հատուցում կը պահանջէր : Նաեւ կը պնդէր թէ այս շունը վտանգաւոր կենդանի մը ըլլալով պէտք էր սպաննել : Անասնաբոյժ մը կանչուելով դատուորներուն առջեւ ամէն փորձ րբաւ շունը զայրայնելու համար : Ի զուր Ծունը տեղէն չշարժեցաւ : Անձնական դատախազը խնդրեց որ անատունին տէրը դուրս ելնէ սրահէն : Այնպէս ալ եղաւ : Բայց «ամբաստանեալ»ին բարի տրամադրութիւնը չփոխուեցաւ : Բոլոր նախատինքներուն եւ գրգիռներուն կը պատասխանէր պոչը շարժելով եւ փոփոխակի մէկ կամ միւս թաթն երկնցնելով իրեն մօտեցողներուն : Վերջապէս գնաց նախագահին քով եւ քծնեցաւ : Ներկայք ծափահարեցին եւ շունը չահեցաւ դատը :

Մովային հրէե մը . — Նիւ Եորքի բնական պատմութեան թանգարանն այս օրերս ստացաւ անգամանելի պալենազգիի մը մէկ նմոյշը : Այս կենդանիին մարմինն գտնուեցաւ Փորզըտ Ռիվըրի (Նիւ Եորք) ձկնորսներուն կողմէ : Առ այժմ գիտուններուն ձեռք ինկած ստնաւորներուն ամենէն մեծն է : Ասոր համար է որ Նիւ Եորքի գիտնականք հիմա մեծ ցընձութեան մէջ են աշխարհիս ամենէն մեծ ստնաւորին կմախքն իրենց ձեռք իյնալուն համար : Կենդանիին վրայ փոքրիկ գաղափար մը տալու համար ըսենք թէ 20.70 մէգր երկայնութիւն ունի , մարմնոյն շրջագիծը 9 մէգր է , իսկ ծանրութիւնն աւելի քան 75,000 քիլոկրամ : Մինչեւ հիմա գտնուած է'ն մեծ կէտը 15-16 մէգր երկայնութիւն ունի եւ առ առաւելն 50-60 թոնօ կը կշռէ : Կենդանաւորական ճիւղին պետ Մր. Պոււրս կ'ըսէ թէ յիսուն հոգի զիւրաւ կրնան կենալ այս ահարկու կենդանիին ներսիզին :

Յւայի խնձոր . — Սէյան կղզիի բուսական հետաքրքրութեանց մէջ կ'երեւի խնձոր մը , որ բնիկ մողովուրդին կարծեօք , մեր նախամօր ակոսաներուն գրոյմը կը պահէ եղեր՝ Մանն ալ կը կոչուի Յւայի խնձորենին : Ծաղիկը կը բուրէ հաճելի հոտ մը , բայց պտուղը մասնաւոր համագամանք մը ունի . շատ ազուր է , կեղիւր նարնջագոյն եւ միւր բոսորագոյն է : Կարծես թէ ակոսայի չարուած մը փրցուցած է իւրաքանհիւր խնձորի մէկ մասը : Խնձորն արգարեւ սիրտ խոռոնող հանգամանքներ ունի , որք անխոհեմ ուտողի մը կրնան գէշ խաղ մը խաղալ :

## ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ



### ՇԵՐԱՄԱՌՈՒԾԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

1. Շերամին որդը սքանչելիք մ'է . ամենիմաստ Արարչին զլուխ գործոցներէն մին : Ունի զլուխ , բերան , երկու ծամելիք , մետաքս շինելու գործարան , 12 աչք , 4 սեւ մահիկներ կոնակին վրայ , փաթթոց մը զլիսուն վրայ , արուինը սեւ իսկ էգինը բաց գոյնով : 12 օղակ կուրծքին վրայ . որոց 3ը անտեսանելի աչաց եւ 9ը անտեսելի եւ 16 թաթիկներ :

2. Որդին բերնէն մինչեւ սրբանը ստամոքս է , որ նեղ կ'սկսի եւ կը լայննայ մինչեւ վարի ծայրը . հոս երկու պարկիկներ կը կազմէ . առաջինին մէջ ծիրտ կը գոյանայ եւ երկրորդին մէջ սոյն ծիրտ կը կարծրանայ :

3. Որդին աղիքները մաշկով .

թաղանդով պատած են . թաղանդին եւ ազիքին մէջտեղ արիւնը չբջան կ'ընէ . առաջին խաւին — մորթափոխումին — արիւնը յտակ , բաց գոյն ունի . վերջի խաւին մէջ դեղին է :

4. Եերամբ մարմնոյն իւրաքանչիւր կողմ 9 շնչածակ ունի , ընդամէջը 18 հատ , որոց միջոցով կը ներշնչէ թթուածին եւ կ'արտաշնչէ ամխածին :

5. Ազիքը կ'արտադրէ հեղուկ մը որ ջարդուած տերեւները կը լուծէ , երբ մորթին եւ ստամոքսին կծկումներով մարսողութեան գործողութիւն կը կատարուի :

6. Կատարեալ մարսողութեան համար կը պահանջուի ՕԴԻ ՄՍՒՔՐՈՒԹԻԻՒՆ , ՕԴԻ ԶԵՐՄՈՒԹԻԻՒՆ (ըստ հաստատեալ օրինաց) եւ ՕԴԻ ԶՈՐՈՒԹԻԻՒՆ :

7. Եերամարոյծին երեք ոսկեղէն կանոններն եւ պարտաւորիչ օրէնքներն են այս երեք . որոց միայն մէկ հասին անհոգ գտնուելով ան-

պատճառ հիւանդութեան կ'ենթարկէ այս ամենատարակ անասնիկը :

8. Տասն եւ ութ շնչածակերէն շերամբ առած անունդին աւելորդ մասը դուրս կ'արտաքսէ , իսկ անոր կարծր մասը սրբանէն :

9 Իւրաքանչիւր մէկ քիլո տերեւ կը պարունակէ 970 կրամ հեղուկ եւ 30 կրամ չոր նիւթ , ուստի 8 կրամ սերմէ ելած որդերուն կերած տերեւը 1000 քիլօէն աւելի ջուր կը պարունակէ , այսքան ջուր միջատին մարմինը կ'արտաքսէ , ալ կրնաս խորհիլ թէ շերամատունը ո՞րքան օդաւէտ ըլլալու է որ խոնաութեան հետքն իսկ չմնայ :

10. Ուստի շերամատունը հետեւեալ յատկութիւններ ունենալու է . դիրքը հրօթս-հարաւ . ունենալու է ձեղուն . հրօթս-հարաւի կողմի պատուհանները եւ օդամուտները ծածկուած ըլլալու են կափարիչով եւ նուրբ կտաւով , բարեխառնութիւնը կանոնաւորելու եւ մաղած օդ տալու համար . երկու ծխներսյգ-վա-

աւրան մին հիւս. մին հար. կողմը . սեղանները երկու կարգ շարելու է , շուրջանակի եւ մէջտեղերը անցքերով , առանց պատերուն պաշելու . ձեղունին ալ դաշելու չեն սեղանները , ցախէ խրճիթները պատահաններուն եւ օգամուտներուն դիմացը շինելու է : Պէտք է 135 խորանարդ մէթրօ տեղ 30 կրամ հունարի համար եւ 75-80 մէթրօ սեղան :

11. Առողջ որդերն հետեւեալ նշաններէն կը ճանչցուին . — մարթի կծկում , կղկղանքի կարծրութիւն , արիւնի անսշութիւն ոչ թթու ոչ աղի , — ասոնք շերամաբոյժին սակեղէն կանտին գործադրումէն կախում ունին . օդ , այս է գաղանիք , դոցէ 18 օդածակերն շերամին , որ ոչ ներչնչէ եւ արտաչնչէ , խերը տես շերամին , կը հիւանդանայ , կը սատկի :

12. Հիւանդութեան պատճառ կ'ըլլայ նաեւ շատ խիտ — սրգ — մէկդմէկու վրայ դիզել որդերը . նորէն օդն է հոս բուն խնդիր . քանզի որդերը իրարու գաշելով 18 օդածա-

կեր կը գոցուին եւ հետեւանք կ'ըլլայ մահ :

13. Նոյնպէս նաեւ խոնաւութիւնը հիւանդութեան եւ մահի պատճառ կ'ըլլայ . խոնաւ օդը միջառին կծկուիլը կ'արգիլէ , ասով մարտդութիւնը կը խանգարի եւ արտաչնչութիւնը կը դադրի : Օդէ եւ պէտք եղած բարեխառնութիւնէ զրկելով որդը չկրնար մարսել , թունաւոր նիւթեր չէ կարող արտաքսել , ասոնք մարմինին մէջ կը մնան , արեան մէջ մուտ կը գտնան , անոր հետ շրջան կ'ընեն եւ կը թունաւորեն որդը , որոյ հետեւանքը հիւանդութիւն եւ մահ կ'ըլլայ :

14. Ուստի շերամաբոյժը պարտի խորշիլ ամէն հիւանդութիւն պատճառող ընթացքէ . շերամատուններն ալ այնպէս շինելու եւ կարգադրելու են որ հիւանդութեանց դիմադրելու կարող ըլլան : Ուստի հետեւեալ կանոններուն գործադրութիւն հարկ է :

Ա. Շերամատան ծաւալը բոտ օրինի քանի՞ կրամ հունտ բանալու

արտօնութիւն կու տայ . նախ այս ստուգէ եւ անկէ աւելի մի բանար :

Բ. Շերամատունը պէտք է մաքուր ըլլայ , զերծ եւ ազատ ամէն խոնաւութենէ եւ յարմար բաւակա . նաչափ օդ ընդունելու :

Գ. Որդերգանուած ատեն շերամատան մէջ թաց տերեւ ընաւ մի պահեր :

Դ. Ո եւ է զօրաւոր հոտ , ախորժեղի թէ անախորժ , մուտ չգանեն շերամատունէդ ներս :

Ե. Կրակարաններուն շատ խնամ տար , որ մի գուցէ անուխին հեղձուցիչ կազը վնասէ սրգերուն . մարդիկ իսկ կը մեռնին ձանկարդին պատճառաւ :

Զ. Բարեխառնութիւնը միօրինակ պահէ . անձրեւ , հով , փոթորիկ չըլլայ որ շերամատան բարեխառնութիւնը խանգարեն — լջեցնեն կամ բարձրացնեն :

Է. Յօդով կամ անձրեւով թըրջած , խոնաւ տերեւներ մահ կը պատճառեն շերամին . նոյնպէս ծա-

ւէն կտրուելէ անմիջապէս յետոյ արուած տերեւները :

Ը. Շերամատունը օդի հոսանքի ընաւ մ'ենթարկէր :

Թ. Պատերը , ձեղունը , տախտակամածը մաքուր ըլլան . նախընթաց շերամարուծումէ մնացած ապականեալ , վարակեալ գործիքներ , սեղաններ , ամաններ ընաւ մի գործածէր . առանց զանոնք նախ հականխելու օրէնքին տրամադրած եղանակով :

Փ. Որդերը աղած ձուկի նման իրարու վրայ մի շարեր :

ՓԱ. Քանի որ որդերը դեռ մատղայ են , մատղաշ , վայրի տերեւներով կերակրէ . զգոյշ կեցիր խառք տերեւ տալէ :

ՓԲ. Հետու տեղէ պարկերով բերուած տերեւները կը տաքնան , կը բորբոսին , սրգերուն տալէ առաջ լաւ քննէ անոնց — տերեւներուն որպիսութիւն :

ՓԳ. Սեղանները — քէրէվէթները — անանկ զեւեղէ որ պատե-

րուն եւ ձեղունին չդպչին, որպէս զի մաքուր եւ բարեխառն օղը ազատ մուտք գտնէ ամէն կողմ:

ԺԴ. Եթէ հնար է շերամատունդ ձեղուն թող ունենայ, քանզի կըղ- մինտրներուն — քիրէմիտ — անմիջական ազդեցութիւն կա՛մ չափէ աւելի տաք եւ կա՛մ ցուրտ կ'ընէ շերամատուն:

ԺԵ. Լաւագոյն է շերամատան մէջ ծխնելոյզ-վառարան ունենալ, որով օղը կը մաքրուի: Եթէ չունին այս, օդափոխ ծակեր զետեղէ շերամատան ձեղունին մօտ:

Սոյն 15 օրէնքներուն ճշգիւ հետեւելով կրնաս վստահ ըլլալ որ աւտղ շերամ, ընտիր բոժոժ եւ առաա հունձք պիտի ունենաս: հակառակ պարագային գիտցիր որ տեսակ տեսակ հիւանդութիւններ ծագում պիտի առնեն: Աւելի լաւ է՝ արգիլել հիւանդութիւն, քան անոնց տեղի տալ անհոգութիւնով եւ ապա յոգնիլ, նեղուիլ, մտահոգ ըլլալ, յուզուիլ: Անզլ առածը կ'ըսէ. նա-

խաղաղութիւն լաւագոյն է քան բուժում: Այս է որդեգրելի թէ մարդու եւ թէ շերամի համար:

Երբ սակայն հիւանդութիւններ պատահին պէտք է զիտնալ թէ ի՛նչ ընելու է. ուստի ստորեւ պիտի տանք կարեւորագոյն հրահանգները:

1. Հունտը աւտղ պէտք է ըլլալ. այս է կենսական խնդիր. չափազանց երկար լուացում, կամ օդի եւ ջուրի բարեխառնութեան աստիճան եւ լուացումէ ետեւ հունտը զատուած տեղին խոնաւութիւնը հունտին վրայ գէշ կ'ազդեն:

2. Էն լաւ հունտերը սակայն կրնան աւրուիլ երբ թխուումի ատեն օղը յանկարծ փոփոխութիւն կը կրէ — տաքը ցուրտի կը փոխուի կամ հակառակը:

3. Ոմանք ալ անկողինի մէջ կամ ծոցը կը պահեն հունտերը որ արթնան. թէ ապականեալ օղը եւ թէ սերմերուն վրայէ վրայ դիզուած ըլլալը կ'աւրեն էն լաւ հունտը:

4. Երբ միջատները հաւկիթէն դուրս են ելած օդը չափազանց տաք կամ չոր կամ գոլորչիով լեցուած ըլլալով կը մնասուն որդերը :

5. Ասոնք եւ ասոնց նման ուրիշ ապօրինութիւններ ծագում կուտան էն սկիզբէն հիւանդութիւններու, մինչ եթէ ճշդիւ դործադրուէին պարզ օրէնքներ, 40-50 օրէն պատուական բերք մը պիտի ունենայիր :

Արդ հարկ է յայտարար նըշաններ ունենալ որոնցմով գիտնանք որդերուն հիւանդացած ըլլալը եւ ժամանակ չանցած պէտք եղած դարմանը ընենք . հոս գլխաւոր նշաններէն մի քանին կը ներկայացնենք :

Ա. Հունտին անկատար արթըննալը . լու հունտը 3-4 օրէն բոլորը որդի կը փոխուի, փոքր աննշան մնացորդով :

Բ. Առողջ որդերը սեւ կ'ըլլան, հիւանդները դեղնագոյն կամ կարմրապոյն :

Գ. Առաջին խաւէն — մորթափոխութիւն — սկսեալ հիւանդ որ-

դին մորթը թուումաձ կ'ըլլայ . հիւանդոտ որդը երկրորդ խաւին քիչ կ'ուտէ, չմարսէր, ծանր կը շարժի, տերեւներուն աակ կը ծածկուի, հագիւկը շարժի, դանդաղ է, չունի աշխոյժ, սեղանին եղբրքները կը հաւաքուն խմբովին :

Դ. Հիւանդ որդը գծուար կը փոխէ մորթը. եւ իւրաքանչիւր խաւի թիւերնին, ծաւալնին կը պակսի, ի վերջոյ ցախին վրայ կը կախուն, կը չորնան եւ ոստայնի — էօրիւն-ճէկ — նման բոժոժ կը շինեն :

Ե. Նշան է հիւանդութեան երրորդերուն մարմինը եւ ոտները փոքր, թուխ սեւ բիծերով կը ծածկուին :

Զ. Նշան է հիւանդութեան երրորդին աղոր փոխանակ սեւ եւ թանձր ըլլալու հողագոյն հեղուկ մ'է :

Է. Նշան է հիւանդութեան երր 11րդ օղախին փոքր եղջիւրը 3րդ եւ 4րդ խաւերուն մէջտեղ կը սեւնայ :

Ը. Եւ երբ բոժոժ շինուած է եւ քրիզալիթը — խուրմա — եւ յետոյ թիթեռնիկը թխադոյն, գրեթէ սեւ է



եւ կոնակիրն վրայ սեւ գիծ կայ, հիւ-  
ւանդ է եղեր շերամբ եւ հունտի ան-  
յարմար է, քանզի առողջ քրիզա-  
լիթը եւ թիթեանիկը սարթի — քէհ-  
րիպար — նման թափանցիկ գոյն  
կ'ունենայ :

Թ. Արիւնը երբ կծու եւ թթու  
է, հիւանդ է որզը, մինչեւ խկ եթէ  
մանրադէտը — միֆրուֆուպ — քօր-  
բիւսքիւլ — հիլոլէ — չցուցնէ :

Արդ այս արտանիշներէն ո՛ր եւ է  
մին նշմարուած ատեն պէտք է իս-  
կոյն նախազգուշական միջոցներու  
ձեռնարկել որ ամբողջ շերամատուն  
չվարակուի. ահա մի քանի օրէնք-  
ներ :

Ա. Շերամատունը մաքրել եւ  
հականեխել ըստ օրինի :

Բ. Թխուումի ատեն 18 աստիճան  
Բէօմիւրը  $2\frac{1}{2}$  սանթիկրատի բարձ-  
րացնել աստիճանաբար եւ այդ աս-  
տիտիճան պահել միշտ :

Գ. Շերամատունը պէտք է օդա-  
ւորել դռները եւ պատուհանները  
բանալով, պատուհաններուն անցը-

նելու է բարակ կտաւ որ օղը մաղ-  
ուի եւ օյի հոսանքը արգիլուի :

Դ. Որդերը ցանցառ — սէյրէկ  
— դրուելու են. անկողիններն —  
քիւնէ — ալ յաճախ փոխուելու են,  
յարատեւ մաքրութիւն :

Ե. Յրտութիւն միշտ վնասակար  
է որդերուն. 1-4րդ խաւին միջոցին  
ցրտութիւնը թէեւ միայն կը յապա-  
ղեցնէ որդերուն զարգացում եւ ըն-  
թացք, բայց 4րդ խաւէն ետեւ աղե-  
տաբեր կ'ըլլայ արգիւնք :

Զ. Ըսինք թէ եթէ օրինաւոր  
տաքութիւն չըլլայ որդերը չեն կրնար  
փոխել մորթերնին, կը չարչարուին  
եւ կը վնասուին, մարտողութիւննին  
ալ կը խանգարուի, սակայն ըստ  
որում 4րդ խաւէն ետեւ որդերը շատ  
աւելի տերեւ կ'ուտեն, ուստի մար-  
սելու համար աւելի կը կարօտին ջեր-  
մութեան եւ մաքուր օյի :

Վերոյիշեալները ընդհանուր հի-  
ւանդութեանց արտանիշները եւ  
նախազգուշութիւններն են, այժմ  
կուզանք մի քանի մասնաւոր հի-

ւանդութեանց աստանիշներուն ու նախազգուշութեանց :

1. Էն սոսկալին է Ֆլաշէրի կոչուածը , որ է շերավին հիւծախտը եւ ժանտախտը :

2. Ֆլաշէրին յառաջ կուգայ տաքը յանկարծ ցուրտի փոխելէ , անձրեւոտ , ցողոտ , խոնաւ տերեւ կերցնելէ , պարկով նեռաւոր տեղէ բերուած տաք եւ բորբոսած տերեւը ծառէննոր կտրուած տերեւ կերցնելէ , օդառութեան թերութիւններէ , օդի հոսանքէ , խոնաւութենէ եւ դժուարամարս տերեւներէ :

3. Ֆլաշէրի աստանիշներն են հետեւեալները . — որդերը ոչ կ'ուտեն եւ ոչ կը շարժին , բերաննուն կանանչ հիւթ մը դուրս կ'ուտան . մարմինը կը թուլնայ . աղիքին առջեւի մասը չմարտուած տերեւով լեցուն է , մինչ միւս մասը դատարկ է . մարմինը կը հիւծի , երկուքի կը ծալուի , սեւորակ երեւոյթ մը կ'առնէ , բոժոժ կը շինէ թէև բայց ազատ ու բժուոր :

Ֆլաշէրի համար նախազգուշութիւններ .

Ա. Շերամատան նկատմամբ ինչ որ ըսուեցաւ ճշդիւ ի գործ դնել .

Բ. Միայն 24-48 ժամ առաջ հաւաքուած տերեւ կերցնել .

Գ. Եթէ հնար է մինչեւ Չրդ խաւ միայն վայրի թթենի տերեւ կերցնել .

Դ. Օդը մաքուր պահել . հոսանքէ զգոյշ կենալ . պատուհանները նուրբ կտաւով պաշտպանել .

Ե. Որդերը ցանցառ — սէյրէք — դնել :

Ուրիշ հիւանդութիւն մ'ալ կայ որ կրասէրի — սրտա — ուրիշ մ'ալ ժօնիսը — սարըլըգ — կը կոչուի . Ասոնց երկուքն ալ ֆլաշէրի պատճառներէն յառաջ կուգան , բայց մասնաւոր բարեխառնութեան յանկարծական փոփոխութիւն — տաքին ցուրտի փոխուիլը — պատճառ կըլլայ ասոր :

Կրասէրի աստանիշներն են . — Յրդ խաւէն ետեւ որդին մարմինը կը ճերմկի եւ կուռի եւ որդը ուտե-

լու եւ քնանալու հակամառութիւն չցուցնէր, եւ մարմինը հետզհետէ փայլուն կանանչագոյնի երեւոյթ ստանալով մածուցիկ հիւթ մը կարտաքսէ եւ կը մեռնի:

Ժօնիսը խաւերէն ո՛ր եւ է մէկուն վախճանին կը պատահի, որզը գլխէն մինչեւ պոչը կարծես թէ անդամալոյժ է. արիւնը չըջան չընէր եւ մինչ ասողջ վիճակի մէջ արիւնը, ինչպէս ըսինք, վճիտ բաց գոյն կ'ունենայ. այժմ կը դեղնի, կը պղտորի, երբեմն ալ կը սեւնայ:

Ասոնց համար նախազգուշութիւններն են մեղմ եւ կանոնաւոր բարեխառնութիւն եւ Ֆլաշէրիի նկատմամբ թեւադրուածներն անոնց մասին ալ գործադրել:

Ուրիշ հիւանդութիւն մը կը կոչուի Միւսքարաին — քիրէճ իլէթի — եւ կըլայ պատահական կամ վարակումով:

Պատահականը մաքուր շերամաան մը մէջ հրդ խաւէն ետեւ կ'սկսի, ցախելքէն մինչեւ բոժոժ չի-

նելու պահուն, վարակեալ շերամատան մէջ առաջին խաւէն կ'սկսի եւ կը ջնջէ սրգերը բոժոժ շինելէ առաջ:

Պատահական միւսքարաինը օգին տաքէ յանկարծ ցուրտի փոխուելէն եւ խոնաւութենէ կը ծագի. փոթորիկի ատեն տաք, ցուրտ եւ խոնաւութիւն կը միանան եւ այս հիւանդութիւն յառաջ կը բերեն:

Ախտանիշներն են, որդին մարմինը կը կարծրանայ, ճերմակ բորբոսով կը ծածկուի, փոշի կը գոյանայ, որ օդին մէջ կը ծածանի եւ մահ յառաջ կը բերէ: Միւսքարաին ունեցող շերամին բոժոժը սովորական բոժոժէն  $\frac{2}{3}$  նուազ կը կընէ:

Նախազգուշութիւնք. երբ օգը խոնաւ է, կրակարանին մէջ բոցավառ կրակ պահելու է, դուռ եւ պատուհան բանալու է, միայն հովի եւ փոթորիկի կողմ եղողներն բանալու չէ: Բարեխառնութիւնը հաւասար բռնել, գոնէ յանկարծական փոփոխութենէ զգույշ եղիր. հոս ալ Ֆլաշէրիի համար տրուած նախա-

զգուշական միջոցները գործադրել ւ  
 Գալով տարափոխիկ միւս-  
 քարտինի պէտք է գիանալ թէ նա  
 ծագում կ'առնէ առաջին խառնէն  
 սկսեալ, եթէ որդերը խիտ — սրգ —  
 դրուած ըլլան, անկողինները —  
 քիւնէ — թանձր ըլլալով օդ չընդու-  
 նին, որով խոնաւութիւն կը ափրէ  
 եւ այս ախտ կը ճարակի որդերուն  
 մէջ ։

Ախտանիշներն են. որդին պու-  
 չին վրայ տեսակ մը սուռկ —  
 մանթար — կը գոյանայ որ քանկ-  
 րէնի նման մինչեւ գլուխը կը տա-  
 րածուի եւ յետոյ կը մեռնի որդը ։

40. Նախազգուշութիւն. չերա-  
 մատուն եւ բոլոր կազմածներ հա-  
 կանեխել չմարած կիրի, սաճ եաղիի,  
 կամ քլօրիւր ար շօի միջոցով. պա-  
 տահական միւսքարտինի համար ըս-  
 ուածները հոս ալ գործադրել ։ Եթէ  
 հիւանդութիւն ծագի յայտնի է որ  
 լաւ չես հականեխած, ուստի տեղը  
 եւ բոլոր կազմածները փոխէ, ասով  
 ալ եթէ ախտը չկասի, այրէ վա-

րակեալ որդերը եւ նորէն հականեխէ  
 վերոյիջեալ հականեխակածներով լաւ  
 մը խոզանակելով ամէն կազմած ։  
 Շերամատան անկիւնները չմարած  
 կիրի զանգուածներ դիր ։

• • •

Ի վերջոյ երկու գիտողութիւններ  
 Ա. Խիտ կարեւոր է կանխաւ  
 ստուգել թէ Փլաչէրի կա՞յ չերամա-  
 տան մէջ. առ այս կը որդերը Յրդ  
 կամ աւելի լաւ կրդ քուն կը մտնեն,  
 առաջին արթնցողներէն առ 50 հաս  
 որդ. պատահանին առջեւ կանցնէ  
 եւ մի առ մի քնէ զմտնք լոյսին  
 բռնելով եւ քննելով անոնց թա-  
 փանցիութիւնը. երբ տեսնուի որ ա-  
 նոնց ստամոքսը լեցուն է բաց դե-  
 դին հիւթով մը. բարի նշան է. չկայ  
 Փլաչէրի, եւ պիտի լաջողիս. սակայն  
 երբ տեսնուի որ այդ 50 որդերուն  
 գոնէ կէսը կը պարունակէ թոխ,  
 կանանչ հիւթ մը ստամոքսին մէջ.  
 յայնժամ թափէ բոլոր որդերը, քանզի  
 ստոյգ է որ Փլաչէրի պիտի ծագի ։

այս փորձը ձրի է եւ շատ դիւրին . նաեւ անհնաստոյգ նշան Ֆլաչէրիի . եթէ չլթափես սարսափելի եւ գարշահոտ վիճակ պիտի ունենայ բոլոր շերամատուներ եւ մարդոց առողջութիւն իսկ վտանգէ :

Բ. Գածր — ալչր — աժան նրւթ մը . ասիկա նուրբ փոշի ընելով կը ցանեն անկողիններուն վրայ եւ յետոյ կը գնեն որդերը անոնց վրան . իւրաքանչիւր մորթափոխի կրկնէ այս գործողութիւն . միւս քարտիի ծագումը կ'արգիլէ այս . որով անկողինի յոճախ փոփոխում պէտք չըլլար . կը մաքրէ որդերուն շուրջի օդը . կ'ապանեխէ նաեւ որդերը , անձրեւէ խոնաւցած տերեւներուն գործածութիւնը ասով կարելի կ'ըլլայ առանց ո՛ր եւ է վտանգի . նաեւ աշխատութիւնը կը թեթեւցնէ :

Գ. ԼԽԱՒՈՐ ՊԱՅՄԱՆՔ

ՇԵՐԱՄԱՐՈՒԺԱԿԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՆ

1. Շերամարուժական բնախօսութիւնները քաջ գիտնալ եւ անդա-

մաղննութեանց վրայ ալ ծանօթութիւն մ'ունենալ :

2. Նախընտրել այն շերամատուները որոնք ընդհանուր շերամատուներէ հետի . լաւ դիրք . շոր ու բարեխառն կլիմայ ունեցող օդատուն եւ մաքուր տեղեր կատուցուած են :

3. Ընդհանուր շերամատուներէ հետի . շերամատան մօտիկ . օդատուն արեւդէմ բարեբեր հողի վրայ իրարմէ բոլորովին աճջատ անկուած եւ զօրաւոր տերեւ ունեցող թթաստաններու տերեւներն աւելի շերամարուծութեան սահմանել :

4. Բաժանումէ առաջ շերամատուն եւ կահ կարասիք մաքրել . լուանալ ու հակահիսել եւ բաժանման միջոցին գէթ ամէն խշախ մաքրելէ վերջ իւրաքանչիւր խորանարդ մէթրին երեք կրամ ծծումբով եւ փենական թթուի լուծումով հականել :

5. Բաժնուելիք հունար խիստ առողջ ու զօրաւոր եւ տերեւի . շերա-

մատան ու գործաւորի համեմատա-  
կան ընել: Թխաւմը, որդանց հաւա-  
սարութիւնը, ընդարձակութիւնը,  
օգափոխութիւնը, կերակուրի ժա-  
մանակը, ջերմութիւնը, խոնաւու-  
թիւնը ու խորխաթափութիւնը կա-  
նոնաւոր, ինչպէս նաեւ շերամատունը,  
բուժարանները ու ամէն կահ մաքուր  
եւ կեանքի տեսականութիւնն ու շե-  
րամատան խոնաւութիւնը չափաւոր  
ընել:

6 Այն մաքուր մութ կանաչ գոյ-  
նով գօրաւոր տերեւներն աւելի շե-  
րամներու իրր կեր յատկացնել որոց  
մէջ սեւցած, կարկուտէ եւ եղեամէ  
ուրուած խմորած, ջրուտ, խիստ  
կարծր տերեւներ ինչպէս նաեւ փոշի  
ու մանրէ չի գտնուի:

7 Հնտարուծութեան սահմանել  
այն լաւ հովահրուած խոզակները  
որոց մէջ Փշախ (Flacherie) բնաւ  
պատահած չէ, Դալխախ (Grasserie)  
եւ Կրախ (Muscardine) բնաւ կամ  
դէթ գօրաւոր պատահած չէ եւ  
Պղպեղախաւորներու (Pébrinée) հա-

մեմատութիւնը 5% էն պակաս է:

8. Հնտացու խոզակները շարել,  
լաւ հովահրուած, քիմիական կազ  
կամ ո եւ է հոտ չգտնուած տեղեր  
կախել եւ թիթեռնիկներու չափաւոր  
զուգաւորութեամբ բջիջային հնտա-  
բուծութիւնը ընել:

9. Խիստ կարեւորութիւն տալ  
մանրագիտակային գննութեան, վե-  
րաքննութեան (controle), մանրագի-  
տակային գերընտրութեան, քանի մը  
տարին անգամ մը խառնածնութիւն,  
պատրաստուած առողջ հունտերու  
լուսնալու, մաքրութեան, հովա-  
հրութեան, ձեռնելու եւ յառաջի-  
կային թիւսման կանոնաւորութեան:

10. Վերջապէս շերամարուծու-  
թենէ կատարելապէս օգտուելու հա-  
մար հունար փտահեղիէն գնել եւ  
հնտավաճառութեան մէջ ուղղամտու-  
թիւններու ճշգրտութիւնը սկզբունք  
ընդունիլ:

Խարբերոյ

ԱՐՄԵՆԱԿ

—

ՄԵՏԱՔՍԻ ԳՈՒՆԱՒՈՐՈՒՄԸ  
ՇԵՐԱՄԻ ՄԷՋ

Ցարդ տեսնուած էր եւ ունինք շաքարագոյն, դեղին, ճերմակ եւ ստեւագոյն (ճեպէ քիւյն) խողակներ սրք մետաքսի փոխուած ատեն հազիւ փոփոխութիւն մը կ'ընեն գոյներու : Պրանտայի մէջ երկու փորձ քիմիագէտներ, Լըվա եւ Քօնի, յոյժ հետաքրքրական նորագոյն փորձերը բաժն են շերամի սրդին մէջ իսկ մետաքսը գունաւորելու՝ անոնց սնունդին վրայ արհեստական թթուներու ներգործութեամբ, այն է՝ գունաւոր նիւթերով ներկելով անոնց սնունդն եղող թութի տերեւը, զոր գունաւորած են մասնաւոր թթուաւ կարմիրով եւ կապոյտով, եւ այս փորձերուն ենթարկուած որդերը նախ կարմիր, մարմինն ի սկզբան դաւաւորք եւ ապա կարմիր ու կապոյտ գոյնով մետաքս արտադրեր են : Փորձագէտներու ըսածին նայելով ձեռք բերուած սոյն գունաւորումները լուացումի ալ կ'ըլմանան, որով

կրնան օգտակար փորձերու ենթարկուիլ : Մասնաւոր սնունդով եղած գունաւորումի նախկին փնտառութենին ալ նմանօրինակ գիտական ճամբու մ'ուզուած ըլլալով փորձի ենթարկուած են :

ՄԵՂՈՒԱՔՈՒԾՈՒԹԻՒՆ

Մեղուարուծութեան Ռուսիոյ մէջ տուած արդիւնքներուն վրայ հետեւեալը կը գրեն Տփղիսէ. — «Մեղուարուծութեան մասին հաւաքուած վիճակագրական տեղեկութիւններէց երեւում է, որ Եւրոպական Ռուսիայում մեղուարուծութեամբ պարագում են ընդամենը 328 417 հոգի : Փեթակների ընդհանուր թիւն է 3,627,177 հատ, որոնցից 13 առ հարիւրն է միայն կատարելագործուած : Մի փեթակը ապիս է միջին թուով 12.81 ֆունտ մեղր եւ 2.27 ֆունտ մոմ, իսկ ընդհանուր առմամբ կայսրութեան մէջ փեթակներից ստացւում է 1,639,472 պուդ մեղր եւ 289,944 պուդ մոմ : Մեղրի ընդհա-

նոր արժէքը կազմում է մօտ  $8\frac{1}{2}$  միլիոն ռուբլի, իսկ մօտինը  $5\frac{1}{4}$  միլիոն ռուբլից աւելի: Մեղըւարու-ծութիւնից Յարսպական Ռուսիայում եկամուտ ստացւում է ընդհանուր առմամբ 13 822.213 ռուբլի, որ աւել է թէ իւրաքանչիւր փեթակը աւելի է 2 ռ. 70 կ. եկամուտ:

**ԹՐԹՈՒՐՆԵՐԸ ՈՉՆՉԱՅՆԵԼՈՒ  
Մ Ի Ձ Ո Ց**

Այգեպաններն անշուշտ կը փափաքին իրենց արամադրութեան տակ ունենալ գեղ մը որուն չնորհիւ կարենան այդ անտանելի թրթուրները ոչնչացնել: Ահաւսիկ գեղ մը, որու պատրաստութիւնը պարզ, աժան եւ գործածութիւնն ալ դիրին է:

Նախ լեզի վարունգը ձեծելով կը փոշիացնեն, եւ կը խառնեն ձթած ձէթին, ու վրան կ'աւելցնեն խայժ-դանը՝ ամէնը մէկէն խնամով կը ձեծեն մինչեւ որ լաւ մը իրարու յարին: Այսպէս պատրաստուելէն վելջը որթատունկերու կոճղերուն վրայ կը

քսեն: Երբ թրթուրը մօտենայ, բազադրութեան հօտէն իսկոյն կը մահանայ: Ահաւսիկ բազադրութեան շափերը՝ լեզի վարունգ 25 տրամ, խայժ զան 1 քաչ, ձթած ձէթ 5 քաչ:

Այս քանակութիւնը բաւական է 100 որթատունկի համար, որու ծախքն ալ մեծ բան մը չէ: Եթէ ձթած ձէթին, կամ ձէթի դիրաին քաչը առ առաւելի 4 դրչ. ենթադրենք, եւ 1 քաչ խայժ զանն ալ 1 դրչ. 25 տրամ, լեզի վարունգն ալ նոյնպէս 1 դրչ. պիտի ունենանք 100 որթատունկի համար 22 դրչ. ծախք մը:

Ղ. Բ.





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ

- |     |   |      |    |
|-----|---|------|----|
| 1.  | Առողջ, երջանիկ և երկար կեանք, սպառած  |      |    |
| 2.  | Առաջնորդ Ամուսնացելոց   | »    |    |
| 3.  | Ասպար կենաց   | »    |    |
| 4.  | Հասպտեր Ծնողաց  | Դնկ. | 4  |
| 5.  | Աշնան Տերեւներ, Բ. Տիպ  | »    | 4  |
| 6.  | Սրբազան Պատմ. տաղաչափեալ. պատկերագարդ. սպառած                                   |      |    |
| 7.  | Կեանք Տէր Յիսուսի, տաղաչափեալ. պատկերագարդ                                      | »    | 4  |
| 8.  | Կեանք Սրբոց Առաքելոց, տաղաչափեալ. պատկերագարդ                                   | »    | 4  |
| 9.  | Մայրիկին Առաջնորդը  | »    | 4  |
| 10. | Ոսկեղէն Բանալի Անդդ. լեզուի, Գ. Տիպ (տեսակին մէջ եզական) վկայած է ՏոբՍ Է. Բիրս. | »    | 15 |
| 11. | Ուղեցոյց Ս. Գիրք ընթերցողաց. պատկերագարդ  | »    | 5  |
| 12. | Ընդարձակ Օրացոյց, 320 էջ  | »    | 3  |
| 13. | Պարզ Օրացոյց յաւելուածով 128 էջ   | »    | 1  |
| 14. | Բեճրբաշն Ղեկավարը, յուզիչ պատմութիւն.   |      |    |
| 15. | Հարցարան Ս. Գրոց. պատկերագարդ. մամոյ տակ.                                       |      |    |

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Բժիշկ. — Կը ցաւիմ ըսել, տիկին, որ ձեր ամուսինին վրայ վրդովիչ նշաններ կը տեսնեմ:

Տիկին. — Ա՛խ, ի՞նչ կ'ըսէք տոբթոր:

Բժիշկ. — Այո՛, տեսէք, ձեռքերուն վրայ կարմիր, կանաչ, դեղին գիծեր կան, քօնսօլթօ պէտք է, հիւանդին վիճակը ծանր է:

Տիկին. — Բայց տոբթոր էֆէնտի, ամուսինս ներկարար է և այդ նշանները միշտ ունի:

Բժիշկ. — Անտ՛նկ է... մնաք բարով:

Տոբթոր. — Ա՛, այսօր երէկու ընէ աւելի աղէկ կը հազաք:

Հիւանդը. — Հարկաւ, քանի որ բոլոր գիշերը հազալու վարժութիւն ըրի:

Տիկին . — Երախան լուացած ատենդ միշտ ջերմաչափ զործածէ :

Ապաստուհի . — Հարկ չէ , տիկին , երբ ջուրը տաք ըլլայ՝ տղան կաս կարմիր կ'ըլլայ , իսկ երբ պաղ ըլլայ՝ կաս կապոյտ :

Մայր . — Օննիկ , կարկանդակին կտորը ի՞նչ եղաւ :

Օճճիկ . — Պզտիկ տղու մը տուի , որ շատ անօթի էր :

Մայր . — Ապրիս , տղաս , բայց օ՞վ էր ան տղան :

Օճճիկ . — Ես : —

Արեւելեան Բրուսիոյ մէջ ծխախոտի գործածութիւնը դեռ ծանօթ չէր : Դուքս մը գիւղացիի մը պատահեցաւ , որ սայլին վրայ նրստած գիւղ կ'երթար : Դուսքը խնդրեց գիւղացիէն որ սայլը նստի . գիւղացին հաճեցաւ . դուքսը տեղաւորուելէ ետեւ սիկառ մը հանեց դրպանէն , վառեց լուցկիով , և սկսաւ քիթէն , բերնէն ծուխի ամ-

պեր դուրս արձակել : Ասի մեծ զարմանք ու երկիւղ պատճառեց գիւղացիին : Դուքսը սայլէն վար իջնելով դրպանէն ուրիշ սիկառ մը հանեց , վառեց և գիւղացիին մատոյց իբր վարձատրութիւն :

Շատ շնորհակալ եմ , պարոն սատանայ , գոչեց գիւղացին սարսափահար , ես կրակ չեմ կրնար ուտել , ներեցէք տէր սատանայ :

Յոյն քեթեւօյիկ մը եւ հրեայ հրեալաւառ մը . — Յոյն քրոնիկագիր մը կը պատմէ թէ Յոյն պճնամոլ երիտասարդ մը Տ. որուն փողկապները տարիներու անդարմանելի եղծումը կրած էին , բաւական ատենէ ի վեր կը բաղձար 2 - 3 մէծիտ ձեռք անցունել , նորոգելու համար անոնց չարքը , որովհետեւ քանի մը սրահներու մէջ սկսած էին պաղ ընդունելութիւն ընել իրեն , գլխաւորաբար իր հնոտի փողկապին պատճառաւ , ուստի իր պճնասէրի համբաւը չկորսնցնելու համար պէտք էր բան

մը ընել : Երեք մէծիտով յաջողութեան ամբողջ ապագայ մը պիտի փրկուէր ստոյգ խորտակումէ մը : Վաթսո՛ւն զրուշ , այո , ջնջին բան էր , բայց ժւսկից գանել : Ասոր վրայ կը խորհէր , երբ իր պատուհաններուն տակ բարձրացաւ աղաղակ մը , եսկիյէր աշայլն : Ոչ մէկ համբարուի (սիրէնատ) անոյ ձայնն այնքան հեշտայի տպաւորութիւն պիտի չընէր իր սրտին վրայ որքան ըրաւ հին ցնցոտիներու մօրուեղ վաճառորդին աղաղակը : Պիտի կանչէր գայն , երբ յանկարծ վարանոտ , փոխեց միաքը , վասն զի վերջապէս ծախելու համար բան մը ունենայու էր : Արդ , իր երկու քօսթիւմներէն մին , լաւագոյնը վրան հագած էր , և երկրորդը . . . : Մհ , շատ վարպետորդի ըլլալու էր մարդ որ կարենար այդ հնոտիով քանի մը զրշ . կորզել ամենէն նուազ վարպետորդի հրեայ ցնցահաւաքէն , բայց չմոռնանք թէ կեանքի մեծ պարագաները հանձարեղ յղացումներու ընդունակ կ'ընեն

մարդուս միաքը : Եւ մեր թեթեւսօլիին այս պահուս հանձարեղ պաղափար մը ունեցաւ : Ծուտ մը մաշած քօսթիւմին գրպանը խօթեց հին դրամապանակ մը , զոր չմոռցաւ լեցնել քանի մը օտար պղինձ դրամներով և խաղու դրամանիշերով , և կանչեց զայն : Երբ հրեան քօսթիւմը տեսաւ , ամեն կողմ դարձրնելով հանդերձ , քիթը բերանը ծումրակեց : Էայց երիտասարդը չի վհատեցաւ , այլ սպասեց որ մօրուեղ վարպետորդին իր մտաներուն տակ զգայ գրպանին մէջ մոտցուած գանձին կլորութիւնը : Վերջապէս ցնցոտահաւաքին ձեռքին տենդոտ այլ աննշմարելի շարժումէն հասկցաւ թէ հնալվաճառն հոտն առած էր դրամին : Եւ այն ատեն պատահեցաւ բան մը որ Աշխարհի և «Էսկիլէրալայրմճի»ներուն ստեղծումէն ի վեր տեսնուած չէր : Հրեան հինուովն լաթերը պարկը նետեց և քսակը քակելով պահանջուած 3 մէծիտին փոխարէն 10 Քր.նոց մը հանեց : Սա

կարկուտ թիւնը կ'ընդունեցաւ : Հրեան իր կարծեցեալ գանձը շալկելով քայլերը փութացուց , մինչ մեր պճնամուրը շունչը կ'առնէր նորաձեւութեանց մօտադոյն վաճառանոցն ու հոյակապ բլաթրոն մը և 2-3 փողկապ կ'ընտրէր ի գին 40 դրշ : Դեռ 7 1/2 դրշ . կը մնար , որով կըրնար քանի մը գաւաթ գարեջուր կոնծել զբօսավայրի մէջ , ցուցադրելով իր փողկապներուն գեղեցկագոյնը : Դրամարկոյն առջեւ գնաց 10 ֆր.նոցն երկնցուց և . . . քիչ մնաց սլիտի իյնար մարէր : 10 ֆր.նոցը կեղծ էր իր խաղանիշերուն պէս :

Սասանան եւ կեսուրք . — Պատերաշի Օպրըլէտիփուր գիւղին բնակիչները ժամանակէ մը ի վեր կը հաւատային թէ այդ գիւղին տուներէն մէկուն մէջ սատանայ կը բնակի : Այդ տան տէրն երեք անգամ ամուսնացած էր . առաջին կինը սատանային շարունակ երեւման պատճառաւ բաժնուեցաւ ա-

մուսնէն . երկրորդ կինը մեռաւ տրվարերքի ատեն , զարհուրելի սատանայէն , որ երկրորդ կնոջ ալ երեցաւ յաճախ : Այս երրորդ կինը վերջերս հիւանդ պառկած էր երբ սատանան վերտախն երեւելով զրամուզեց իրմէ : Կինը սոսկալով ցոյց տուաւ դարակն որուն մէջ պահած էր դրամը : Սատանան զրամն առնելով աներեւութացաւ : Յաջորդօրը հիւանդ կինը , որ առանձին էր տան մէջ , զգուշութեան համար զաղտնապէս բիր մը պահեց անկողնոյն քով : Սատանան այդ օր ալ ցոյց տուաւ իր եղջիւրներն և դարձեալ զրամ ուզեց : Բայց արիասիրտ կինը անկողնէն դուրս ցատկելով , պահած բիրովը լաւ մը հարուածեց սատանան , որ գետին իյնալով շնորհ խնդրեց : Կինը սատանային եղջիւրներն ու սեւ պոչը մէկդի բնելով , իր 60 ամեայ կեսուրն երեւան ելաւ տակէն : Հիմա սատանան հիւանդ պառկած է իր կերած ձեծէն :

# Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

## ՅՈՒՑԱԿ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՒՏԵՐՈՒ

Յ. Տ.

- 400 Բառլինոս Եպի Նօլա զանգակի գործածութիւն եկեղեցիներու :
- 996 Աբրա Ժէպպէն անուակոր ժամացոյց :
- 1010 Կիտո տ'Արէցցո դաշնակ :
- 1181 Շարարագործութիւն յԵւրոպա :
- 1285 Սալվինօ տէլ Արմատի, ակնոց :
- 1302 Ֆլավիօ ձիօյօ տ'Ամալֆի կողմնացոյց :
- 1317 Սալվիուս Արմաթօ, հասարակ ակնոց :
- 1318 Պէրժօյտ Շվարձ, վառօթ :
- 1316 Առաջին Սնդանօթ Կրէսիի, պատերազմին մէջ :
- 1400 Փայտի վրայ փորագրութիւն :
- 1436 Կուժէնպէրկ, տպագրութիւն :
- 1450 Ռօպէրթ Ի'իւսթ, պղինձի վրայ փորագրութիւն :
- 1455 Կուժէնպէրկ, առաջին Ս. Գիրք կը տպէի ՇՅրասպուրկի :
- 1460 ԲոժիօմոնՅանուս, տասնորդական կոտորակ :
- 1492 Գոլոմպոս կը գտնէ Ամերիկա :
- 1500 Բիէն Հէնլայն, գրպանի ժամացոյց :
- 1506 Կոպէրնիկոս, արեգակային դրութիւն :

- 1558 Հէրնանտէզ, ծխախոտ կը բերէ :
- 1561 Պարպարա ՈւՅման, ժանեակ-տանձէլա :
- 1586 Ֆրանսիզ Տրէյք, Ամերիկայէն բաժանէս կը բերէ :
- 1590 Եանսէն, միքրոսքոբ :
- 1602 Գալիլէոս, ճօճանակին և մարմիններու անկման օրէնքը :
- 1605 Գորնէլիոս Տրէպպլը, ջերմաչափ :
- 1609 Բէփլըր, մոլորակներուն շարժման օրէնքը :
- 1609 Գալիլէոս, աստեղագիտական առաջին դիտակը :
- 1614 Նէրիէր օվ Մէրլիսթըն Լօկարիժմ :
- 1619 Հարվի, արեան շրջան :
- 1629 Տէսքարթ, լոյսի բեկանում :
- 1630 Գալիլէոս աստեղագիտական դիտակ :
- 1643 Թորիչէլլի, ծանրաչափ :
- 1647 Հէվէլիուս առաջին քարտէս լուսնի :
- 1665 Կրաֆիթէ կապարգրի, Անգլիոյ մէջ :
- 1672 ՕՊՊօ տը Կէրիբէ, Եւրոպական մեքենայ :
- 1675 Բիքառ, միջօրէից չափը :
- 1682 Նէւտօն, ծանրութեան օրէնք :
- 1693 Լէովընհօք, արեան մասնիկները :
- 1700 Գրիգորեան օրացոյցի ընդունելութիւն :
- 1714 Միլլ, գրելու մեքենայ :
- 1730 Կրէֆ, ծառերու պատուաստ :
- 1738 Ջանիարագութիւն, Բարիզի Ակադէմեան :
- 1750 ՆունՅուսման, ձուլայոյ պողպատ :
- 1752 Ֆրանքլին, ջանժարդէլ :
- 1769 Ուաթ, շոգեշարժ մեքենայ :
- 1774 Բրիսթլի և Շէլլէ ՊՊուածին :
- 1778 Էճընուորթ, երկաթուղի :

- 1782 Մոնկոլֆիէ եղբարք, օղապարիկ տաք օղով  
 1784 Քէյվընտիշ, շրածինս  
 1785 Բարձրայթ, ուտայնանկուծեան կազմած  
 (Թէզկեանն):
- 1789 Կալվանի, կալվանիզմ  
 1791 Լէյզան, սօտա  
 1794 Առաջին հեռագիր  
 1796 Ճէնըր, պատուատ ծաղկախտի  
 1796 Սէնէֆէլտըր, վիտագրուծիւնս  
 1796 Բարբըր, յիմէնթօ  
 1799 Տիտօ, շոգեշարժ մեքենայ թուղթ շինելու  
 համարս
- 1803 Ուայզ, պողպատ գրիչ  
 1803 Ուէնուտ և Տէյվի, լուսանկար  
 1805 Պրամա, ջրարաշխական մամուլ  
 1807 Ֆըլթըն, շոգենաւն  
 1810 Քէննիկ, արագատիպ մամուլ  
 1815 Ֆրանուէնհօֆըր, արեգական ճառագայթ-  
 ներուն գոյնը (?)
- 1816 Լամբատիուս, օղային կազով լուսաւորու-  
 ծիւնս
- 1817 Կապըլսպէրկ, սղաղորուծիւն  
 1817 Տրայզ, վէրսէբէտ  
 1818 Առաջին շոգենաւն Ատլանտեանէն  
 կ'անցնի
- 1820 Էօրսթէտ, էլէքթրօ-մակնէթիզմ  
 1821 Քէնթան, տասանորդական կշռորդ  
 1823 Շոգեշարժ մամուլ տպագրութեանս  
 1827 Առաջին երկաթուղի ի Գաղիա  
 1829 Սթեֆընսըն, վայրաշարժ  
 1833 Հայլման, ժանեակի մեքենայ

- 1833 Լուցկի ֆոսֆօրային, Մայըր — Մեծ հայր  
 Տիկին Պաղտասարեանի
- 1833 Կաուս և Վէյլըր, էլեքտրական հեռագիր  
 1837 Կալվանօրլասթիք  
 1839 Տակէրօթիքի առաջին լուսանկարը  
 1839 Տէյլի, նշանակաւոր հեռագիր  
 1845 Սթարթ, էլեքտրական լամբար  
 1847 Լուսանկար  
 1847 Եաքօպի, էլեքտրական լոյս  
 1850 Պուուտօն օղաչափ  
 1850 Ֆուբօլ, երկրի թաւալումս  
 1851 Սինկէր, կարի մեքենայ  
 1853 } Լիվինկսթըն, առաջին անգամ Ափրիկէն  
 1856 } կը խուզարկէ  
 1858 Ընդժովայ հեռագրամեյլ Բալէի և Տօլրի  
 մէջտեղ
- 1859 Քարիդի հորեր ի Բէնսիլվէնիա  
 1860 Լէնօար, կազով վայրաշարժ  
 1860 Բայս, թէլէֆօն  
 1875 «Չէնիթ» օղապարիկը 8600 մէթր կը  
 բարձրանայ
- 1875 Լուսանկարէ տպագրութեան կաղապար-  
 ներ շինելս
- 1877 Էտիսըն թէլէֆօնը կը բարեփոխէ  
 1878 Էտիսըն ֆոնօկրաֆի — ճայնագրութիւն —  
 1883 Քօխ կը գտնէ հնտախտին մանրէն  
 1888 Բասթօն սէրօմ կը գտնէ  
 1893 Հալման, էլեքտրաշարժ վայրաշարժ  
 1894 Պէրինկ և Ռու, սէրօմ տիֆօէրիի դէմ  
 1895 Լիմիէռ, Սինէմաթօկրաֆի  
 1895 Թուուվէ, ասէթէլինի կանթեղ

- 1896 Ռէժնիկըն, Ք. Ճառագայթ.  
 1896 Ծառ մը 145 վայրկեանի մէջ լրագրի կը վերածուի:  
 1896 Օթոմոպիներու կատարելագործում.  
 1897 Մարքոնի, անՊէլ հեռագիրի.  
 1897 Ընդծովեայ նաւերի.  
 1898 Օդին հեղուկ վիճակի փոխուիլը.  
 1898 Սանտո, ղէկաւոր օդապարիկի.

Երկրի քնակիչները. — Գրեթէ 1 միլիառ 500 միլիոն բնակիչ կայ երկրի վրայ: Ամէն տարի մեռնողներու թիւն է 31,033,033, 3,064 լեզու և 1000է աւելի կրօնք կայ: Այրերու և կիներու թիւը գրեթէ հաւասար է. կեանքին միջին թիւն է երեսունեւերեք: Մարդոց բաւորողը կը մեռնի դեռ 15 տարեկանը չՊեւակոխած: 1000 մարդոցմէ 1ը միայն 100 տարեկան կ'ըլլայ, 100ին 6ը միայն 65 տարեկան կ'ապրի, և 500 մարդոցմէ 1 հոգի միայն 80 ֆօտաններու կամ ձմեռներ, ինչպէս որ կը հաճիք, ողջունելու գերագոյն երջանկուժիւնը կ'ունենայ. ըստ որում տարին 33,033,033 մարդ կ'մեռնի, ուրեմն 1 օրուան մէջ կը մեռնին 91,874 հոգի, ժամը՝ 3,730 հոգի, 60 հոգի վայրկեանը, և մէկ հոգի երկվայրկեանը:

Երկրագնտիս կրօնական վիճակագիրը գոր պատրաստած է Շտուտկարտի արքայական պաշտօնատան Տնօրէն շէն Յէլլէր. հրատարակուեցաւ անցեալ օրս ըստ այդ վիճակագրին երկրագնտիս բնակչած թիւն է 1,544,510,000,

Ատոնց 534,940,000 քրիստոնեայ, 175,290,000 մահմետական, 10,860,000 հրեայ, և 823,000 ուրիշ դաւանութիւններու պատկանողներ: 300 միլիոն կոմֆիլիոսի, 214 միլիոն Պրահայի և 121 միլիոն Պաւտայի կը հաւատան:

Աշխարհի վրայ իրեկց բիւր. — Վերջին վիճակագրի մը նայելով ի սիւրս աշխարհի տարածուած իրեկց թիւն հետեւեալն է.

5,700,000	Ռուսիոյ
1,866,837	Աւստրիոյ-Հունգարիոյ
1,045,855	Միացեալ-Նահանգաց
567,884	Գերմանիոյ
350,000	Թուրքիոյ
269,015	Ռումանիոյ
97,924	Հոլանտայի
80,000	Ֆրանսայի
120,000	Հապէշիստանի
150,000	Մարոքի
50,000	Իտալիոյ
23,000	Երուսաղէմի մէջ
10,320,515	Համագումարի

Ոսկին. — Աշխարհի մէջ յարատեւ կերպոսկիին աւելնալը տնտեսական շատ կարեւոր իրողութիւն մ'է ժողովուրդներու միջազգայն յարաբերութեանց, և ինչպէս վերջերս տեսնուեցաւ, անոնց բաղաբական կեանքին համար. Ասկ 20 տարի առաջ, 5—6 հարիւր միլիոնէ անդի չէր անցնէր ոսկիին տարեկան արտադրութիւնը

Անկէց ի վեր, սկսաւ աւելնալ, նախ և առաջ յամր կերպով, յետոյ աւելի արագ, մինչև 1899, ուր հասաւ իր արտադրութեանց գերագոյն կէտին, 1592 միլիոնի. եթէ պատերազմին հետեւանօք Հարաւ Ափրիկէի մէջ թիչ մը դանդաղեցաւ ոսկիհանութիւնը, բայց աշխարհի միւս մասերուն մէջ չդադրեցաւ աճելէ և այնպէս կը զուշակուի որ եթէ Թրանսվալի մէջ հանքային աշխատութիւնը սկսին, 1899ին գոյացած արդէն իսկ բարձր թիւն այս տարուան վերջը պիտի անցնի: 1899ի արտադրութեան մէջ կան Աւստրալիա՝ 444 միլիոն, Միացեալ Նահանգք՝ 419 միլիոն, Ափրիկէ՝ 414 միլիոն, Ռուսական կայսրութիւն՝ 121 միլիոն, Քանադա՝ 101 միլիոն, Մեքսիկա, Բրիտանական Հնդկաստան՝ 101 միլիոնէ պակաս: Կ'ըսուի թէ այս վերջին տարիներու գերարտադրութիւնը վերագրելի է Թրանսվալի ոսկիհանքերու գիւտին, Անշուշտ այս գիւտը նպաստեց, և 1899ին 350 միլիոնի արժողութեամբ ոսկի հանուեցաւ այդ հանքերէն, բայց բոլոր ոսկեքեր երկիրներն ալ առ հասարակ 19րդ դարու վերջերն սկսան ահագին քանակութեամբ աւելի ոսկի արտադրել, որովհետեւ ամէն կողմէ, ոսկիի նոր դաշտեր գտնուեցան: Արեւմտեան Աւստրալիա որ 1888ին 300,000 ֆր.ի ոսկի կուտար, 11 տարի վերջ տուաւ 156 միլիոն: Նոյն միջոցին Միացեալ Նահանգաց մէջ Քոլորադո 19 միլիոնէն կ'ելլէր 134 միլիոնի, Ալաբա՝ 4էն 23ի, Տարոտա՝ 13էն 34ի, Ի Քանադա՝ կը բացուէր Քլոնտայքը որ 1900ին 115 միլիոն կ'արտադրէր:

Միացեալ Նահանգները միջին հաշուով տարին 6120 միլիոն նամակ կը խրկեն և կ'ընդունին, Գերմանիա 4603 միլիոն նամակ, Մեծն Բրիտանիա 3440 » » Գաղղիա 2452 » »

Հինգ ծանօթ ցամաքներէն  
 Ամերիկա 6877 միլ. նմկ. կ'ընդունի և կը խրկէ  
 Եւրոպա 15462 » » » »  
 Ասիա 1067 » » » »  
 (որոյ 547 միլիոնը միայն ձարոն)  
 Ովկիանեա 378 միլ. նամակ կ'ընդունի և կը խրկէ  
 (որոյ 370 միլիոնը Աւստրալիա)  
 Ափրիկէ 125 միլ. նամակ կ'ընդունի և կը խրկէ  
 Մինչ փոքրիկ Տանիմարքան 160 միլիոն նամակ կ'ընդունի և կը խրկէ:

Բրիտանական Աստուածաշուէյի  
 Ընկերութիւնը 1804ին հիմնուած է.  
 100 տարուան մէջ 300 միլիոն ֆր.  
 ծախք է ըրած: Ս. Գիրք 350 լե-  
 գուններու թարգմանած է. 180 մի-  
 լիոն Ս. Գիրք և մասեր տարածած  
 է. ունի 8000 գրածախ-քարոզիչ:





## Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Գ Ի Ս Ս Ա Կ Ի Ս Ա Ր Զ Ս Գ Ա Ն Բ

«Թէև մեռաւ բայց դեռ կը խօսի»  
Ս. ԳՐԻԳ



ՎԵՐ. Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ  
(ԳԻՍՍԱԿ)

Ծնած 1858 — Մեռած 1902

Գիտակ մեծ միտք էր. մե՛ծ միտք մը եւ հեղինակ մը կորսնցուցինք : Մեծ տաղանդի եւ հանճարի տէր էր. մեծ խորհող եւ գրող մ'էր. մեծ փիլիսոփայ մը եւ սրբազան բանաստեղծ մ'էր. մե՛ծ առտուածաբան մէր յայտնարան Յովհաննէս Առաքեալի նման Բայց աւա՛ղ , այժմ ոչ եւս է . Գիտակին կեանքը՝ լոյս մ'է այժմ , որ երբէք պիտի չմարի . ան իր ետին կը ձգէ արդարութեան , ճշմարտութեան եւ սրբութեան ճանապարհ մը : «Մարդեր կան որ նոր ծնած ատեննին կը մեռնին նորէն , մարդեր ալ կան որ նոր մեռած ատեննին կը ծնին նորէն.» այսպէս կ'ըսէր Գիտակ եւ ինք այս վերջիններէն էր . անոր

բուն կեանքը նոր կ'սկսի թէ իրեն  
 եւ թէ իրեններուն համար . այո՛,  
 Գիտակ կ'ապրի եւ միշտ պիտի ապրի  
 նա առաջ լեզուովը կը խօսէր , այսօր  
 կը լռէ : այն պերճախօս եւ մեղրահոս  
 լեզուն , որպէս զի ասկէց ետքը իր  
 բարոյական եւ կենդանի կեանքովը  
 խօսի յաւէտ :

ԿՂԵՄԷՍ Մ. ՏԱՏԵՐՍԱԷ



### ԳԻՍՄԱԿ ԵՒ ԻՐ ԳՐԻՁԸ


Եկ իմ գրիչ , իմ սրտակից մըտերիմ,  
 Ցաւերուս մէջ , հի . բեզ միայն կը փարիմ .  
 Եկուր , բաշուինք բեզ հետ մեր հին , խեղճ խուցիկ ,  
 Արցունք Սափենք , ըսենք ողբեր սառուցիկ  
 Դու ալ ինձ պէս փրժած ճիւղն ես ծառի մը ,  
 Կորուսեր ես գեղ ձայնդ , ինչպէս որ ես իմը .  
 Սուր դանակ մը զիս ալ ձգեց զոպահար ,  
 Երկուքս ալ այդ վտիտ , չոր փայտ ենք նիհար :  
 Մատներս զարկած չեն ոչ քնար , ոչ դաշնակ ,  
 Նըւագ , սրինգ , ամէն ինչ դու ես մինակ .  
 Մայրովդ սրտիս կը տաղեմ նուրբ թելերուն ,  
 Եւ դուրս կու գան եղանակներ ոլորուն :  
 Ես չեմ բունք փունջ մը այնքան հաճոյրով ,  
 Որքան զգրիչս իմ զոյգողուն աչ ձեռքով .  
 Ոսկի , արծաթ չեմ ծրարեր , չեմ պահեր ,  
 Դրչիս ծնունդ միայն խոկերն ու խոհեր ,

Չորս կը փաթթեմ թուղթերու մէջ սպիտակ ,  
 Ահա բոլոր իմ անգին գանձ ու վաստակ :  
 Երբ կը փակուիմ լռիկ սենեակն իմ ներքին ,  
 Եւ կու տամ կուրծքս սեղանին չոր տախտակին ,  
 Իսկոյն կ'առնեմ զրիչս նրբին եւ սիրուն ,  
 Ու կը յանձնեմ վրդով՝ սրտիս հովերուն ,  
 Անդ կը բացուի աչքիս առջև տիեզերք  
 Որ հորիզոն չունի , ոչ ծայր , ոչ եզերք .  
 Ու ես թողած իմ մարմնեղէն սև անօթ ,  
 Կը վերանամ սիրած տեղերս անձանօթ .  
 Արշալոյսի ծոցէն կ'ելլեմ ու ետքը  
 Հանգիստ կառնեմ վերջալոյսի բոց զիրկը :  
 Կայծեր կառնեմ ես մշտավառ լոյսերէն ,  
 Որք սպառու՞մ չեն տար թէև միշտ կ'այրեն .  
 Բարեկամներս կ'ըսեն ինձ թէ «Չես զուարթ ,  
 Սրբէ արցունքդ , մ'ըլլար այդքան տխուր մարդ» :  
 Աշխարհի մէջ իմ բաժին ցաւ է ինկեր ,  
 Ալ մինակ չեմ , զրիչս ինձ միշտ է ընկեր :  
 Թող ախտեր բիւր պատեն իմ անձս ցաւոց  
 վարձ ,  
 Անկողնոյս մէջ պառկիմ հիւանդ ու անշարժ ,  
 Բոլոր մարմինս անդամալոյծ թող լինի ,  
 Այլ Աստուած իմ , աչ ձեռքս պահէ կենդանի ,  
 Եթէ կամիս , առ լեզուս ալ , բայց ո՞վ Տէր ,  
 Ո՛հ , կ'աղաչեմ զիս իմ զրչէս մի զատեր :  
 Եւ երբ մեկնիմ այս տառապեալ աշխարհէն ,  
 ձերմակ պատանք ու սեւ հողեր զիս ծածկեն ,  
 Եկ ո՞վ գրիչս , ինձ պէս մաշած ընկեր իմ ,  
 Դագաղիս մէջ եկուր , դարձեալ բեզ փարիմ ,  
 Թող բեզ դնեն մատներուս մէջ մոմեղէն ,  
 Երկու չորցած ճիւղեր մէկտեղ թող թաղեն :

## ՄՐՑԱՆԱԿԱԻՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

Հետեւեալ խնդիրներուն տասն ալ ճշգիւ լուծողը կ'ընդունի Մեկնութիւն Նոր Կտակարանի, 2221 էջ, լաթակագմ: Հինգէն մինչեւ ինն հատ ճշգիւ լուծողը կ'ընդունի Մեկնութիւն Զորից Աւետարանաց, 924 էջ, լաթակագմ: Մէկէն մինչեւ չորս հատ ճշգիւ լուծողը կ'ընդունի Սուրբ Գրոց Բառարան, պատկերազարդ, 635 էջ, լաթակագմ: Մէկէ աւելի ճշգիւ լուծողներուն անուանց վրայ ԳՈՒԷ՛ ձգուելով Մըրցանակին որու տրուիլը կ'որոշուի: Պայմանաւճամ մէկ Մարտ, Հին տոմար, 1905:


Ա.



Ահա 12 հատ լուցկիէ բաղկացեալ մահարձան մը. այս 12 լուցկիներէն միայն հինգ լուցկիի զիրքը, տեղը փոխէ եւ նորէն 12 լուցկիէ բաղկացեալ երեք հատ հաւասարակագմ քառակուսիներ ձեւացուր:

Բ.

1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 թուանշանները այս քառակուսիներուն մէջ այնպէս շարէ որ վերէն վար, ձախէն աջ եւ անկիւնէ անկիւն գումարուելով միևնոյն գումար արտադրեն: Միայն մէկ թուանշան զնելու է իւրաքանչիւր քառակուսիի մէջ:



Գ.

1—6 թուանշաններուն տեղ ա'յնպիսի տառեր զիր որ վերէն վար լեռան մը անունը կարգաս. ապա տուր 2ին երկու ընկեր տառեր եւ



2.

Կը տեսնենք այս 9 հատ քառակուսիները, եկո՛ւր, բեզի հետ խաղանք. մէկ քառակուսիին մէջ ես դրած եմ 1 Յոռանշան. օ՛ն, միւս 8 հատ պարագ քառակուսիներուն մէջ ղու շիր 9, 17, 25, 33, 41, 49, 57 եւ 65 Յոռանշանները, սակայն ա՛յնպէս, որ վերէն վար, ձախէ՛ն աչ եւ անկիւնէ անկիւն զուճարած ատենդ մինևոյն զուճարն ունենաս:

1		

է.

Ա՛ն երեք հատ թիւ. առաջինը բազմապատկէ 18ով, երկրորդը 99ով եւ երրորդը 100ով եւ երեք արտադրեալներուն համագումարը պիտի ըլլայ 1900. Ո՞րոնք են երեք թիւերը:

Ը.

Երկու թիւ ունինք որոց տարբերութիւնը 9է, մեծ թիւը բազմապատկէ 18ով ու փոքրը

19ով ու արտադրեալներուն զուճարը 1901 կ'ըլլայ: Ի՞նչ են երկու թիւերը:

Թ.

Մարդս ե՞րբ կը փափաքի առանձին ըլլալ:

Ժ.

Ո՞վ կուրսխանայ երբ հաց չունի:

•  
•  
•

Պատասխանները պէտք է գրել եւ որոշ կերպով ստորագրել, տալ հասցէն ու վճարեալ նամակով խրկել տո.

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Պրուսա

Յ. Գ. — Երբ պատասխան կ'ուզէք պէտք է մէկ դահեկանի նամակաղբորջմ խրկել:

ՆՈՅՆ




ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑԻ

1904 թ Լուսկիի խնդիրներուն լուծումը


Ա.




Բ.




Գ.



Դ.




Ե.




Ծայրերու լուսկիներէն մին տեղափոխելով

2.


1




2



2.




2.



Թ.



Ժ.



Սոյն 10 խնդիրներու լուծումներն ոչ որ ամբողջովին յաջողած է գտնել ուստի բուէն երեք հոգի գատած է. հետեւապէս տարեկան Բիւրակն ընդունեց Կարապետ Ա Կիւլեան Չագմագցի, Լուսինի, Եարամական Աւետարեր ընդունեց Վահրի, Եարամական Աւետարեր ընդունեց Վահրի, Ճոխայեան Եփրատ Քոլէճ Խարրերդ, Տղայոց Աւետարեր ընդունեց Պերճ Աւետարեան, աշակերտ Մխիթարեանց վարժարանի Իսանկայի, Բերա. Ստացած ենք 161 նամակներ 79 տարրեր տեղերէ:



ԱՐՄԵՆԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ Ի ՊՐՈՒՍԱ


Բացեալ 1/14 Յուլիս 1875 եւ անկէ ի վեր անընդհատ շարունակուած միմիայն յօժարակամ նուէրներով, Առանց դաւանանքի խտրութեան կ'ընդունուին Հայ որր եւ կարօտ աղջիկներ եւ կը վայելեն ամէն ինամ, կրթութիւն եւ դաստիարակութիւն: Կր խնդրօր յիշտ յիշել սոյն հաստատութիւն նպատակներով եւ նուէրներով, զի շուրի ո'եւ է հասոյթ իր պատասպարեալներուն ծախուցը համար: Բազմաթիւ յանձնարարութիւններէն կը բոււականանանք լոկ ստորեւ գրուածը ընթերցողած ուշադրութեան յանձնարարել:

Նպատակներ, ո'րքան ալ փոքր ըլլան, կ'ընդունի ջերմագին չնորհակալութեամբ:

Գ. ՊԱՂՏԱՍԱՐՅԱՆ

Պրուսա

Հիմնադիր-Տնօրէն



ՊՐՈՒՍԱԻ Կ ՏՈՂՊԱՆ ՂՐԱՅԻՆՆԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԿՆՏԱԿԱՆ ԿՆՏԱԿԱՆ

Հանգուցեալ Բարձրապատի Տոքք. Ստեփան քաշա Ասլանեան, որ երկու անգամ, բնկերակցութեամբ նշանաւոր անձնաւորութեանց, պատուած է Հաստատութիւնս իւր այցելութեամբ, և որո թելադրութեամբ կարելոք փոփոխութիւններ ըրինք շէնքին մի քանի մասերուն մեջ. պատասպարելոց առողջութեան համար, հետեւեալ տողերը գրած էր մեզ. — «Ներեցէք որ նախ շնորհակալութեան իրաւունքը զլանամ Ձեզ, զի այն մերն է: Ի՞նչ, պատուական ամուլք Պաղտասարեան, ձեր սովորական բարեգործութեանց մակարդակն ա՛յն աստիճան բարձրացուցած էք, որ ամէն շնորհապարտ զգացմունք մեզ կը պատկանի զեղուլ ձեր առջին, և ձեզ հետեան այն չնաշխարհիկ անձանց առջին. որ իրենց մերձակայից և ազգակցաց կարօտութիւնները լցունել չբաւականանալով, մտադիր կը տարածեն իրենց բարեբարութիւնները հեռաւոր համայնքներու վրայ, ինչպէս մերինն:

« . . . Օրհնեալ ըլլան ա՛յն սրտերն որ կը բղխեն այնպիսի բարիք, օրհնեալ նաև ա՛յն ձեռքերն որ կ'արդիւնաւորեն զանոնք:

« Ասունք են այն զգացմունք և բարեմաղբութիւնք զոր ի տես ձեր որբախնամ հաստատութեան մեր տպաւորութիւնները ներշնչեցին մեզ, և կը հաւատանմ ձեզ թէ Ազգն համօրէն զգայակից է մեզ և բարեմաղբու ձեր գործոյն յաջողութեան և օր աւուր գարգացման համար, համոզուած լինելով թէ

զուք, կորզելով ի կորստենէ իւր աղքատիկ և անտէրունջ զաւակները՝ կը խնամէք զանոնք: կը սնուցանէք ու կը դաստիարակէք, ապագային պարկեշտ և ազնիւ Հայեր պատրաստելու սուրբ նպատակաւ:

« Յարատևեցէք ուրեմն, Պատուարժան Տիար և Տիկին այս արժանաւոր շաղիկ մեջ և համարձեկապէս բաղխեցէք բարեբարաց դռները, նպաստ և օգնութիւն հայցելու համար ձեր մարդասիրական գործին, որ Աստուծոյ գործն է և ժամանակին գործերուն ամենէն սուրբն ու օգտակարագոյնը »:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տոմարական գիտելիք . . . . .	3
Օրացոյց . . . . .	17
Օսմանեան կայսրութիւն . . . . .	93
Օսմանեան թղթատարութիւն . . . . .	100
Հեռագրական կանոնագիր . . . . .	113
Հոգեւոր իշխանութիւնք . . . . .	116

ՅԱԻԵԼՈՒԱՆ

Բարոյավէպ . . . . .	131
---------------------	-----

Առողջական

Առողջապահական քերական. —Ա-	
առողջարար է . . . . .	139
Ապառողջ է . . . . .	142
Ակռալի վրձինները . . . . .	145

Ընտանեկան

Առտնին հիւանդապահութիւն . . . . .	154
Անխոհեմութեան արդիւնքը . . . . .	163
Ճերմակ ու սև վրտերը . . . . .	167
Ճերմակ հացի առաւելութիւնը սև հացին վրայ . . . . .	169
Հիւանդներու համար . . . . .	171

Հարցարան . . . . .	176
--------------------	-----

**Գործի մարդոց բաժին**

Հայր Արքանամի համակը . . . . 190

**Բժեկական**

Երկ սրակեցութեան գուշակութիւնք . 200

Երկու սրտով մարդիկ . . . . . 202

Մագի դեղերը . . . . . 202

Երևելի անձանց ուղեղը . . . . . 204

Ափրիկէի քնախոր . . . . . 205

Հրաշալի սնունդ . . . . . 207

**Գիտական . . . . . 220**

Հազարհինգհարիւրամեակ Հայ Ալ-  
փարետայ գիտին . . . . . 240

Պրոսայի Արեւելեան Որբանոցը . . . 244

**Պատմական . . . . . 248**

**Նրկագործական . . . . . 255**

Հրատարակութիւնք Պաղտասարեանի 282


**Ջուարեալիք . . . . . 283**

**Վիճակագրական . . . . . 290**

**Կենսագրական . . . . . 299**

**Մրցանակաւոր խնդիրներ . . . . 302**





20h

6746

2013

<< Ազգային գրադարան



NL0031986

